



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



2728

2729

2730

2731

2732

302

303

85

---

do-12




2017



ՇԱԴՈՊՐԻԱՆՈՒ

Ա Դ Ա Լ Ա



ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՆԱԽԿԻՆ ԱԾԱԿԵՐՅԱՑ ՈՄԱՆՑ

Ճեմարան վարժարանի Իսկիհտարու



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. Կ. ՊԱՐՈՆԵԱՆ

1880

THE UNIVERSITY OF CHICAGO

W. P. W. P. W. P. W. P.

CHICAGO, ILL.

UNIVERSITY OF CHICAGO PRESS

1892

W. P. W. P.

UNIVERSITY OF CHICAGO PRESS

1892

ՀԱԳՈՊՐԻՅՆՈՒ

Ա Դ Ա Լ Ա

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ա. ՊԱՐՈՆԵԱՆ


Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Գ. Ա. ԱՎԱԲՈՒ. Պատրիարքարան փողոց

Հայ

ՇԱԴՈՊՐԻՍԱՆՈՒ՝

Ա Գ Ա Լ Ա



ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՆԱԽԿԻՆ ԱԾԱԿԵՐՏԱՑ ՈՄԱՆՑ

Ճեմարան վարժարանի Ինսկիտարու.



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. Կ. Ա. ՊԱՐՈՆԵՍԱՆ

1880

UNIVERSITY OF CHICAGO

W. P. W. P. W.

UNIVERSITY OF CHICAGO

UNIVERSITY OF CHICAGO

UNIVERSITY OF CHICAGO

7790.574

UNIVERSITY OF CHICAGO

UNIVERSITY OF CHICAGO

UNIVERSITY OF CHICAGO

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

A. DEVEJIAN LIBRARY

NEW YORK

Ա. ՏԵՎԷՋԻԱՆԻ ԳՐԱՏՈՒՆ

Անդատին 'ի սկզբնաբոյս տիոց' հարեալ 'ի ոէր հայրենի գարութեան եւ յուսումնորին փոքր 'ի շատէ պարապեալ՝ զՇաղոպրիանու վէպս յԱԴԱԼԱ նորոգ թարգմանութեամբ արձանացուցանեմք 'ի տիպ , զոր 'ի վաստակս գրաւոր լեզուի բաստ ի մեզ եւ յեղուլ երբեմն ի մերս բարբառ՝ վարժեալ առ ոտս Արժ. Եղիշէ Վ. Գուրեանի՝ արժանաւոր ուսուցչին մերոյ : Այլ զի մի անկցի 'ի մոռացօնս երկս մեր այս թէպէտ դուզնաքեայ իմն գոլով, վասն որոյ իղձ եղեւ մեզ գոնեա զհետ հետոց մուսայից ընթանալ՝ անշուշտ 'ի քայլ հեփեստեան , եւ ոչ ոք 'ի բանասիրաց՝ ակն ունիւք՝ զի արհամարհիցէ՝ զմեզ եթէ զկաղոտն Սպարտացւոյն յանձին բերեմք զճիգն եւ զաշխոյժ միջամուխ լինել յասպարէզ գրաւորական կրկիսի , ոյր թէպէտ ելք անսպառուած պարտասեցուցանեն զաչս , այլ ոչ ինչ խափան լիցի նոցին՝ զօշոտել գեղով մեծութեան եւ շնորհաց բանասիրականին :

Զառաջիկայ վիպացս չմնայ ինչ խօսել մեզ , որ է իսկ արդարեւ զարդ Գալլիական մատենագրութեան . փայլին ի սմա աշխոյժք քերթողականք , կորով յանկուցիչ , եւ վայելչագեղ նկարագիրք՝ ընդ որս 'ի գութ խանդաղատի սիրտ , եւ մատենագիրս այն-

պէս ճշգրտատիպ յանդիման կացուցանէ զանցս ի-  
րացն, զի անմարթ է 'ի լուր նոցին լինել անզգայ եւ  
ժոյժ ունել արտասուաց : Ի մատենկանս՝ ըստ ամերիկե-  
ան ըուսոյ բարուց, (զի ընդ երկար եղեւ պանդխտու-  
թիւն մատենագրիս յԱմերիկա), բազում ուրեք ածէ  
'ի ներքս զսովորոյթս նոցին, եւ զօրութեամբ հանճա-  
րոյն կրթէ զմիտս եւ զսիրտ օրինակաւ լաւութեան,  
մանաւանդ 'ի վերջկոյս վիպիս, ուր կրօնք մտանեն 'ի  
պայքար ընդ մուկէին կիրս տարիանաց, յաղթողական  
արիութեամբն գեր 'ի վերոյ երեւեալ :

Եթէ ըստ ակնկալեաց մերոց յաջողեսցէ մեզ զը-  
տանել խրախոյս, 'ի մտի ունիմք ածել 'ի լոյս զան-  
տիպ գործս վաղամեռիկ քերթողին Պետրոս Դուր-  
եանի՝ ցանկալւոյն այժմեան մերազնեայ բանասիրաց :


Հուսկ ապա պարտ անձին համարիմք շնորհ ու-  
նել՝ որոց առատածեռն նպաստիւք իւրեանց ետուն  
մեզ խրախոյս :

Նախկին աշակերտք  
ձեմարան երկս. Վարժարանի

25 Օգոստ. 1880



- Ս. Քափամաճեան
- Բ. Էքսէրճեան
- Ա. Աստուածատուրեան
- Յ. Քազազեան





## ՆԱԽԵՐԳԱՆՔ

Գալլիա տիրապետէր երբեմն ընդ հիւսիսայինն Ամերիկա ընդարձակագոյն ինքնակալութեան՝ որ ձըգեալ տարածանէր 'ի Լաբրադորայ մինչ ցՓլորիտեանս, եւ յԱտլանդական օփանց մինչեւ 'ի ներքսագոյն լիճս բարձուն Քանատայ :

Գեաք քառեակ մեծամեծք անդստին 'ի նոյն լեւրանց բղխեալք անջրպետէին զանհուն զաւառսն : Աէն-Լորան՝ որ երթայ կորնչի յարեւելս կոյս 'ի համանուն ծոցին . գեան Արեւմտեան՝ որ թափի 'ի ծովս անձանօթս . Պուրպոնեանն՝ որ գահավէժ ընթանայ 'ի հարաւոյ 'ի հիւսիս 'ի ծովախորշն՝ Հուտսոնի . եւ Միսիսիփի՝ որ 'ի հակառակ կուսէ սահեալ անկանի 'ի ծոցն Մեքսիկայ, եւ անցեալ ընդ ասպարէզն իբր քսան հազար՝ թանայ երկիր բազմազօւարճ զոր բընակիչք Միացելոց-Նահանգաց կոչեն եղեմ Նորատունկ, եւ Գալլիացիք թողին 'ի նմա զքաղցր անուն

Լուսիգլիանա : Բազում այլ գետք՝ հարկատուք Միսիսիփեայ՝ Միսուրի , Իլինուա , Ականզա , Օհիոյ , Վաւաչ , եւ Դընաս պարարտացուցանեն զայն 'ի սիկ եւ յաղթաջուր գործեն ալեօք իւրեանց : Ի յորդել գետոցն 'ի հեղեղասաստ ուղիսից ձմերայնոյ , եւ յամպահարել մրրկաց զկողս մայրեաց , ծառք արմատախիլ տապալեալք յաղբերակունս անդր ժողովին : Ընդ հուպ ապա ամրապնդին տղմաշաղախ , եւ լիանք խաղապատին զնոքօք . եւ տունկք աստ անդ աճեցեալք ուր ուրեմն հաստատեն զբեկորսն՝ ոյց ապա վարեալ 'ի փրփրադէզ կոհակաց՝ իջանեն 'ի Միսիսիփի , եւ թափով բռնութեան հոսանաց նորա մղեալ 'ի ծոցն Մեքսիկեան՝ խրին անդ ընդ աւաղուտս . եւ այսպէս յաճախեն բերանք գետոյն՝ որ մերթ մռնչաձայն թաւալեալ ընդ լերինս ծաւալէ զյորդահոս հեղեղսն շուրջ զսիւնակարդեալ անտառօք եւ զբրգամբք հնդիկ գերեզմանաց՝ Նիլոս անապատաց ապաքէն գոլով :

Բայց շնորհք յաճախ աջակից ընթանան ընդ մեծ վայելչութիւն տեսարանաց՝ զորս ընծայէ բնութիւն : Քանզի մինչդեռ 'ի միջին յորձանացն վարեալ ձգին դիակունք շոճից եւ մայրեաց , երկուստեք ընդ երկայնութիւն ափանցն՝ 'ի ծուփս ալեաց է տեսանել կղզիս ծածանեալս 'ի պիստիայց եւ 'ի նունուֆարից՝ որոց վարդք դեղնագոյնք ամբառնան ընդ օդս հանգոյն փոքրիկ վրանաց : Օձք կանաչախայտք , ճայք կապոյտերանգք , հրաթեւք վարդագոյնք եւ տիտեռունք մատաղք անցանեն ընդ գետն 'ի չու ելեալք 'ի նաւս ծաղկեայս , եւ գաղթականքս այսոքիկ պարդեալ հողմոց զոսկեփայլ առագաստս եւ զքնով անկ-

եալք երթան մտանել յամայի խորչ մի գետոյն :

Կրկին ավուռնք Միսիսիփեայ ընծայեն տեսիլ նորանչան . Յափն արեւմտեան մարդագետինք տարածանին 'ի կշիռ ական , որոց ակիք գալարազուարճք 'ի բացէ թուին ամբառնալ ընդ կապոյտն երկնից ուր եւ ծածկին յաչաց : Ի վայրս յայտոսիկ յանեզրականս յակն անկանին յաճախ թափառական երամակք երկից կամ չորից հազարաց վայրի գոմչոց : Մերթ եզն զառամեալ հերձանէ զալիս 'ի լիւղ՝ գալ հանգչել 'ի մէջ բարձրադիտակ խոտոց 'ի կղզւոջ ուրեք Միսիսիփեայ : Ի տեսիլ ճակատուն երկոքումք մահկօք պճնելոյ եւ ալեւոր սկախառն մօրուաց նորա թուի լինել աստուած գետոյն , որ արկանէ հայեցուած իմն հաճ եւ գոհ ընդ մեծութիւն ալեացն եւ ընդ վայրի առատութիւն ավանցս այսոցիկ :

Այս տեսարան է յեղերն արեւմտից , այլ փոփոխի 'ի հանդիպակաց ավանն եւ հիանալի իմն ընդդիմապատկեր յօրինէ ընդ առաջնոյն : Կախ զգնացիւք ջուրց՝ խոկեալք ընդ ավափայս եւ ընդ լերինս , եւ ցիր եւ ցանք 'ի հովիտս ծառք ազգի ազգիք երվներանգք եւ անուշահոտք խառն ընդ միմեանս աճեն երկնուղէչք եւ ելանեն յայնքան բարձունս՝ որ ըզհայեցուածս աչաց պարտասեցուցանեն : Որթատունկք վայրիք , բիկնոնայք եւ դառնադմիք սլատատին զըստորոտովք ծառոցն , եւ վերելակեալ զստեղամք նոցին՝ սողոսկին 'ի ծայրս կողերցն , ընդոտ 'ի հացւոյն 'ի կակաջի եւ անտի յալկէա՝ յօրինելով անձաւս , զբմբեթարդս եւ սրահս կամարակապս : Յաճախ թափառականք ծառոց 'ի ծառս սլատաղիճքս այսոքիկ ան-

դանեն ընդ բազուկս գետոյն , արկանելով կամուրջս  
ծաղկեայս : Ի ծոցոյ տնկախիտ թփոցս ամբառնայ  
մակնուլիս զանշարժ եւ զկոնածեւ դիտակ իւր , եւ  
գեր ՚ի վերոյ երեւեալ սպիտակ եւ լայնաթերթ վար-  
դիւքն՝ իշխեցող է համօրէն անտառին , եւ չիք նմա  
ա՛յլ ախոյեան բայց արմաւենին միայն՝ որ թեթեւա-  
շարժ տատանէ առնթեր նորա զհովահարսն զալա-  
րիս :

Հոյք խուռներամ անասնոց ՚ի ձեռն Արարչին  
յայտսիկ եղեալք յառանձնոցս՝ սիռեն հրապոյրս եւ  
կենդանութիւն : Ի ծայրէ ծառուղեացն նշմարին արջք  
արբեցեալք յողկոյզս խաղողոյ՝ որ դեղեւենն ՚ի գնացս  
ընդ կողերս նշդարենեաց , գարիպուք լողանան յալիս  
լճի , սկիւռք սեւաթոյրք խաղան ընդ թանճրախիտ  
սաղարթիւք , հաւք-ծաղրասէրք եւ Աիրգինեան ա-  
ղաւնիք՝ ՚ի չափ մեծութեան ճնճղկաց՝ իջանեն ՚ի-  
մարզս կարմրերանգս յեւակաց , պապկայք կանա-  
չագեղք դեղնագլուխք , կաչաղակք ծիրանեգոյնք ,  
ճնճղուկք հրափետուրք ՚ի հիւ եկեալ մագլեն մինչեւ  
՚ի կատարս նոճեաց , փայլեն տրոքիլոսք ՚ի յասմիկս  
Փլորխտեանց , եւ օձք-հաւորսք կախին ՚ի սոյլ զբար-  
ձանց անտառին հանգոյն լիանաց ընդ օդս շարժեալ :

Թէպէտ ամենայն ինչ ՚ի լութեան կայ եւ յան-  
դորրու յանտառախիտս՝ որ յայնկոյս գետոյն , այլ  
աստ ընդ հակառակն բնաւք ՚ի յոյզս կան եւ ՚ի շշուռջ :

Հարուածք կտցի ընդգէմ բնոյ կաղնեաց , չրչիւնք  
ընթացից անասնոց՝ որ ճարակեն կամ լեսուն ընդ  
ատամամբ զկորիզս պողոց . աղմուկք ալեաց , նուաղ  
հեծեծմունք եւ խուլ բառաչք եւ քաղցրանուազ մըն-

չիւնք ընուն զանապատսն գողտր եւ վայրենի դաշ-  
նակաւորութեամբ : Այլ յոգեւորել քաղցրասիւք հող-  
մոյ զամայութիւն վայրացս , տատանելով զյարաչարժ  
մարմինսն , շփոթելով ընդ իրեարս զկոյտս սպիտակս  
կապուտակս կանաչագեղս եւ վարդագոյնս , խառ-  
նելով 'ի մի զամենայն երանդս եւ զհամօրէն մրմունս-  
ջըս , այնպիսի իմն յայնժամ ելանէ շշունջ 'ի խորոց  
անտառաց , այնպիսի իրք յանդիման լինին աչաց , զի  
'ի զուր փորձեցից ածել 'ի նկար՝ որոց չիցէ միան-  
գամ ձեւ առեալ երբէք ընդ նախարոյս դաշտս բը-  
նութեան :

Յորմէ հետէ գտաւ Միսիսիփի 'ի ձեռն հօր Մար-  
կեթայ եւ չարաբաստկին Լասալի , նախնի Գալլիա-  
ցիք՝ որ բնակեցին 'ի Պիլոքս եւ 'ի Նորն-Օրլէան ,  
կռեցին դաշինս ընդ Նաչէզս , ազգ Հնդիկ որոց ա-  
հաւոր էր զօրութիւն 'ի գաւառսն յայնոսիկ : Կագք  
եւ կռիւք եւ նախանձ թաթաւեցին ապա յարիւն զեր-  
կիրն ասպնջական : Ի մէջ վայրենեացս այսոցիկ էր ծե-  
րունի ոմն Շագդաս (\*) անուն , որ տիովքն եւ իմաս-  
տութեամբ եւ գիտութեամբ յիրս կենցաղոյս՝ նահա-  
պետ էր եւ Սէր անապատաց : Իբրեւ զայս 'ի մարդ-  
կանէ թշուառութեամբ ստացեալ էր նորա զառաքի-  
նութիւն : Ոչ միայն անտառք Նորոյ-Աշխարհին լցան  
յաղեալից նորա , այլ եւ ամ ձգեաց զայնոսիկ մինչեւ  
'ի ծովափունս Գալլիոյ : Ի դիպահոջ կալեալ 'ի ցոկա-  
նաւս Մասիլլայ՝ անագորոյն իմն անիրաւութեամբ ,  
եւ ապա հանեալ յազատութիւն՝ յանդիման եղեալ էր

(\*) Զայն դաշնակաւոր :

Լուդովիկեայ ԺԳ՝ խօսակից ընդ ականաւոր արս դա-  
րուն լինելով, ականատես տօնական հանդիսից Վէր-  
սայլի, եւ բազմեալ էր նորա 'ի լուր ողբերգութեանց  
Ռասինի, եւ դամբանական ճառից Պոսիւէթայ. հա-  
կիրճ ասել՝ այրն այն նկատեալ էր զընկերութիւնս 'ի  
գազաթնակէտ փառացն :

Ի բազում ամաց հետէ, դարձ արարեալ յերկիրն  
հայրենի վայելէր Շագդաս 'ի հանգստեան. Սակայն  
ծանրազնի վաճառեցին նմա Երկինք զայս շնորհ, զի  
կացին աչք ձերունւոյն : Գուստր մի գեղաձաղիկ ըն-  
կերէր նմա ընդ ըլուրս Միսիսիփեայ, հանգոյն Ան-  
տիգոնեայ՝ որ առաջնորդէր քայլիցն Եղիպոսի 'ի Կի-  
թերոն, կամ որպէս զՄալվինա՝ ամելով զՌսիան ընդ  
քարաժայռս Մորվենայ :

Սիրելի էին նմա Գալլիացիք՝ թէպէտ յերեսաց  
նոցա բազումս էր վշտակրեալ : Յիշէր հանապազ ըզ  
Ֆենելոն՝ որոյ ասպնջական լեալ էր իւր, եւ ցան-  
կալի էր նմա սպաս ծառայութեան մատուցանել հայ-  
րենակցաց առաքինւոյ առնն, եւ եհաս նմա առիթ  
բարեպատեհ : Յամին 1725 Գալլիացի ոմն Ռընէ ա-  
նուն վարեալ 'ի կրից եւ յաղետից՝ եկն 'ի Լուիզիանա,  
էանց ընդ վերկոյս Միսիսիփեայ մինչեւ 'ի Նաչէզս եւ  
խնդրեաց մտանել ընդ զինուորութեամբ աղգին :  
Շագդասայ 'ի հարցփորձ մատուցեալ առ նա՝ ե-  
գիտ զնա անդրդուելի 'ի խորհուրդս իւր եւ ընկա-  
լաւ զնա յորդեգրութիւնս, եւ ետ նմա 'ի հարսն շընդ-  
կուհի զոմն՝ որ կոչէր Գելուդա : Սուղ ինչ ապա յետ  
ամուսնութեանն պատրաստեցան վայրենիք ելանել  
յորս շնջրեաց :

Շագդաս թէպէտ եւ զիրկ 'ի լուսոյ աչաց , այլ խորատու Սաքեմացն (\*) ընտրեցաւ հրամատար գործոյն , զի մեծարոյ էր նա առ տոհմս հնդկականս : Սկիզբն լինին աղօթից եւ պահոց , հմայողք մեկնեն զերազս , կարդան առ թերափս իւրեանց , կիզուն ծխախոսս առ 'ի զոհ , այրեն զլեզուակապս եղջերուաց , 'ի զնին կան ճարճատման նոցին 'ի մէջ բոցոյն՝ զի զկամս ոգւոց գուշակեոցեն : Եւ ուր ուրեմն անկանին յուղի , յետ ճաշակելոյ զչունն նուիրական : Ընդ նոսին էր եւ Ռընէ : Օգնեալք 'ի հոսանաց ջուրց գնան մակոյկք ընդ վերկոյս Միսիսիփեայ եւ մտանեն 'ի խորս Օհիոյ եւ էր աշուն : Լայնին վայելչագեղ անասլատք Գենդուկիայ առաջի պշուցելոց աչաց երիտասարդ Գալլիացոյն : Ի միում գիշերի՝ 'ի շող լուսնակի՝ մինչդեռ ամենեքեան ննջէին 'ի խորս մակուկացն իւրեանց , եւ նաւատորմն հնդիկ պարզեալ զառագաստս 'ի մորթ գազանի , թեթեւ սլանայր 'ի շունչ աջողակ հողմոյ , Ռընէ միայնակ կացեալ ընդ Շագդասայ , խնդրեաց 'ի նմանէ զվէպս արկածից նորա : Ծերունին հաւանեցաւ ընդ այն եւ բաղմեալ ընդ նմա 'ի խելս մակուկին՝ զայս օրինակ խօսել կալաւ եւ ասէ :

(\*) Ծերք կամ խորհրդականք :



## ՈՐՍՈՐԴՔ

Նորանշան ճակատագիր, սիրեցեալդ իմ որդեակ, կցորդէ զմեզ անմեկին • տեսանեմ 'ի քեզ զայր քաղաքակիրթ՝ հատեալ 'ի վայրենութիւն, եւ դու զհակառակն նորին նկատես յանձին իմում, եւ անգիտանամ զի առ իմէ՞ զայս այսպէս արար ընդ իս Ուզին մեծ : Մտեալ երկոցունցս յընդդիմակաց կրկին ծայրից յասպարէզ կենցաղոյս, գաս դու արդ հանգչել 'ի տեղուջ իմում եւ ես 'ի քումդ : Վասն այնորիկ հարկ լիցի մեզ անհանգէտ ամենեկին միմեանց բերել տեսութիւնս զառարկայից : Ո՞վ ի մէնջ արդեօք առաւել շահեցաւ կամ կորոյս ինչ 'ի յեղափոխութենէ պայմանիս • ահա որոց վերահասու գոն Ողիք, զի եւ ստորնագոյնն 'ի նոցանէ իմաստուն քան զմարդիկ առ հասարակ գտանի :

'Ի մերձակայ լուսնի ծաղկանց(\*) անցանիցեն եօթնիցս տասն սառամանիք եւ երբեակ եւս(\*\*) յորմէ հետէ ծնաւ զիս մայր իմ յափունս Միսիսիփեայ : 'Ի

(\*) Յամսեան մայիսի :

(\*\*) Զիւն 'ի տարւոջ՝ Եօթանասուն եւ երեք ամբ :

սուղ ժամանակաց Սպանիացիք դադարեալ էին ի ծովախորշն Բանսաքոլայ, բայց ոչ ոք տակաւին ՚ի սպիտակաց բնակէր ՚ի Լուիզիանա : Հազիւ եօթնեւտասն համարէի տերեւաթափս աշնայնոյ, յորժամ ընթացակից լեալ ընդ հօր իմում պատերազմողին Ուղալիսեայ՝ դիմազրաւեցի ՚ի կռիւ ընդդէմ Մոսգոկոկկաց՝ ազգ հզօր Փլորիտեանց : Խառնեցաք ընդ նիզակակիցս մեր ընդ Սպանիացիս, եւ խմբեցաւ ճակատամարտն ՚ի մի ՚ի ստեղանց Մաւրիլիոյ, եւ ոչ ինքնին իսկ Սրէսքուի (\*) եւ թերափխմայք չեղեն մեղ նպատամատոյցք : Տարան թշնամիք զյաղթութիւնս : հայր իմ անկաւ ՚ի մարտին : Իսկ ես երկիցս վիրաւորեցայ ՚ի սպաշտպանեւն իմում նմա : Բա՛րէ, եւ ընդէ՞ր չեղեւ ինձ իջանել յայնժամ ՚ի կայս Հողւոց (\*\*), զի զերծ կայի յաղեսից՝ որ սպասեալ մնային ինձ յերկրի աստ : Բայց այլ ազգ իմն ետուն հրաման Ոգիք, եւ ես ընդ վախստեայս անկայ ՚ի Ս. Օգոստինոս :

Ի քաղաքի աստ նորոգ դեռ եւս կառուցելոյ ՚ի Սպանիացւոց՝ վտանգ ՚ի վերայ կայր ինձ վաստակել ցմահ ՚ի բովս Մեքսիկայ, մինչդեռ ծերունի ոմն Քասադիլլացի Լորեզ անուն՝ ՚ի տեսիլ պատանեկան տիոցս եւ մտացս պարզութեան ՚ի գութ ընդ իս խանդաղատեալ շնորհեաց ինձ ապաստանարան, եւ յանդիման ամ զիս քեռ ումեմն ընդ որում անամուսին կենցաղավարէր :

Երկաքանչլւրն եւս գորովագութ եւ երիցագոյն

(\*) Դիք մարտի :

(\*\*) Դժոխք :

խնամուք մնուցին զիս ընդ ազգի ազգի վարժապետք  
կացուցեալ : Այլ յետ երեսնլմնեայ աւուրս անցու-  
ցանելոյ 'ի Ս Օգոստոնոս , զքաղաքային կենաց զգացի  
յանձին զտաղտուկ : Հիւծեալ մաշէի ակն յայտնի մերթ  
արձանացեալ կայի անշարժ ժամս ձիզս 'ի զնին գա-  
դաթանց անտառախիտ մայրեաց , եւ մերթ երթեալ  
բազմէի առ ամն գետոյ՝ զորոյ տխուր նկատէի զըն-  
թացս ջուրց , նկարելով 'ի մտի զանտառս ընդ որս  
գետահետեալ անցանէին ալիք նորա եւ խորասու-  
զեալ կայր հոգի իմ 'ի միայնութեան անդ :

Ոչ եւս կարացեալ ժոյժ ունել ըղձից դառնալոյ  
'ի յանապատ , 'ի միում աւուրց ընդ առաւօտն մը-  
տի առ Լօբէզ արկեալ զինեւ զհանդերձս վայրենա-  
կանս , ունելով 'ի միում ձեռին զաղեղն իմ եւ զնետս ,  
եւ 'ի միւսումն զզգեստս եւրոպականս . յանձն ա-  
րարի զայնոսիկ առնն ազնուականի եւ իմոյս պաշտ-  
պանի , եւ անկայ առ ոտս նորա իջուցեալ հեղեղս  
արտասուաց : Անուանս դժոխալուրս ետու առ իս  
ապաշնորհ զանձնէս լեալ ամբաստան : Այլ ուր ու-  
րեմն ասեմ ցնա . « Հայր իմ , դու ինքնին տեսանես ,  
այո՛ , մեռայց եթէ ոչ առից վարել դարձեալ զհընդ-  
կականն կենցաղ » :

Լօբէզ այլ յայմէ եղեալ՝ կամեցաւ շրջել զիս 'ի  
մտացս , 'ի դէմս ածեալ ինձ զվտանգս յորս ընդդէմ  
խիղախէի եւ անկանելոց էի անդրէն 'ի ձեռս Մոս-  
գոկոլկաց : Այլ տեսեալ զի անդրդուելի կայի 'ի  
խորհուրդս իմ՝ փղձկեալ յարտասուս եւ գիրկս զինեւ  
արկեալ գոչեաց մեծաձայն . « Ե՛րթ , որդեակդ բը-  
նութեան , առնուլ զանձնիչխանութիւն մարդոյ՝ զոր

չեն կամք Լորեղայ բառնալ զայն 'ի քէն : Եթէ երիտասարդ դեռ եւս էի հասակաւ ընկերէի քեզ յանապատ անդր , — ուր են՝ են եւ իմ յիշատակք քաղցունք , — եւ յանձն առնէի զքեզ 'ի գիրկս մօր քո : Եթէ ժամանեցես յանտառս քո , յուչ լիցի քեզ ծերունին Սպանիացի՝ որ հիւրընկալաւն զքեզ . եւ ա՛ծ զմտաւ՝ առ 'ի սիրել զնմանիս քո՝ զի փորձն այն նախկին զոր ընդ սիրտ մարդոյ փորձեցեր յաջողեաց քեզ ամենեւիմք » : Եւ կատարեաց աստ Լորէզ զբանս իւր ազօթիւք առ Աստուածն քրիստոնէից՝ զորոյ չէր իմ առեալ յանձն զպաշտամունս կրօնից , եւ արտօսրալիչ հեկեկանօք մեկնեցաք 'ի միմեանց :

Ոչ ինչ յամեաց անկանել զինեւ պատիժ պատուհասի վասն ապաշնորհ բարուցս : Զարտուղի անկայ մոլորահետ ընդ անտառս՝ անփորձ դեռ եւս գոլով , եւ ձերբակալ եղէ 'ի միոյ ջոկատէ Մոսգոկոկաց եւ Սիմփնոլաց , որպէս եւ Լորեղայ յառաջագոյն գուշակեալն էր : Համարեցան զիս ընդ Նաչիզս հայեցեալ 'ի տարազ հանդերձից իմոց եւ 'ի փետուրս՝ որ զգլխով իմով յօրինէին զարդ : Արկին զիս 'ի շղթայս , այլ վարկպարազի իմն , վասն անտիական տիոցս : Սիմաղան՝ զօրացն պետ եհարց զանուն իմ , եւ ես պատասխանի ետու եւ ասեմ . « Շագգաս է անուն իմ . որդի եմ Ուղալիսեայ՝ որդւոյ Միսքուայ , որ զբաղումս 'ի դիւցազանց Մոսգոկոկաց ընդ կառափն հանին » : Եւ Սիմաղան ասէ ցիս . « Շագգաս , որդիդ Ուղալիսեայ՝ որդւոյ Միսքուայ , բերկրեաց , զի 'ի խարոյկ փայտակոյտ ծախեսցիս 'ի մեծի գիւղաքաղաքին » : Իսկ ես ասեմ .

«Ահա որ ինչ 'ի ճահ պատահէ» : Եւ սկսայ յեղանակել զեղերերդ մահուս :

Թէպէտ եւ բանտարգել՝ սակայն չէր ինձ մարթ յառաջին աւուրս անդ դադարել 'ի զարմանալոյ ընդ թշնամիս իմ : Ի դէմս Մոսգոկոլկայ եւ մանաւանդ համահարդին իւրոյ Սիմֆինոլայ փայլէ խնդութիւն սէր եւ գոհութիւն : Թեթեւընթաց է նա , հիւրընկալ բարութք եւ լրջամիտ , բազմախօս եւ երագարան՝ այլ 'ի լեզու դիւրադարձ եւ դաշնակաւոր : Յամայ իսկ անջնջելի մնան 'ի Սաքեմս բերկրութիւնք պարզ եւ անխստն , հանգոյն զառամեալ թռչնոց անտառիս՝ ըզվադեմի երգոց խստնեն զզեղզեղ ընդ նորալուր երգս ձագուցն իւրեանց :

Կանայք՝ որ խուռն ընթանային զհետ ամբօխին՝ կարեկցութիւն խանդակաթ եւ հետաքրքրութիւն գորովագութ 'ի դէմս իւրեանց բերէին վասն մանակականի տիոցս դալարութեան : Հարցանէին զիս ըզմօրէ իմմէ եւ զնախկին աւուրց կենաց իմոց . ցանկալի էր՝ նոցա գիտել՝ եթէ որրան իմ մամռապատ տատանէ՞ր երբեմն 'ի կախ զծաղկազուարճ կողերց հացեաց , եւ սղոխք քաղցրաշունչք շարժէի՞ն զիս մօտիկ առ բոյնս թռչնոց , եւ այլ բազում հարցուածս առնէին զզգացմանց սրտիս : Խնդրէին յինէն թէ է՞ր իմ տեսեալ յանուրջս եղն սպիտակաստեւ , եւ ծառք զանխուլ հովտին յորդորեա՞լ էին երբէք զիս 'ի սէր : Իսկ ես պարզաբար պատասխանի տուեալ առ մարս առ դստերս եւ առ հարսունս՝ ասէի . « Գուք շնորհք տունջեան , եւ գիշեր իրրեւ զցօղ սիրէ զձեզ . մարդ 'ի ձերմէ ելանէ յարդանդէ՝ չկախել

դատեանց ձերոց եւ զբերանոյ, գիտէք դուք բարբառել  
բանս դիւթականս՝ որ մոռացումն առնեն վշտաց ։  
Ահա զոր ինչ ասաց ընդ իս որ զիսն ամ 'ի լոյս, եւ  
չիք այլ եւս նմա տեսանել զիս ։ Եւ ասէր ցիս դար-  
ձեալ, թէ կուտանք ծաղկունք են խորհրդաւորք որ  
յամայի վայրս եւ եթ գտանին » ։

Այս ամենայն բանք գովեստիցս գգուէին ըզ-  
փառասիրութիւնն նոցա . ընուն զիս ազգի ազգի  
սլարգեւօք, բերէին առ իս մակարդուն հոյզ ընգու-  
զոյ, շաքարս հացիս, հաստեայս բրնձիս, ասուլստ  
արջենի եւ մորթս կղբու եւ խեցիս 'ի զարդ եւ յարդ  
'ի խշտեակ ։ Ի ձայն երգոց ուրախ լինէին ընդ իս  
եւ ասպա անդէն լուծանէին յողբէլալիս, զմտաւ ա-  
ծեալ զի մնայր ինձ կենդանւոյն մատնել 'ի հուր ։

'Ի միում գիշերի յորում բանակն Մոսգոկոկաց  
նստեալ կայր յեզր անտառի միոջ՝ բաղմեալ էի եւ ես  
զպատերազմիկ հրովն ընդ որսորդին կարգելոյ ինձ  
'ի պահ. եւ լուայ յանկարծ զշրջիւն հանդերձի 'ի վերայ  
խոտոյ, եւ կին ոմն քօղ զգիմօք արկեալ 'ի կէս՝  
եկն հանգչել ինձ առ ընթեր ։ Արտասուք ընդ ար-  
տեւանամբք նորին վիժեալ գնային, 'ի նշոյլ հրոյն  
փոքրիկ նշան ոսկեղէն խաչի փայլէր ընդ կուրծա  
իւր ։ Եր նա գեղանի, եւ չգիտեմ զի՛նչ 'ի դէմս  
նորա փայլէր առաքինական եւ կաթողին՝ որ բռնա-  
դատէր զիս 'ի հրասլոյրս ։ Հանգչէին 'ի նմա շնորհք  
գեղածիծաղ, եւ կարի յոյժ գուրթ իմն գորովոյ ընդ  
խորին թաղծութեան միալուծ կցորդեալ դոյր երեւ-  
ւել յաչս նորա, եւ ժպիտ նորա սլարդ իբրեւ զկա-  
պուտակ եթեքին ։

Թուեգաւ նա ինձ Կոյս յետնոց տարփանաց՝  
զոր յղեն առ գերեալն 'ի մարտի 'ի դիւթել զշիրիմ  
հիքին : Ի սոյն յայս 'ի միտս խօսիմ առ նա թոթով  
բանիւք՝ եւ արհաւրօք՝ զոր չազդէր ինձ սակայն եր-  
կիւղ խարուկին . « Կոյս դու , արժանաւորդ նախ-  
կին սիրոյ եւ ոչ առ յետինն ապաքէն ստեղծեալ ,  
խլրտմունք սրտի՝ որ ընդ հուպ զագարեսցէ 'ի արօրի-  
մանէ՝ ոչ 'ի ճահ քոյոցդ հանդիպեսցին , զի զիա՞րդ  
հնար իցէ խառնել զկեանս ընդ մահու : Արժանի ցա-  
ւոց գործեսցես դու ինձ զկեանս իմ , թող այլ ոք առա-  
ւել քան զիս լիցի բարեբաստ , եւ յընդերկար գըրկա-  
խառնութիւնս խաղապատեսցեն զմիմեամբք լիանք եւ  
կաղնիք » :

Դուստրն այն գեղածաղիկ ասէ ցիս յայնժամ .  
« Չեմ ես Կոյս յետնոց տարփից . այլ քրիստոն-  
եա՞յ ես դու » : Պատասխանի ետու եւ ասեմ զի  
չէր իմ բնաւ մատն եղեալ թերափիմայց տան ի-  
մոյ : Ի լուր բանից իմոց յակամայից իմն արար շար-  
ժումն հնդկուհին , եւ ասէ ցիս . « Յաւէ ինձ զի  
կռապարիշտ ոմն ես դու անզգամ . մայր իմ արար  
զիս քրիստոնեայ . Ադալա յորջորջիմ՝ դուստր Սի-  
մաղանայ՝ յապարանջանս ոսկիս պճնելոյ եւ պե-  
տին զօրականաց բանակիս : Դէմ եղեալ գնամք յԱ-  
բալաքիւքլա ուր հասցէ քեզ այրել 'ի հուր » : Չայս  
ասացեալ Ադալա ել եւ մեկնեցաւ յինէն 'ի բաց :

Աստանօր Շագդասայ հարկ եղեւ հատանել ըզ-  
թել վիպացն : Յիշատակք յոգնատխուրք զեղուին 'ի  
հոգևոջ նորա , եւ աչք իւր շիջուցեալք ողորկեցին ար-  
տասուօք զերթամած այտիցն զխորշումս , հանդոյն կըր-

կին աղբերականց որ թագուցեալք 'ի խաւարչտին վայրս երկրի՝ գան 'ի յայտ ալեօքն իւրեանց՝ զոր թագունս պարզիլ ընդ մէջ ժայռից :

Ուր ուրեմն յաւել եւ ասէ . Որդեակ իմ, տեսանես զի Շաղգաս ոչ այնչափ գտանի իմաստուն որքան համբաւուիլ է պանծացեալ . բա՛րէ, սիրեցեալք իմ որդեակ, մահկանացուաց չէ մարթ գիտել թէ կարիցեն տակաւին հարկանել յողբս եւ յարտասուս : Անկան աւուրք բազումք, դուստրն Սաքեմայ դարձ առնէր զամենայն երեկս խօսել ընդ իս : Չկարէի փակել զաչս իմ 'ի քուն . Աղալա կանգուն կայր 'ի յիս իբր զյիշատակ նախնեացս որրանի :

Յետ զեօթնեւտանս աւուրս ընթացից, 'ի ժամանակի յորում եփիմերէս 'ի ջուրց 'ի դուրս երեւի՝ մըտաք յընդարձակածաւալ մարդագետինսս Ալաքիւյայ : Շուրջ զնովաւ կանգնին բլրակք որ յետկուսէ միմեանց կացեալ՝ մինչեւ 'ի յամսս ամբառնսն անտառս սաղարթախիտս կորալմից, կիտրոնեաց, մակնոխայց եւ կանաչագեղ կաղնեաց : Չայն՝ եբարձ պետն 'ի նշան ժամանման 'ի սահմանեալ վայրն, եւ ջոկատն բանակեցաւ առ ստորոտովք բլրոցն : Ի բաց տարան զիս անտի քայլս ինչ հեռի առ եզերք միոյ յինքնաբուխ ջրհորոց գերահռչակելոց 'ի Փլորիտեանս : Կաշկանդեալ կայի առ ոտամբ ծառոյ, եւ պատերազմիկ ոմն հսկէր զինեւ անժոյժ : Հաղիւ անցուցանէի վայրկեանս ինչ 'ի տեղւոջս, եւ ահա եկն ել երեւեցաւ Աղալա ընդ հովանեաւ աղբերն, եւ ասէ ցգիւցազն Մոսգոկոլկ . « Եթէ իղձ են քեզ, ո՛վ որսորդ, հետաւարելոյ զայժեմունս, յիմ վերայ հոգ պահ ունելոյ

բանտարգելոյդ լիցի » : Պատերազմիկն խայտայր առ  
խնդին ընդ բանս դստերն զօրավարին, եւ սլանայր 'ի  
բաց 'ի գագաթանէ բլրոյն, երազելով զքայլս 'ի  
դաշտին :

Նորանշա՛ն ընդդիմապատկեր սրտի մարդկան :  
Որ ըզձիւք ցանկայի բարբառել զգաղտնածածուկ խ-  
րաց առ որ սիրելին էր ինձ քան զարեւ, արդ ըզ  
դողանի հարեալ եւ շփոթեալ՝ նախամեծար համա-  
րէի դէ՛շ անկանել տիտեռանց աղբերն քան առան-  
ձին գտանել զանձն ընդ Ադալայ : Դուստրն այն  
անապատաց խռովեալ կայր իբրեւ զիս զբանտար-  
կեալս . եւ երկաքանչիւրքս կայաք 'ի խոր լռու-  
թեան զի ոգիք սիրոյ գողացեալ էին զբանս 'ի մէ՛նջ :  
Ուր ուրեմն Ադալա բուռն անձին արարեալ զայս օ-  
րինակ խօսեցաւ եւ ասէ . « Պատերազմիկ դու,  
վարկաւարազի իմն արկեալ կաս 'ի շղթայս, դիւրին  
լիցի քեզ գտանել ելս 'ի փախուստ » : Զոյգ ընդ բանից  
նորա լեզու իմ զգեցաւ յանդգնութիւն, եւ պա-  
տասխանի տուեալ ասեմ . « Աւարկաւարազի՛ իմն ար-  
կեալ 'ի շղթայս, կին դու . . . » եւ չկարացի կատա-  
րել զբանս իմ : Ադալա վայրիկ մի 'ի վարանս եղեալ,  
ասպա ասէ ցիս . « Ապրեցո՛ զանձն քո » . եւ եզերծ զիս  
ի կոճեղէ ծառոյն : Իսկ իմ բուռն հարեալ զպարա-  
նէն՝ յանձն առնէի զայն 'ի ձեռս օտարականի դստերն,  
բռնադատելով իմն զգեղանի մատուռնս նորա փակիլ  
'ի վերայ շղթայիցս . աղաղակեցի եւ ասեմ . « Կա՛լ  
զայդ, կա՛լ » : Եւ ասէ Ադալա սրտահառաչ իմն ձայնիւ .  
« Ո՛հ, զի՞ անմտանաս չուառակա՛ն . . . ո՞չ դիտես  
զի 'ի հուր ծախեսցիս . յի՞նչ խորհիցիս դու, գիտե՞ս

զի դուստր եմ ես Սաքեմայ ուրումն ահարկուի » :  
Ի վերայ ածի արտասուօք եւ ասեմ . « Նդեւ երբեմն զի  
եւ ես յուս մօր իմոյ բարձեալ լինէի 'ի մորթ շնջրւոյ ,  
էր եւ հօր իմոյ խուղ գեղեցկաշէն եւ այծեմունք  
նորա ըմպէին 'ի ջուրց յոգնահոյլ հեղեղաց , բայց արդ  
չեն իմ հայրենիք եւ մոլորահետ թափառեալ շրջիմ :  
Եթէ անկայց յարեւէ , ոչ ոք 'ի բարեկամաց զիցէ 'ի  
վերայ դիական իմոյ խոտ ինչ դալարւոյ առ 'ի  
սլահպանել զայն 'ի ճանճից . ոչ ումեք փոյթ լիցի  
ընդ մարմին օտարականի ուրուք եղկելոյ » :

Ի բանից աստի 'ի դութ խանդաղատեցաւ Ադա-  
լա , հոսէին արտասուք նորա 'ի ջուրս անդր աղբե-  
բըն . իսկ ես եռանդնալից կրկնեալ անդրէն ասէի .  
« Եթէ սիրտ քո բարբառի հանդոյն իմուսն , չլօցէ ինչ  
տեղի ազատութեան յանապատիս եւ ո՞չ կարասցեն  
սաղարթախիտք անտառաց ծածկել զմեզ ընդ ոստովք  
իւրեանց , իցե՞ն ինչ պէտք այնքանեաց իրաց չինա-  
կան մանկուոյ առ 'ի դոյ երջանիկ , ո՞վ դուստր  
չքնաղազեղ քան զնախկին անուրջս փեսայի , ո՞վ սի-  
րեցեալդ իմ , քաջալերեա՛ց դալ ընդ իս » : Զայս օրի-  
նակ խօսեցայ ընդ նմա եւ պատասխանի ետ Ադալա  
դորովայոյզ ձայնիւ . « Բարեկամ անտիական , ուսեալ  
է քո զբարբառ սպիտակաց , եւ դիւրին լիցի քեզ  
սլատրել զոմն Հնդկուհի » : Ազաղակեցի եւ ասեմ .  
« Զինչ , կոչե՞ս դու զիս քեզ բարեկամ անտիական ,  
ա՛հ , եթէ ստրուկ ոմն տարաբախտ . . . » : Այլ նորա  
խոնարհեալ առ իս , ասէ . « Քաջ է , ստրուկ ոմն  
տարաբախտ » : Յայնժամ վառեալ յեռանդն եւ յաշխոյթ  
յաւելի եւ ասեմ . « Թող համբոյր քոյին տացէ նմա

հաւատօրիս գրէն »: Լուաւ Ադալա աղերսանաց բանի-  
ցըս, եւ որպէս այժեմնիկ որ թուի կախեալ զծաղ-  
կանց վարդազեղ լիանաց՝ զորս ծասքէ գիրգ եւ  
փափնկ լեզուաւն 'ի սեպացեալ խոռոչս լերին,  
այսպէս եւ ես կախեալ կայի զչրթանց սիրեցելոյս:  
Նշուկ, սիրեցեալդ իմ որդեակ, զուգակից ըն-  
թանան վիշտք ընդ հաճոյս, զի ո՞ հաւատայր թէ վայր-  
կեանն այն՝ յորում Ադալա ընծայէր ինձ զնախկին  
դրաւական սիրոյն՝ եղծանելոց էր 'ի սպառ զամենայն  
ակնկալութիւնս իմ: Սլիք սպիտակացեալք ծերուն-  
ւոյն Շագդասայ, դու յո՞րպիսի դարմանս ըմբռնեալ  
կայիր մինչդեռ դուստրն Սաքեմայ զայսոսիկ բանս  
բարբառէր. « Բանտարկեալդ գեղանի, խօլաբար տե-  
ղի ետու ըղձից քոց, սակայն յո՞ ուրեք առաջնոր-  
դեալ աճցեն զմեզ այս կիրք. կրօնիք անջատեալ 'ի  
քէն գտանիմ 'ի սպառ. մայր իմ, զի՞նչ գործ գոր-  
ծեցեր դու . . . »: Յեղակարծ լուռ եւ եթ եկաց Ա-  
դալա, եւ չզխտեմ զո՞ր գաղանիս աղիտաբեր չե-  
թող զերծանել 'ի չրթանցն: Այս բանք ընկլուզին  
զիս 'ի յուսահատ վարանս, եւ ես ձայն բարձեալ  
գոչէի. « Բարւոք է, քան զքեզ եղէց եւ ես ա-  
նագորոյն, եւ ոչ երբէք փութացայց 'ի փախուստ. տես-  
ցես դու զիս 'ի չրջափակն յայն հրեղէն, լուիցես ըզ  
հեճեճմունս մարմնոց իմոյ եւ խնդալից բերկրեսցիս »:  
Սեղմեաց Ադալա զիմս ընդ մէջ երկոցունց ձեռաց  
իւրոց, գոչեաց եւ ասէ. « Համբակդ հէք կռապարիշտ,  
իրաւապէս յորդորես զիս 'ի դութ, կամք են քեզ ու-  
րեմն զի արտասուեցից եւ ես 'ի բոլոր սրտէ. ա-  
ղէտք որպիսի՛, զի յանհնարից իմն է խոյս ընդ քեզ

տալ : Անխօժեալ լիցի որովայնն որ դքեզ ծնաւ , ո՛վ Ադալա , հի՞մ չարկանես զանձն քո յորս տիտեռանց աղբերն :»

Յայնմ պահու մինչդեռ արեւն 'ի մուտս իւր խոնարհէր , սկսանէին տիտեռունք լսելի առնել զխօշիւնըս իւրեանց , եւ Ադալա ասէ ցիւ . «Գնացուք աստի» : Ընդ քարչ ամի ես զդուստր Սիմադանայ 'ի ստորոտ քլրոցն որ յօրինէին խորչս դալարիս կարկառելով զսարաւանդս իւրեանց 'ի մարդագետին անդր : Ամենայն ինչ խողազ էր եւ վսեմ յանապատին . ձայն արձակէր արագիւն 'ի բունոյն , հնչէին պուրակք յանյեզլի երգս լորամարդեաց , 'ի շչլուն պապկայից , 'ի մոնչլուն ցլուց , եւ 'ի խրխինջ Սիմինոլեան մատակ ձիոց :

Անշշունջ գրեթէ ձեմ առեալ շրջեցաք : Ընթանայի ես առ ընթեր Ադալայ , որ ունէր զծայրէ պարանին զոր հարկիւ յանձն արարեալ էի նմա : Մերթ ընդ մերթ ցնդէաք յարտասուս , եւ մերթ փորձ փորձէաք ժպլտ 'ի դէմս ցուցանել : Հայեցուածք մերթ ընդ երկինս վերամբարձ՝ մերթ ընդ երկիր վայրահակ , ունկն մտադիր 'ի լուր երգոց հաւուց , շարժուած իմն առ արեգակն որ 'ի մայր իւր մտանէր , ձեռն 'ի գուլթ սիրոյ սեղմեալ , լանջ մերթ բաբախուն եւ մերթ հանդարտիկ , անուանք Շազդասայ եւ Ադալայ մերթ ընդ մերթ կրկնեալք մեղմածայն . ո՛վ առաջին ձեմք սիրոյ , քանի՛ օն յիշատակ քոյին աղդէ ինձ 'ի սիրտ , զի յետ այնքանեաց ամայ դժբախտութեանց տակաւին խռովես զսիրտ ձերունւոյն Շազդասայ :

Զի՛ անխմանալիք դտանին մահկանացուք յուզ-

եալք 'ի կրօնց : Լքեալ թողի զվեհազնն Լորէզ եւ զի-  
մադրաւ խիզախէի ընդդէմ ամենայն վտանգից յա-  
զատու թիւն անձին իմոյ , այլ 'ի վայրկեան ժամանա-  
կի հայեցուածք աչաց կնոջ վեր 'ի վայր շրջեցին ըզ  
ճաշակս մտաց իմոց՝ զիմաստս եւ զխորհուրդս : Եւ  
մոռացօնս արկեալ զգաւառն իմ հայրենի , եւ զմայր  
եւ զհիւղ եւ զմահ ժանտաժուտ , որ 'ի վերայ հաս-  
եալ կայր ինձ , ոչ եւս փոյթ էր ինձ զայնմանէ որ  
չէրն Ադալա : Ոչ բուռն անձին արարեալ ելանել  
բարձրանալ 'ի բան մարդոյ , յեղակարծ գտայ անկեալ  
'ի մանկական իմն 'ի հասակի եւ չկարացեալ գտանել  
հնարս զերծանելոյ յազեալից՝ որ առ ոտս ինձ ելանէին  
զգայի զպէսս քնոյ եւ զսննդեան յայլմէ ձեռանէ ինձ  
պատրաստեալս :

Վայրապար եղեւ ուրեմն զի յետ ընթացից մե-  
րոց ընդ մարգագետինն ընդ այն՝ փարեալ Ադալայ  
զծնդամբք իմովք հրաւիրեաց զիս անդրէն թողուլ լը-  
քանել զնա : Յայնժամ բողոք բարձեալ ասէի դարձ վե-  
րըստին առնել միայնակ 'ի բանակետղ անդր , եթէ  
մերժէր նա կապել զիս անդրէն առ արմին ծառոյն :  
Եւ հարկ եղեւ նմա 'ի հաւան ածել զիս յոյս 'ի մախ  
ուներով յաղթանակել զինեւ միւսանգամ :

Եւ վաղիւ անդր աւուրն՝ յորում վճռեցաւ ճա-  
կատագիր կենաց իմոց , զկայ առեալ դադարեցին նոքա  
'ի հովախ ուրեք ոչ ինչ հեռի 'ի Գիւսքովիլայ՝ որ էր  
քաղաքամայր Սիմինուլաց : Հնդիկքս այսոքիկ միա-  
բանեալք ընդ Մոսգոկուկս՝ յորինենն ընդ միմեանս ըզ  
նիզակակցութիւն Գոեկաց : Եւ մէջ գիշերի եկն զը-  
տանել զիս դուստրն երկրին Արմաւենկաց , եւ առաջ-

նորդեալ ինձ 'ի լայնանիստ անտառ ուրեք շոճեաց ,  
ողոքէր դարձեալ ստիպել զիս 'ի փախուստ : Ա-  
ռանց ինչ ընդ բանս ամեկոյ , կալայ զձեռանէ նորա  
եւ բռնադատէի զեղնորթն ծարաւահիւժ թափառա-  
կան շրջել ընդ իս յանտառին : Գիշերն հողմախաղաղ  
էր եւ բազմազուարճ . Ոգին այերաց թօթափէր զկա-  
պուտակ վարսիցն գհերս խնկեալս 'ի հոռոյ շոճեաց , եւ  
էր անդ շնչել զանզօր անուշահոտութիւն ամբրոսական՝  
զոր բուրէին տիտեռունք ծածկեալք ընդ դամարեն-  
եօք գետոցն : Նշողէր լուսին ընդ կապուտակն ջինջ  
եւ անամպ , եւ ճաճանչք նորա մարգարտերանգք իջա-  
նէին մինչեւ յերկնածրար դագաթթունս մայրեաց :

Ոչ շշուենջ ինչ անդ լինէր լսելի . այլ ոչ գի-  
տեմ զի՞նչ հեռաստանեայ ներդաշնակութիւն տի-  
րէր 'ի խորս անտառաց . մարթ էր կարծել զի ոգին  
միայնութեան յոգւոց հանեալ հառաչէր 'ի լայնատա-  
րած վայրն անապատին :

Նշմարեցաք ընդ մէջ ծառոց երկտասարդ զոմն  
ջահ 'ի ձեռին՝ յինքն բերելով զմանութիւն ոգւոյն  
դարնայնոյ՝ որ ընդ անտառս առ հասարակ ձեմ առ-  
եալ ոգեւորէ զբնութիւն : Տաբփաւոր ոմն էր նա որ  
գնայր ուսանել զբախտ պայմանին 'ի հիւզանձկալոյն ,

Եթէ կոյսն այն անցուցանիցէ զլոյս ջահին , լը-  
սելի լինին նմա իղճք ընծայեալք առ ինքն . իսկ եթէ  
քօղածածուկ թագուսցէ զանձն առանց շիջուցանե-  
լոյ զայն , մերժէ յերեսաց զոմն ամուսին :

Պատերազմիկն միջամուխ եղեալ 'ի խորս ստուե-  
րաց , կիսածայն բարբառով յեղանակէր զերգս զայս :

Ճեպեցուցից աստէն զաւուրըն զընթաց

Ընդ գազաթուռս լերանց ,  
Առ 'ի խընդրել 'ի մէջ կաղնեաց անտառին  
Զիմ մենաւոր աղաւնին :

Զուլամբ նորին արկի խեցի ինչ մանեակ՝  
Յոր առ սըրտիս սէր են կարմիր հատք երբեակ .  
Եւ նոյնչափ յայնքմ երեւի  
Ի գոյն չըքնաղ մանուշակի  
Վասն երկիւղիս , եւ երեքին  
Կապոյտք առ յոյս իմ տեսանին :  
Իրրեւ զաքսից ականողիք են Միլայ,  
Վարսք իւր թեթեւք՝ որպէս բըրնձոյ դաշտորայ,  
Բերան նորին ըղ կարմրավարդ  
Իրր ըղ խեցի մարգարտազարդ ,  
Կրկին ըստինք նորա՝ հանգոյն  
Անդէզ ուլից են երկոցուն ,  
Որ 'ի նըմին աւուր յաշխարհ  
Ծնանին միմեանց լեալ համամայր :  
Յանկա՛րծ Միլա շիջուցանէր զբոցոյս ջահ ,  
Շըրթամբքն արկեալ 'ի յայն ըստուեր հեշտ 'ի ճահ .  
Զիմ անձկալւոյս այսպէս զարգանդ  
Պատրաստեցից ես արգաւանդ .  
Յոյս հայրենեաց գեղանըսիհ  
Զառատ սլըտկանցըն կախեսցի ,  
Ես ծըխեկեաւս խաղաղութեան  
Կացից որդւոյս մերձ 'ի յորրան :

Ո՛հ , թոյլ տուք ինձ ճեպել զաւուրըն զընթաց  
Ընդ գազաթուռս լերանց ,

Առ 'ի խընդրել , 'ի մէջ կաղնեաց անտառին  
Զիմ մենաւոր աղաւնին :

Այսպէս երգէր պատանին եւ եղանակք ճայնի  
նորա արկին աղմուկ 'ի խորս սրտիս եւ այլայլեցան  
դէմք Ադալայ . . . : Գողգոջէին ձեռք մեր խառ-  
նեալք ընդ միմեանս , այլ ասպիստ զտեսլեամբս ա-  
րարաք՝ այլով ոչ նուազագոյն վտանգաւորաւ :

Անցաք մեք առ գերեզմանաւ մանկան տղայոյ ,  
որ կայր անդ 'ի նշան սահմանադլխոց 'ի մէջ ազգաց  
երկոցունց : Եղեալ էր այն յեզր ճանապարհի  
ըստ սովորութեան , զի տիկնայք գեղածաղիկք հասա-  
կաւ 'ի գնալն յաղբիւր անդր կարասցեն ընդունել 'ի  
ծոց իւրեանց զողի անմեղ արարածոյն եւ դարձուցա-  
նել զնա առ հայրենիս :

Յայնմ պահու էր տեսանել հարսունս նորապը-  
սակս՝ որ ըղձակերտ գոլով մայրենի հեշտութեանց  
դուն գործէին շրթամբք կիտաբացիւք առնուլ 'ի  
ներքս զողի մանկանն զոր համարէին թափա  
ռել մոլորայած 'ի վերայ ծաղկանց . եւ ասպ մայրն  
ճշմարիտ եկն դնել առ շիրմաւ նորին բողբոջս ե-  
գիպտահատից եւ ծաղկունս սպիտակափայլ շուշա-  
նաց : Յողէր զերկիրն 'ի ցօղ կաթին եւ բաղմեալ 'ի  
վերայ խոնաւուտ դալարեաց՝ բարբառեցաւ առ որդի  
իւր գորովայոյզ ճայնիւ եւ ասէ . « Ընդէ՞ր իցէ ինձ  
լալ զքեզ 'ի հողեղէն որրանիդ , նորածինդ իմ սիրե-  
ցեալ , յորժամ թռչնիկն աճեսցի 'ի հասակ , պարտ է  
նմա զնալ 'ի խնդիր մննդեան , եւ գտանէ յանապատի  
դառնահատտ բազումս . գոնեա անծանօթ եղեն քեզ  
ողբէլալիք եւ գէթ ոչ փաղաղիչ շնչոյ մարդկեղինի

յորս անկաւ սիրտ քոյին : Կոկոն ծաղկին որ ցամաքէ  
յիւրումն սլարունակի անցանէ ամենայն բուրմամբն ա-  
նուշից՝ իբրեւ դբեղ , որդեակ իմ, բոլորով անմեղու-  
թեամբ քով. երանի որոց զրաւինն 'ի կենաց դեռ եւս  
յորրանի, զի ոչինչ դիտացին նոքա բայց զհամբոյր եւ  
զժպիտ մայրենի : »

Յաղթահարեալք ապաքէն մերով իսկ սրտիւ ,  
ընկճեցաք տեսլեամբ տարիանաց եւ մայրութեան ,  
որ թուէին հալածական իմն վարել զմեզ 'ի հրապոյ-  
րըս անգլի միայնութեան : Ածի զԱդալա բարձեալ 'ի  
վերայ զրկաց իմոց 'ի խորս անտառին եւ ասացի նմա  
բանս ինչ զոր ընդվայր լիցի ինձ խնդրել այսօր 'ի  
վերայ չրթանց իմոց , զի հողմոյն հարաւոյ , սիրե-  
ցեալդ իմ որդեակ , նուազէ ջերմութիւն թէ չնչիցէ  
'ի վերայ լերանց սառուցելոց : Յիշատակք սիրոյ 'ի  
խորս սրտի ծերունւոյ՝ հանգոյն են ճառագայթից տը-  
ւընջեան անդրադարձելոց ընդ խաղաղական չրջան  
լուսնի՝ 'ի ծածկել արփենւոյն եւ 'ի տարածանել լը-  
ռութեան ընդ բնակութիւնս վայրենեաց :

. Ո՞ւմ ումեք մարթէր փրկել զԱդալա , եւ ո՞ իսկ  
կարէր արգելուլ զնա տեղի տալ բնութեան . 'ի հը-  
րաշից անշուշտ լինէր այդ այդպէս , եւ այն եկն յար-  
գիւնս : Գուստրն Սիմաղանայ կարգաց առ Աստուածն  
քրիստոնէից , անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց եւ ե-  
կաց յաղօթս ջերմեռանդութեամբ առ մայր իւր եւ  
առ Դշխոյն կուսանաց : Ի վայրկենէ անտի, ո՞վ Ռընէ,  
զարթեալ 'ի միտս իմ զարմանասքանչ իմն խորհուրդ  
զայսց կրօնից՝ որ ընդ անտառս եւ 'ի մէջ բնաւից  
զրկանաց կենցաղոյս՝ կարէ մեծապարգև լնուլ զտա-

բաբախոս , զկրօնիցս ասեմ որ խափան կանդնեալ ընդդէմ բռնութեան հեղեղաց կրից , բաւէ միայնակ 'ի պարտութիւն նոցին՝ մինչդեռ ամենայն ինչ նպաստամատոյց մտանեն նոցա , դադանիք անտառաց եւ տարակայութիւն մարդկան եւ հաւատարմութիւն ստուերաց : Ա՛հ , սքսիսի աստուածային ինչ երեւեցաւ յաչս իմ գեղջուկն այն վայրենի , տգէտն այն Աղալա՝ որ 'ի գուճս անկեալ առ ընթեր միոյ 'ի վաղեմի նոճեաց տասպալելոց՝ որպէս առ ոտս բագնի , իղճս առ Աստուած վերառաքէր վասն կուսարիշտ միոյ տարիաւորի : Աչք նորա ամբարձեալք յաստեղս գիշերոյ եւ այտք նորա փայլեալք յարտասուաց կրօնից եւ սիրոյ ցուցանէին գեղեցկութիւն իմն անանց : Յաճախ թուեցաւ ինձ զի տոնոյր նա թեւս 'ի թուիչ 'ի վերյերկինս . յաճախ համարէի տեսանել զէջս 'ի վերայ ճաճանչից լուսնի եւ զճայն ընդ ոստս ծառոց զողոցն այնոցիկ՝ զոր Աստուածն քրիստոնէից յղէ առ միայնակեացսն 'ի խորս ժայռի , եթէ հաճեսցի կոչել զնոսս առ ինքն : Ալիշտ եղեւ ինձ ընդ այն զի խիթայի թէ գուցէ սուղ ինչ մնայր եւեթ ժամանակ Աղալայ 'ի վերայ երկրի :

Սակայն այնչափ եհեղ նա արտասուա , եւ այնքան չարաբաստիկ եցոյց նա զանձն իւր , զի փոքր միւս եւս հաւանէի 'ի բաց կալ 'ի նմանէ . եւ ահա բոթ մահու հնչեաց յանտառին : Արք չորեքին սպառազէնք յարձակեցան 'ի վերայ իմ . եւ մատնեցանք , զի պետին մարտի սպտուէր էր եղեալ պնդել զհետ մեր :

Աղալա որ սիգաճեմ գնացիւքն զգշխոյի ուրուք բերէր յանձին գնամանութիւն , ոչ զիջաւ խօսել ընդ

պատերազմողսն , այլ խրոխտ իմն եւ վէս արձա-  
կեալ 'ի նոսա աչս , չողաւ առ ընթեր Սիմադանայ :

Սակայն ոչ կարաց նա այնու բերել ինչ 'ի ձեռս ,  
զի կրկնակի կացուցան զինեւ պահք . յաւելան թիւք  
չղթայիցս եւ քեցեալ բաժանեցին յինէն զտարիաւորն  
իմ : Անցին գիշերք հնգեակք . նշմարէաք մեք 'ի հե-  
ռուստ զԱբալաքիւքլա կառուցեալ յեզր Քաթաիւքայ  
գետոյ : Ընդհուպ ծաղկապսակ զարդարեցին զիս , եւ  
ներկանէին զդէմս իմ 'ի կապոյտ եւ 'ի կարմիր , կա-  
խեցին մարգարիտս զոնգանց լմոց եւ զականջաց ,  
եւ ետուն 'ի ձեռս իմ քնար ինչ :

Եւ այսպէս պճնեալ առ 'ի դոհ՝ մտանեմ յԱբալա-  
քիւքլա 'ի խառնաձայն աղաղակս ամբոխի բազմու-  
թեան . վճարեալ էր վասն իմ ամենայն , յորժամ յե-  
ղակարծ շոխնդն խեցւոյ լսելի լինէր , եւ ազգապեան  
Միկօ հրամայեաց , ժողովրդեան համագունդ 'ի մի  
վայր ժողովել :

Գիտես իսկ , որդեակ իմ , զկտտանսն որովք լըլ-  
կեն վայրենիք զկալանաւորս 'ի մարտի : Քարողողքն  
քրիստոնէականք յաչս եղեալ զվտանդ կենաց , եւ  
անխոնջ մարդասիրութեամբ արկեալ ջան 'ի դործ  
գային առ բազմաթիւ ազգս ժողովրդոց զերծանել  
զստրկութիւն քաղցրախորժ յարհաւրաց խարուկի : Չեւ  
եւս Մոսգոկոկայ ընկալեալ էր զսովորոյթն զայն  
բայց յողունք 'ի նոցանէ կրթեցան 'ի նոյն : Առ 'ի խօ-  
սիլ զկարեւոր իրաց համախմբէր Միկօ զՍաքեմայս  
'ի ժողով : Եւ ածին զիս 'ի տեղի անդր խորհրդոց :  
Ոչ ինչ հեռի յԱբալաքիւքլայ յառանձնացեալ բլրակի  
ուրեք ամբառնայր տաղաւար ժողովոցն : Երբեակ

կարգք սեանց կաղմէին զվայելչագեղ յօրինուած բու-  
լորածեւ շինուածոյն , եւ սիւնքն այնոքիկ էին կի-  
պարիք յղկեալք եւ պալարաքանդակք՝ առաւելլով 'ի  
քարձրութիւն եւ 'ի թանձրութիւն , եւ նուազէին  
դարձեալ ըստ մերձենալոյ իւրեանց 'ի միջակէտ անդր՝  
ուր նշանակ կայր ձող մի միայն ամբարձեալ , յոյր  
գագաթմանէ անցանելով ընդ կատարս այլոց սեանց  
ծածկարանք խեցիք՝ քօղարկէին զտաղաւարն 'ի ձեւ  
հովահարի :

Համախմբի ժողովն : Մերունիք յիսնեակիք արկե-  
եալ հանդերձս կղքենիս՝ տողեալ կարգին յաստիճանս  
ինչ հանգէպ դրան տաղաւարին , եւ պետն բազմի 'ի  
միջի նոցա , ունելով 'ի ձեռին զձխելեակն խաղաղու-  
թեան զկիսով գունադեղեալն 'ի նշան մարտի : Ընդ  
աջմէ ծերոցն զտեղի առնուն կանայք յիսնեքին զդեց-  
եալք վերարկուս 'ի փետրոց կարապից : Իսկ պետք 'ի  
մարտի՝ սակր 'ի ձեռին եւ գարգմանակ 'ի գլուխ , ա-  
րիւնաներկ բազկօք իւրեանց եւ կրծովք՝ ունին զձա-  
խակողմն :

Առ ոտամբ սեան՝ որ 'ի միջավայրին՝ բորբոքի  
հուր ժողովոյն : Հմայողն առաջին՝ շուրջ պատեալ  
յութից պահապանաց տաճարին , արկեալ զանձամբ  
հանդերձս երիայնատուունս եւ կրելով 'ի գլուխ իւ-  
րում բուխձակ յարդահիւս՝ հեղու ասլրասամս կո-  
քալմից 'ի վերայ բոցոյն , եւ նուիրէ զոհ առ Արեւ-  
գալն : Երրակի այս կարգ ծերոց՝ տիկնանց եւ պա-  
տերազմողաց , քուրմք եւ ամպք խնկոցն եւ նուէչ  
զոհին , այս ամենայն յաւելուն տեսիլ վայելչագեղ 'ի  
ժողով անդր :

Իսկ ես շղթայակապ կայի յոտին 'ի միջի անդ ժողովոյն : Ի վախճանն զոհին խօսել կալաւ Միկօ եւ առաջի արար պարզարար եթէ առ ի՞նչ համախըմբեալ էր ժողովն : Եւ էարկ մանեակ մի կապոյտ 'ի սրահի անդ՝ 'ի վկայութիւնն բանիցն զոր խօսեցաւ :

Յայնժամ մի 'ի տաքեմայդ Արծուատոհմից յոան եկաց . սկսաւ խօսել եւ ասէ .

« Հայր իմ Միկօ , Սաքեմայք , տիկնայք , պատերազմողք քառեակ տոհմից Արծուոյ , Կղբու , Օձի եւ Կրիայի , մի՛ ինչ փոփոխեսցուք ի բարուց նախնեաց մերոց . հրոյ ճարակ տացուք զբանտարկեալն , եւ մի՛ լիցի մեզ մեղկանալ յարութենէ քաջութեանց մերոց : Որ ինչ առաջի առնի ձեզ այն սովորոյթ է սպիտակաց եւ մահառիթ միայն մարթ է այնմ լինել : Տուք ինձ մանեակ կարմիր որ բովանդակ ունի զբանս իմ : Ահա ասացի ձեզ : »

Եւ արկանէ մանեակ մի կարմիր ի ժողովի անդ :

Յարուցեալ յայնժամ մի ոմն ի տիկնանց անտի ասէ . « Հայր իմ Արծուի . զհանճար աղուխու եւ զզգօն յամբընթացութիւնն կրիայի բերես յանձին : Իղձ է ինձ յղկել ընդ քեզ զշղթայն բարեկամութեան , եւ յայնժամ տնկեսցուք ի միասին զծառն խաղաղութեան . այլ ի բաց հանցուք զաղխտաբերս ի սովորութեանց նախնեաց մերոց : Ելիցին մեր գերիք առ ի մշակել զգաշտորայս , եւ ոչ եւս լուիցուք զճիշտ բանտարդելոց՝ որ զմայրենի ամբոխենն զաղլիս : Ահա ասացի : »

Զոր օրինակ ի բռնաշունչ հողմոց բախեալ խորտակին կոհակք ծովու , որպէս յաշնայնի տերեւք ազազունք վարին ի մրրկաց , որպէս եղեգունք Միսի-

տիկեայ հակին եւ ամբառնան ի յանկարծադէպ ուղղմանէ ջուրց, եւ որպէս բազմերամ հօտք եղջերուաց պոռոչնն ի խորս անտառի, այնպէս աղմուկ եւ շշուռջ դնայր ընդ ժողովն առ հասարակ: Սաքեմք, մարտիկք եւ տիկնայք առնուն խօսել կարգ ըստ կարգէ կամ ամենեքեան ի միասին. խնդիրք օգտի հարկանին ընդ իրեարս, երկպառակին կարծիք մինչեւ լուծանել երախանին: Այլ ապա ուրեմն յաղթանակեաց դարձեալ սովորոյթն վաղեմի. եւ դատապարտեցայ ես ի խարոյկ:

Սակայն հանդամանք ժամանակին յամեցուցին զպատուհասն իմ, զի մերձենայր Տօն Մեռելոց կամ Խրախճանց Ոգոց: Սովոր են նոքա ոչ զոք ի գերեւոց մատնել ի մահ յաւուրսն յայնոսիկ նուիրականըս այսմ պաշտաման. Յանձն արարին զիս ի ձեռս պահապանի ուրումն խստասրտի, եւ անշուշտ հեռի տարան Սաքեմայք զդուստրն Սիմաղանայ զի ոչ եւս եղև ինձ տեսանել զնա:

Ազգք եւ ազինք որ երեք հարիւր փարսախաւ հեռի բնակէին ի բողոքածեւ շինուածոյն՝ խուռնեւրամ հասանէին անդր առ ի տօնել զԽրախճանց Ոգոց: Կառուցեալ էր նոցա հիւղ ինչ երկայնանիստ յառանձնացեալ վայրի ուրեք. եւ ի ժամանակեալ աւուրն իւրաքանչիւր արք խրճի հանեալ զոսկերոտի հարց իւրեանց յիւրաքանչիւր գերեզմանացն՝ կախէին զկմախսն ըստ կարգի եւ ըստ տոհմի՝ զորմոց հասարակաց սրահին նախեաց: Հողմունք — զի մերիկ յանժամ յարուցեալ էր — եւ անտառք եւ սահանք ջուրց մանչէին արտաքոյ, մինչ-

դեռ ձերունիք այլազան ցեղից կոէին դաշինս խաղաղութեան եւ նիղակահցութեան ի վերայ ոսկերտուոյ հարց իւրեանց :

Ի Տեսիլ ածան հանդէս եղերականք , ձիարչաւ եւ կաքաւ սպարանցիկ , խաղ ուլանց , եւ կուսանք կըրկին՝ որ գուն գործեն խլել ի ձեռաց միմեանց դմահակ ուռենի : Ուսոյցք լանջից նոցա հպին առ իրեարս , թոչին մատունք նոցա ի վերայ մահակին զոր ամբառնան զգլխովք իւրեանց ի վեր , ոտք նոցա գեղեցիկք եւ բոկանիք խաղապատին ընդ միմեանս , շրթունք նոցին հանդիսին իրերաց եւ խառնին շունչք նոցա քաղցրիկք , խոնարհեալ հակին առ միմեանս , եւ ոլորին ընդ իրեարս վարսիցն գէսք , հային ի մարս իւրեանց , շիկնին շառագունին(\*) , եւ որք կանն իյնին հարկանեն ծափ զծափի : Հմայողն կարգայ առ Միքայու՝ ոգին ջրոց . վիպէ զմարտս պատերազմաց մեծի Նապաստակին ընդդէմ Մաքիմանիդուայ՝ դիցն աղետից , զառաջնաստեղծ մարդն եւ զՍթաէնսիկ , զկինն նախկին դահավէժ անկեալս յերկնից կորստեալք անմեղութեան իւրեանց , զերկիրն կարմրացեալ յեղբայրական արենէ , զամպարիշտն Յուսքըքա՝ սրախողխող արարեալ զարդարն Գահուխսդսարոն , զջրհեղեղըն իջեալ ի ձայն Մեծի Ոգւոյն , զՄասու զերծեալ միայնակ մախուկաւն իւրով խեցեաւ եւ զագուաւն յղեալ ի գիւտ երկրի : Վիպէ դարձեալ զգեղեցիկն Ենգաէ վերաբերեալ ի դաւառէն ոգւոց՝ քաղցրանըւադ երգովք ամուսնոյն :

(\*) Զի շառագունանք բնաւորական իմն են առ վայրենիս մատաղատիս :

Յետ խաղուցս այսոցիկ եւ օրհնելութեանց  
ուատրաստին տալ նախնեաց շիրիմ յաւիտենական :  
Զեղերը դետոյն Քաղաւքայ էր տեսանել թղենի մի  
վայրի՝ սրբազանեալ ի պաշտամունս ժողովրդոց : Սո-  
վորութիւն էր առ կուսանս լուանալ ի տեղւոջս  
յայսմիկ զըջազգեստս իւրեանց խեցեղէնս եւ ցամա-  
քեցուցանել զայնոսիկ 'ի չունչ հողմոյ անապատին՝  
տարածանելով զոստովք հինաւուրց ' ծառոյն , ուրա-  
նոր փորեալ կայր գերեզման անծայրափակ : Մեկնին  
գնան յեղերական սրահէն յեղանակեալ երգս 'ի մահ,  
եւ իւրաքանչիւրն յընտանեաց անտի բերէ ընդ իւր  
նշխարս ինչ նուիրականս , եւ հասեալ 'ի տեղի գե-  
րեզմանին իջուցանեն անդր զնոսա՝ առանձինն տա-  
ով նոցա հանգիստ , եւ քաժանեն արջենեաւ եւ շըն-  
ջրենեաւ : Ամբառնայ հողարլուր գերեզմանին յոյր  
վերայ անկեն գծառն արտասուաց եւ քնոյ :

Պարտ է մեզ կարեկից լինել ընդ մարդիկ, սիրեց-  
եալդ իմ որդեակ , զի սոքին իսկ հնդիկք՝ որոց այն-  
քան գորովայոյզք են սովորոյթք , եւ կանայքս իսկ  
գլխովին որոց այնքան գութ գորովոյ ցուցեալ էր  
առ իս՝ յաղաղակ մեծածայն խնդրէին յայնժամ զպա-  
տիժ պատուհասին իմոյ , եւ ազգք համայն յամէլին  
անկանել 'ի չու , զի հաճոյ թուէր նոցա տեսանել  
զքստմնելի տանջանս ուրումն երխտասարգի :

Ի հովտի ուրեք որ կայր 'ի հիւսիսակողմն կոյս  
ոչ ինչ հեռի 'ի գեղջէն մեծէ՝ ամբառնայր անտառակ  
չոճից եւ եղեւնեաց որ յորջորջէր Անտառակ Ար-  
եան : Առ 'ի գնալ անդր հարկ էր անցանել ընդ աւե-  
րակս միոյ 'ի հոյակապ յիշատակարանաց անտի՝ որոց

դանխուլ մնայ 'ի մէնջ սկիզբն կառուցման , այլ են նորա գործք վաստակոց ձեռին ժողովորդեան ուրուք այժմ անծանօթի : Ընդ միջակէտ անտառակին տարածանէր վայր կրկիսի՝ ուր մատուցանէին 'ի զոհ զկալանաւորս 'ի մարտի : Յաղթանակաւ տարան զիսանդր : Ամենայն ինչ պատրաստի վասն մահուան իւժոյ , կանգնի ցից Արէօքուայ , շոճիք , նշդարենիք եւ նոճք տապալ անկանին ընդ հարուածով կացնի . ամբառնայ փայտակոյտ խարուկին , հանդիսատեսք յօրինեն տեղիս շուրջ տեսանելեաց ոստովք եւ կոճեղքք ծառոց : Ամենայն ոք 'ի նոցանէ հնարի տանջանս , առաջի առնէ ոք զերծանել յինչն զմորթ գանկիս , այլ ոք բոցատոչօր խարել զաչս իմ հրաշէկ սա կերբք : Իսկ ես սկսանիմ զեղերերգ մահուս :

Ոչ ինչ երկիւղ է ինձ բնաւին  
'ի տանջանացդ , ո՛վ Մոսգոկոլկք ,  
Զի սիրտ արի կրբեմ յանձին :

Զեղ ձայնատուր լինիմ այժմիկ .  
Դուք կան զկանայս իսկ առաւել  
Արհամարհք յաչս իմ զըտանիք :

Որդին Միօքուայ՝ Ութալիսի  
Հայր իմ էարբ ջուր 'ի գանկունս  
Զերոց մարտկաց յոյժ անուանի :

Ո՛հ , ոչ երբէք կարասջիք դուք  
Յիմմէ աստի սըրտէ 'ի բաց  
Խըլել հառաչ հեղձամըղձուկ :

Խիղախեալ 'ի կռիւ 'ի լուր երգոյս՝ մի ոմն 'ի պատերազմողաց անտի նետիւ խոցեաց զբազուկ իմ, եւ ես ասեմ. «Շնորհ՝ ունիմ քեզ, եղբայր.»

Թէպէտ ժիրաժիր փութային 'ի գործ դահլիճք, այլ հանդերձանք պատուհասին իմոյ ոչ ելին յանդ՝ չեւ արեւու 'ի մուտս իւր խոնարհեալ : Ապա խորհուրդ հարցաւ 'ի Հմայողէն՝ որ արդեւ մի՛ ազմըկել զողիս ստուերաց եւ մինչեւ 'ի վաղիւ անդր մընայր ինձ գէտակն դեռ եւս ունել մահու : Այլ ոչ թողին հնդիկքն զանտառակն արեան, եւ լուցին հուր բոցածաւայ պարապելով 'ի խնջոյս եւ 'ի կայթս ոտից, զի անժոյժ մնային վայելել 'ի տեսարանն աղիողորմ եւ վաղ կազմ կալ եւ պատրաստ 'ի ծագել արշալուսոյն :

Սակայն տարածեալ արկին զիս յորսայս : Պարանք կապեալք զպարանոցէ իմմէ, զոտիցս եւ ըզբազկաց՝ ապսպարեալ կային ցցոց խորամուխ վարելոց 'ի յերկիր : Պատերազմիկք 'ի վերայ նոցին անկեալ ննջէին եւ չէր ինձ մարթ շարժել փոքր մի՛ առանց զգաստ լինելոյ նոցա : Գիշերն յառաջ խաղայ, երգք եւ պարք դադարեն տակաւ, նշոյլք շառագունեալք հատանին եւ եթ 'ի բոցոյ հրոյն՝ ոյր առաջի տակաւին է տեսանել զերթս ստուերաց վայրենեաց ոմանց : Ամենայն ինչ կայ 'ի քուն. եւ ըստ նուազելոյ աղմկի մարդկան առաւելու շշուկ անպատին եւ խառնածայն աղաղակաց զհետ գան հասանեն հեծեծմունք հողմոց յանտառին :

Ա՛յն ժամ էր՝ յորում հնդկուհի ոմն մանկամարդ զառաջինն անցեալ ընդ փորձ երկանոց՝ զարթնու յե-

դակարծ 'ի մէջ զիշերի , զի թուէր նմա լսել զճիշ  
անդրանկան իւրոյ՝ ինդրելով 'ի նմանէ զսնունդ  
քաղցրածաշակ : Ակնկառոյց յերկինս՝ ուր մահիկ լուս-  
նի թափառական շրջէր ընդ ամսս , խոկայի ընդ ճա-  
կատագիրն իմ . հրէչ ապաշնորհ թուէր ինձ Ադալա .  
թողո՛ւլ լքանել զիս 'ի սլահու տանջանացս , զիս որ  
առաւել յանձն առնուի տալ զանձն բոցոյ քան մեկ-  
նել 'ի նմանէ . եւ սակայն զգայի զի հանապազ սի-  
րելի էր նա ինձ , եւ զի ընդ նորա մեռանէի անտըր-  
տում :

Ի ծայրայեղ հաճոյս խթան իմն է դարթուցիչ՝  
առ 'ի տալ գիտել մեզ յօգուտ 'ի կիր արկանել ըզ  
վայրկեանն երագընթաց , իսկ 'ի մեծամեծ վիշտս ցա-  
ւոց ընդ հակառակն չգիտեմ զինչ ծանրակշիռ ածէ  
զմեօք թմրիր քնոյ : Ականողիք խոնջք յարտասուաց  
ընաւորապէս ճիգն գործեն փակել ի նինջ եւ այսպէս  
իմն վերնախնամ Տեսչութիւնն ի յայտ եկեալ երեւի  
մեզ մինչեւ յաղէտս մեր գլխովին : Տեղի ետու ընդ  
դէմ անձին ծանրաբեռն քնոյ զորպիսի երբեմն նիր-  
հեն եղկելիք : Տեսանէի յերազի թէ բառնային յինէն  
զըզթայս իմ եւ համարէի իմանալ ի սրտի զսփոխանսն՝  
զորոց առնումք մեք զփորձ՝ եթէ ձեռն օգնական  
խզեսցէ զկապանս մեր երկաթիս՝ յետ սաստկագոյն  
ճնշման ցաւոց :

Այնպէս խորին տպաւորէր յիս այս զգացումն՝  
զի ետ ինձ բանալ զարտեւանունս իմ ի լոյս : Ի շող  
լուսնակին՝ ոյր մի 'ի ճաճանչից սպրդեալ անցանէր  
ընդ մէջ կրկին ամպոց՝ նշմարեմ ընդ աղօտ պատկեր  
մեծահասակ եւ սպիտակափառ հակամէտ կախեալ

զինեւ, եւ պարապեալ ի լուծանել լռելեայն զհան-  
գոյց շղթայիցս: Եւ մինչդեռ կամէի ճիշ բառնալ, ա-  
հա ձեռնն՝ զոր անդէն եւ անդ ծանեայ՝ եխից զբե-  
րան իմ: Մի եւեթ մնայր պարան՝ եւ յանհնարից ի-  
մքն երեւէր հատանել զայն ՚ի բայ առանց հպելոյ ՚ի  
պատերազմիկ ոք որ բոլորով մարմնովն ծածկէր զայն  
ընդ իւրեւ: Զգեաց Ադալա զձեռն իւր յայն՝ եւ մար-  
տիկն զարթեաւ քուն ընդ արթունս եւ յարեաւ ՚ի  
նիստ: Արձանացեալ կայ Ադալա՝ ի նա զաչս իւր յառ-  
եալ: Կնդիկն այն կարծէ տեսանել զՈղին աւերակաց  
եւ դարձեալ ընկողմանի ի նիրհ՝ կարդալով առ թե-  
րափն իւր: Զերծաւ հանգոյցն: Յարուցեալ կանգնե-  
ցայ յոտին, բուռն հարի զհետոց ազատարարին իւրոյ,  
որ կարկառեաց առ իս զմի ծայր աղեղանն զորոյ ու-  
նէր զմիւսամէն: այլ քանիօն վտանգք շուրջ պատեալ  
պաշարեն զմեզ: Մերթ ՚ի գնալն մեր մերձ կայր մեզ  
հարկանիլ զվայրենեաց ընդ քնով անկելոց, մերթ յոս-  
տիկանաց ոք մատչի առ մեզ ի հարցփորձ, եւ Ադալա  
պատասխանի առնէ նմա փոխելով զյեղանակ ձայնին:  
Ճչեն մանկունք, հաջեն դամիրունք: Այն ինչ յաղիտա-  
ւոր շրջապատէն ելաք մեք արտաքս եւ ահա ոռնմունք  
ահագինք դզրդեն զանտառն: Բանակն յառնէ ի քնոյ-  
խիտ առ ինտ բորբոքին հրատք եւ տեսանին ար-  
շաւանք վայրենեաց սմէնայն ուստեք՝ ջահիւք վա-  
ռելովք: Իսկ մեք զահալէժ ընթանայաք յառաջ:

Մինչդեռ ծայրս արձակէր արեգակն ՚ի վերայ  
Աբալաքաց՝ վաղ իսկ հեռացեալ գոտանէաք մեք:  
Քանի՛ բարեբաստիկ զանձն իմ համարէի յորժամ  
միւս եւս նուազ ի միայնութեան անդ գտայ ընդ Ա-

դաւայ, ընդ Ադալայ՝ որ ազատարար ինձ եկաց, ընդ  
Ադալայ՝ որ զանձն իւր յաւիտեան փոխանակէր ի վե-  
րայ իմ: Պակասեցան բանք 'ի շրթանց իմոց, ան-  
կայ ի ծուեր առ նովաւ եւ ասացի ցգուտոր Սիմա-  
ղանայ. « Արդարեւ դուզնաքեայ իմն են մարդիկ, եւ  
եթէ այցելութիւն առ նոսա եղիցի յՈգւոց՝ յայնժամ  
են եւ ոչինչ: Ոգի ոմն ես դու որ յայց առ իս ելեր  
եւ ինձ չէ մարթ խօսել քո առաջի»: Ժպիտ ի դէմս՝  
ձգեաց Ադալա դձեռն իւր առ իս եւ ասէ. « Պարտ  
իսկ է ինձ գալ քեզ զկնի, որովհետեւ ոչ կամիս ա-  
ռանց իմ փութալ ի փախուստ: Յայսմ գիշերի սլար-  
գեւօք նուիրաց ողորցցի զսիրտ Հմայողին, արբե-  
ցուցի զդահիճս քո էութեամբ հրեղինաւ (\*), ի սէր  
քո արկի 'ի վտանգ զկեանս իմ զի դու ետուր զքոյդ  
վասն իմ: Այո՛, յաւել նա շեշտակի բանիւք՝ որ ար-  
հաւիրս յիս արկին, համբակզ կռապարիշտ՝ եր-  
կուտեք մատուցի զո՛հ: »

Ադալա դարձեալ յանձն արար ինձ զզէնսն՝ զոր  
հանապաղ կրէր յինքեան եւ ապա դարմանեաց զվէ-  
րըս իմ, եւ ջնջեալ զայն 'ի տերեւ բարենւոյ թա-  
նայր արտասուօք: Իսկ ես ասեմ. « Ասորասամ իմն է  
այդ զոր հեղուս 'ի վերայ վիրացս. » նա պատաս-  
խանի ետ եւ ասէ. « Խիթամ զի մի՛ գուցէ դա լիցի  
քեզ թոյն մահառիթ. » Եւ պատառեալ զմի 'ի ծած-  
կութից ծոցոյն՝ արար պատատ ինչ շուրջ զսոցուա-  
ծովս, եւ կապեաց զայն գիսակօք վարսիցն:

Արբեցութիւն որ ընդ երկար տեւէ առ վայրե-

(\*) Օղի:

նրա եւ ազգ իմն խօթութեան է առ նոսա, ոչինչ երկբայեմ զի խափան եղեւ նոցա զհետ մտանելոյ մեզ յառաջին անդ յաւուրս : Եւ ապա եթէ 'ի խընդիր ելին մեզ, հաւանաբար ընդ կողմանս արեւմտաց եղեւ այն, կտրծելով զի փորձ փորձեալ իցէ մեր երթալ հասանել 'ի Միսիսիփի . այլ մեք հետեւեցաք ընդ ուղին՝ որ յանխաղաց ասողն (\*) կոյս՝ ուղղելով զգնացս մեր ընդ մամռապատ կոճեղս ծառոց :

Ոչ անազան ապա 'ի միտ առաք զի խուհն ինչ եւ եթ շահեալ էր մեր ազատութեամբ անձին իմոյ Անչափ ամայութիւնք անապատին լայնատարած բանային յայնժամ առաջի աչաց մերոց . անփորձք 'ի կենցաղ անտառաց՝ զարտուղի անկեալ յարահետ ճանապարհէ եւ ըստ դէպս բախտին յառաջ ընթացեալ, զի՞նչ 'ի վերայ կայր մեզ հասանել : Յաճախ դէտակն յԱղալա՝ յուչ ածէի զվաղեմի վէպս Ագարայ՝ զոր Լուբեզայ տուեալ էր ինձ ընթեռնուլ, եւ ոյր հասեալ է համբաւ յանապատն Բերսարեայ 'ի վաղնչուց ժամանակաց՝ յորս ազգի մարդկան մարթ էր կեալ զերրակի կեանս կաղնեաց :

Արար ինձ Աղալա հանդերձ ինչ յերկրորդ կեղեւոյ ցախի, զի մերկ էի զրեթէ ամենեւին եւ պատրաստեաց ինձ արեխս հնդիկս 'ի մորթոյ մշկահոտ մկան եւ 'ի ստեւոյ խողկի : Եւ ես խնամ՝ ունէի զարդուց նորին : Մերթ դնէի 'ի զլուխ նորա պսակ 'ի կապուտակ մոլոչից՝ զոր գտանէաք յուղւոջ մերում 'ի հնդիկ գերեզմանս ապախտ եղեալս, եւ մերթ յօշինէի

(\*) Հիւսիս :

մանեակս կարմրահատիւք ազալիայց , եւ սալա սկոա-  
նէի ժպտել 'ի զնին կալով զարմանահրաչ գեղոյ նորա :

Եթէ երբէք հանդիպէաք գնացից գետոյ , ան-  
ցանէաք ընդ այն լաստափայտիւ եւ կամ 'ի լոյզ : Ա-  
դալա միով 'ի ձեռաց յուս իմ յենոյր , եւ զօրէն եր-  
կուց օդաշու կարապից , հատանէաք զմենաւոր ալիս :

Յաճախ 'ի տապ տօթաժամու տունջեան՝ խընդ-  
րէաք ապաստան ընդ մամուռիք մայրեաց . զի ամե-  
նայն ծառք փլորիտեանք՝ բաց 'ի մայրէն եւ 'ի կա-  
նաչ-կաղնւոյն՝ ծածկեալք են համակ սպիտակ մամ-  
ուով որ 'ի կողերց նոցին իջանէ մինչեւ յերկիր : Եթէ  
գիշերի՝ մինչդեռ ճառագայթարձակ նշողէ լուսին՝  
յակն անկանիցի քեզ յամայութեան անդ մարմանդի  
մին 'ի նոցունց առանձինն զգեստաւորեալ նովին ա-  
սերբ , թուի քեզ տեսանել ուրու ցնորական զհետ  
իւր ընդ քարչ ածելով զերկայնատուան դրօշակահան-  
դերձիցն : Տեսարանս այս գեղջուկ ոչ նուազ հաճոյ է  
աչաց եւ 'ի մեծապայծառ տունջեան , զի խուռն ե-  
րամք՝ թիթեռանց , փայլունակ ճանձից եւ տրօքի  
լոսաց , կանաչագեղ պապկայից եւ կապուտերանդ  
ազոաւուց իջեալ զադարեն անդր 'ի մամուռս եւ  
ընծայեն յայնժամ զճշգրիտ պատկեր սպիտակասուի  
գորգոյ , յորոյ վերայ գործաւորն եւրոպացի թուի  
ասդնեգործեալ ճճիս եւ թռչունս լուսափայլ :

Յայտոսիկ 'ի գեղածիծաղ վայրս ասպնջականու-  
թեան պատրաստեալս 'ի ձեռն մեծին Ոգւոյ , ընկող-  
մանէաք ընդ հովանեաւ 'ի հանգիստ : Յիջանել հող-  
մոց յերկնից առ 'ի տատանել զմայրին լայնատարած՝  
եւ ահա գլեակն օդական կառուցեալ յոստս նորա

հեղիկ ծածանէր թռչնովքն հանդերձ եւ ուղեւորօք հանդուցելովք 'ի քուն ընդ ապաստանարանաւ թեւոց նորա , եւ հառաչք բիւրաւորք ելանէին 'ի սրահակաց անտի եւ 'ի կամարաց շարժուն շինուածոյն , ո՛չ երբէք սքանչելիք հնոյ աշխարհին կարացին գալ 'ի կշիռ ընդ մեծվայելչութեան անապատական յիշատակարանիս :

Հանապազօր ընդ երեկս լուցանէաք հուր մեծաբոց եւ յօրինէաք զհիւղ ուղեւորութեան կեղեւով ծառոյ 'ի վերայ քառեակ ցցոց հաստատելով : Եթէ լինէր ինձ նետահար սպանանել հնդկահաւ մի վայրի , հաւփալ եւ կամ փասեան անտառաց , կախէաք զայնս առաջի կաղնոյն՝ զծայրէ երկայնաձիգ ցօղնոյ վարսելոյ յերկիր , եւ հողմոց արկանէաք ըզհող դարձուցանելոյ զճարակ որսորդին : Ճաշակէաք մամուռս որ կոչին ընդերք ժայռից , զշաքարաբուղիս կեղեւս ցարասոյ , եւ պինձորս մայիսի որ տային մեզ զհամ տանձի եւ մօրոյ : Թխաթոյր ընդուղենին՝ հացին եւ թուփ եւ մացառք մատակարարէին մեզ գինի 'ի սեղան : Մերթ երթայի 'ի մէջ եղեգանց 'ի խնդիր մատաղատնկոյ՝ ոյր ծաղիկ եղջերածեւ երկայնեալ՝ բերէր զնմանութիւն բաժակի ականակիտ ցօղոյ :

Օրհնէաք զՆախախնամութիւն որ յանզօր 'ի ծիւծաղկին եղեալ էր զայս ակն բիւրեղեայ՝ 'ի միջի ապականեալ ճահճաց , որպէս հաստատեաց զյոյս 'ի խորս սրտից խաթարելոց 'ի վշտաց եւ որպէս 'ի ծոցոյ աղետից կենաց ընդոստ եհան զառաքինութիւն : Եղո՛ւկ . սուղ ինչ ապա գտի զանձն սպարեալ

յանդորրաւէտ կերսլարանացն Ադալայ : Յորչափ ընթանայաք յառաջ՝ առաւել եւս երեւէր նա տխուր : Յաճախ զգոզանի հարկանէր առանց իրիք ինչ պատճառի , եւ զզլուխ իւր յանկարծ 'ի բաց դարձուցանէր : Տեսանէի զնա յառեալ 'ի յիս սիրայեղց աչօք՝ զորս տանէր յերկինս 'ի վեր խորին իմն թաղծութեամբ . դաղանի ինչ եւ եթ զարհուրեցուցանէր զիս խորհուրդ թապուեն 'ի խորս հոգւոյն զոր ընդ աղօտ նշմարէի յաչս նորա : Հանապաղ ձգեալ զիս առ ինքն , եւ դարձեալ մերժեալ 'ի բաց , ողեւորէր եւ եղծանէր զյոյս ակնկալեաց իմոց , այնպէս զի գտանէի զանձն իմ վերստին դարձ արարեալ 'ի նոյն կէտ՝ մինչդեռ կարծէի դոյզն ինչ ճանապարհ բանալ 'ի սրտին : Քանիցս անգամ ասաց նա ցիս . « Տարփաւորդ իմ անտիական , սիրելի ես դու ինձ հանգոյն ստուերաց անտառի զմիջաւորք , դեղանի որպէս զանապատ համօրէն ծաղկամբքն եւ սղոխիւք , թէ հեղում զանձըն դքեւ՝ սարսուռ զոսկերօքս ընթանայ , եւ իմով ձեռամբ թէ 'ի քոյդ հպիմ , թուի ինձ յայնժամ մերձենալ 'ի մահ : Աւուրք յառաջ՝ զհերս վարսից քոց արկ հողմն 'ի դէմս իմ , մինչդեռ հանգչէիր դու 'ի վերայ դրկաց իմոց , կարծեցի զգալ զմեղմաշօշափ ոգւոց աներեւութից : Այո՛ , տեսի ես զայծեմնիկս լերինն Օգոնայ , լուայ զիմաստս մարդկան յափրացելոց 'ի կենաց , այլ այն հեշտութիւն այծուց եւ իմաստութիւն ծերոց նուազ գտանէին հաճոյականք եւ զօրաւորք կան զքոյդ բարբառ : Ապա ուրեմն , հէք Շագդաս , չեղէց երբէք քեզ 'ի հարսն : »

Յաւերժական ընգդէմքն սիրոյ եւ կրօնից Ադա

լայ՝ մոռացումն գործւոյն եւ համեստութիւնն բարուց  
նորա , թռիչ հոգւոյն յիրս մեծամեծս եւ դիւրագր-  
գոութիւնն նորա ՚ի փոքունս , այս ամենայն յանդիման  
առնէին ինձ զնա էակ իմն անիմանալի : Չկարէր Ա-  
գալայ ընդ անզօր իշխանութեամբ լիւրով արկանել  
զայր ոմն : Զի զեղեալ ՚ի կրից՝ լի էր զօրութեամբ  
պարտ էր պաշտել զնա կա՛մ առեւ :

Եւ յետ գահավէժ ընթացից զգլխերս հնգետասան՝  
մտաք ՚ի շղթայս Ալեկանեան լերանց, եւ հասաք ՚ի մի  
՚ի ստեղանց Դընասայ գետոյ՝ որ անկանի յՕհիոյ : Օգ-  
նեալ ՚ի խրատուց Ագալայ՝ կառուցին աւակ մի եւ մա-  
տուցի՝ զնա խիժիւ շլորենուոյ՝ յետ կարելոյ ընդ միմեանս  
զկեղեւս եւ զարմատս եղեւնեաց : Ապա ելաք անդր  
ընդ Ագալայ եւ տուաք զանձինս յընթացս գետոյն :  
Զհնդիկ գլուղն Սդիգոյեայ՝ յուրանաձեւ գերեզմանօ-  
քըն եւ աւերակօք հիւղիցն տեսանէաք ՚ի ձախմէ-  
՚ի մի կողման սարաւանդի եւ թողաք յաջմէ զհո-  
վիանն Քէօուայ՝ յորոյ մինչեւ ՚ի սպառուած յանդիման  
գայր պատկեր խրճթացն Յորայ՝ կառուցելոց ՚ի կախ  
զճակատուէ համանուն լերին : Գետն որ վարեալ  
ածէր զմեզ, ընդ բարձրաբերձ հոսէր խարակս՝ յորոց  
՚ի ծայրս անդ երեւէր արեւն ՚ի մուտս : Այս խոր  
ամայութիւնք ոչ երբէք յերեսաց մարդկան էին ազ-  
մըկեալք : Տեսաք եւ եթ որսորդ զոմն հնդիկ՝ որ յեց  
յազեղն իւր եւ անշարժ կացեալ ՚ի սեպ ժայռի միոյ  
թուէր ՚ի լերին անդ արձան կանգնեալ ՚ի պատիւ  
Ոգւոյ անասատացն : Սգալա եւ ես լուռ եւ եթ  
կայաք ՚ի լութեան տեսարանիս . այլ յեղակարծ  
դուստրն այն սքսորանաց արձակեաց ընդ օդս բար-

բառ գորովալից եւ թաղծագին • երգէր նա զտարա-  
կայ հայրենիս իւր :

Երանի՛ որ ոչ տեսին  
Ըզծուխ տօնից օտարին ,  
Եւ 'ի խընջոյս եւ եթ նըստան  
'ի հայրենին 'ի սեղան :

Թէ Միսիսիփեայ կապուտակն Ազոաւ  
Առ փլորիտեանն ասէր Աննըման  
« Ընդէ՞ր տըխրագին հեծես դու այդքան •

Զիցե՞ն աստ քեզ բաւ  
Այս ջուրք գեղանիք ,  
Զըքնաղ հովանիք ,

Եւ ազգի ազգի արօտք 'ի ճարակ  
Զերդ քոյդ յանտառակ : »

Պատասխանի տայր յայնժամ  
Փախըստականն Աննըման •

— « Այո՛ , այլ բոյն իմ կայ եղեալ 'ի յասմիկ ,  
Ո՞վ դայն առ իս բերցէ այժմիկ •

Եւ դու ունիցի՞ս  
Զարեւ մարմանդիս :

Երանի՛ որ ոչ տեսին  
Ըզծուխ տօնից օտարին ,  
Եւ 'ի խընջոյս եւ եթ նըստան  
'ի հայրենին 'ի սեղան :

Յետ դըժուարաքայլ գնացից ընդ ուղին  
Բազմեալ ուղեւորն 'ի դէմս տըրտմական ,  
Հայի շուրջ զիւրեւ 'ի տանիս մարդկան •

Եւ ոչ գոյ նըմին

Ի տեղւոջ ինչ խիստ

Գըլխոյն տալ հանգիստ .

Երթայ արդ բաղխել ըզդուռն հիւղկան

Եւ յետոյ գըրանն

Եղեալ զաղեղն 'ի գետին՝

Հիւրոյթ խընդրէ վասն անձին .

Իսկ Տանուտէրն անդէն առնէ ինչ շարժուած

Եւ ուղեւորն հէգ եւ հողած

Ի առնայ աղեղամբն

Անդէն յանապատ :

Երանի՛ որ ոչ տեսին

Ըզծուխ տօնից օտարին ,

Եւ 'ի խընջոյս եւ եթ նըստան

Ի հայրենին 'ի սեղան :

Վէ՛պք հրաշապատումք ըզվառարանաւ ,

Խանդակաթ յեղմո՛ւնք սըրտի սիրելւոյ ,

Կարեւորք 'ի կեանս սովորո՛յթք սիրոյ ,

Զայնց՝ որ ոչ բընաւ

Թողին զհայրենիս ,

Լըցէք կեանս յաստիս :

Գերեզմանք նոցա գըտանին այժմիկ

Յիւրեանցն հայրենիք ,

Ուր արեգակն 'ի խոնարհ

Անդ իջանէ յիւրն 'ի մայր ,

Անդ են եւ ողբք բարեկամաց իսկ իւրեանց

Եւ անդանօր կացցեն անանց

Գեղ եւ հըրապոյր

Կրօնիցն այն անդոյր :

Երանի՛ որ ոչ տեսին  
Ըզժուխ տօնից օտարին ,  
Եւ 'ի խընջոյս եւ եթ նըստան  
Ի հայրենին 'ի սեղան :

Զայս օրինակ երգէր Ադալա , եւ ոչ այլ ինչ հա-  
տանէր զթել հեծեծանաց նորին՝ բայց միայն անզգա-  
ւի շրշիւն նաւակին 'ի վերայ ալեաց :

Յերկուս կամյերիս վայրս միայն արձագանդ նուաղ  
ընկալեալ զայնոսիկ , ետ ձայն երկրորդում առաւել  
անզօրի , եւ երրորդն եւս քան զեւս տկարագոյն՝ ա-  
րար նմին դարձուած . գողցես իմն ոգիք տարփաւո-  
րաց երկոցունց նմանավիշտ մեզ եղելոց՝ յանկուց-  
եալք 'ի սրտառուչ գեղգեղանացն , ախորժէին զյե-  
տին նուագս նորա կրկնել հառաչանօք՝ 'իլերին անդ :

Սակայն ամայութիւնն այն եւ ցանկ առընթե-  
րակաց տեսիլ սիրեցելոյ , եւ աղէտք իմ դլխովին  
վայրկեան 'ի վայրկենէ առաւելուին զտարփանս մեր :  
Զօրութիւն Ադս լայ տակաւ լքանէր զնա , եւ կրից  
ընդ մարմնոյն եկեալ 'ի կռիւ՝ ընկճէին զառաքինու-  
թիւնն նորա : Սնդուլ անդադար աղերսէր նա առ մայր  
իւր՝ կամելով իմն ողոքել զստուեր նորին զայրացեալ՝  
Մերթ ընդ մերթ հարցանէր զիս թէ ո՞չ արդեօք լը-  
սէի ձայն իմն ողբանուագ , կամ թէ ո՞չ տեսանէի  
բոցս արձակեալս 'ի խորոց երկրի : Իսկ ես վաստա-  
կաբեկ եւ խոնջ 'ի սպառ՝ այլ միշտ տողորեալ յըղձից  
համարէի զանձն իմ կորուսեալ անդարձ յանառացս  
'ի միջի . հարիւր անգամ կամեցայ գրկապինդ ունել  
զհալսն իմ 'ի մէջ բազկաց իմոց , հարիւր անգամ ա-  
ռաջի առնէի նմա կառուցանել հիւղ ինչ 'ի վերայ

գետափանցս եւ թաղիլ անդ 'ի միասին • այլ միշտ  
ընդդէմ եկաց նա ինձ , եւ ասէր ցիս • « Յուշ լիցի  
քեզ , սիրեցեալք իմ , զի այր պատերազմիկ առ հայ-  
րենիս եւ եթ պարտի զանձն իւր : Զի՞նչ իսկ իցէ  
կին առ պարտեօք քոյին՝ զոր ունիսդ առ 'ի  
լնուլ : Քաջաւերեա'ց , որդիդ Ութալիսեայ , եւ  
մի' երբէք քրթմնջեր ընդդէմ հրամանաց ճա-  
կատագրիդ : Սիրս մարդոյ հանգոյն է սպնգան գե-  
տոյ՝ որ մերթ ըմպէ վճիտ ալիս՝ 'ի պարզութեան օ-  
դոց , եւ մերթ ուռնու տղմաշաղախ ջրով 'ի մրկել  
երկնից զալիս : Միթէ կարիցէ՞ ասել սպունգն • Կար-  
ծէի զի ոչ բնաւ յառնիցեն մրրիկք , եւ զի ոչ երբէք  
լիցին բոցակէզք նշոյլք արեւու : »

Ո՛վ Ռընէ , եթէ խիթաս յամբոխմանց սրտի ,  
փախիր յամայութենէ աստի , զի մենաւոր են կիրք  
մեծասաստք , եւ տանել զնոսա յանապատ տեղիս՝ է  
տալ նոցա զօրութիւն անպարտելի : Ընկճեալք 'ի հո-  
գոց եւ յերկիւղէ առաջի կայր մեզ մատնել 'ի ձեռս  
հնդիկ ոսոխաց , կորնչել ջրահեղձ , հարկանել յօձից  
եւ գազանակուր լինել : Դժուարաւ գտեալ սնունդ  
խոշոր եւ անպիտան 'ի կերակուր , եւ ոչ գիտելով  
յո՛ ուրեք ածել զքայլս ոտից մերոց , աղէտք մեր թը-  
ւէլին ոչ եւս զօրել առաւելուլ՝ եւ ահա արկած ինչ  
եհաս 'ի լրումն նոցին :

Այն քսաներորդ եւ եօթներորդ ծագումն էր  
արեգական , յորմէհետէ մեկնեցաք 'ի հիւզից անտի •  
Լուսիքն հրեղ են(\*) սկիզբն անդրէն արարեալ էր ըն-

(\*) Ամիսն Յուլիս ,

Թացից իւրոց , եւ ամենայն ինչ գուշակ էր մրրկի : Ի ժամուն՝ յորում տիկնայք հնդկուհիք կախեն զոստոց սաքինւոյ զգաւազանն հերկոց . եւ յորում պապկայք ամրանան 'ի ներքս 'ի փապարս նոճեաց՝ Թանձրամած պարածածկէր երկին : Նուաղեցան ձայնք միայնութեան , տիրեաց լուծիւն յանապատին , եւ անտառք առ հասարակ կային յանշարժութեան : Ընդ հուպ դրնդիւնք որոտման 'ի բացէ երկարս ձգեալք յանտառս յայտոսիկ ժամանակակիցս երկրի , յարուցանէին աղմուկս փեմականս : Երկուցեալ յոզոզմանէ անձրեւաց՝ փութացաք հասանել յեզր գետոյն՝ եւ գտանել ապաստանարան 'ի միում անտառի :

Վայրն այն երկիր էր ճախճախուտ : Տաժանաւոր ճգամքք ընթանայաք յառաջ ընդ կամարաւ գեղձից ընդ մէջ որթաանկոց՝ լեղակաց՝ լուրիայց՝ պատաղիճ լիանաց՝ որ խափան լինէին ոտից մերոց իբրեւ զվարմս ծուղակաց : Գետինն ըսպընգանման տատանէր շուրջ զմեօք , եւ յիւրաքանչիւր վայրկենի մերձ կայր մեզ վտանգ ջրահեղձ սատակելոյ 'ի ճահիճս անդ : Ճճիք անհամարք եւ չիղջք անհեթեթք կուրացուցանէին զաչս մեր , օձք բոժոժաւորք շէլին յամենուստ , եւ գայլք եւ արջք եւ գորշուկք եւ վագերք փոքունք՝ որ գային Թաքչիլ յայտոսիկ առանձնոցս՝ ընուին զնոսա 'ի մոնչիւնս իւրեանց :

Այլ տակաւ Թանձրանայ խաւար . ամպք վայրահակք մտանեն ընդ հովանեաւ անտառաց , պատառի մածուած միգին , եւ կայծակն արագաթռիչ ձգէ զհետ իւր շեղանկիւն իմն հրեղէն : Հողմ սաս-

տիկ շնչեալ յարեւմտից՝ թաւալէ զամպս զիրերօք ,  
յերկիր անտառք խոնարհին , բանի երկին խիտ առ  
խիտ հարուածովք շանթից , եւ ընդ ծերպս նորա  
նշմարին երկինք նոր եւ դաշտք բոցակէզք : Տեսա-  
րան որպիսի՝ ասեղ եւ մեծաշուք : Ի կայծականց  
հուր առեալ բորբոքին անտառախտք , ծաւալի հըր-  
դեհն 'ի սիւլա հանգոյն բոցանիւթ վարսի , սիւնք  
փայլատականց եւ ծխոյ շուրջ գան զամպրոսպօք՝ յո-  
րոց հատանին կայծակունք 'ի համաճարակ հրդեհին :  
Յայնժամ Ոգին Մեծ ծածկէ զԵրինս թանձրամած  
խաւարաւ : Ի ծոցոյ լայնատարր այսր Ահի ելանէ 'ի  
վեր մռնչիւն շիտթ խառն ընդ գոչիւն հողմոց , ընդ  
հեծեծմունս ծառոց , ընդ ոռնմունս դազանաց վայ-  
րենեաց , ընդ ճարճատիւն հրդեհին եւ ընդ կրկին  
անկման շանթին՝ որ շէ 'ի շիջանելն 'ի ջուրս անդ :

Չէ գանխուլ 'ի Մեծէ Ոգւոյն՝ զի յայնմ վայրկե-  
նի ոչ զոք տեսի բայց միայն զԱդալա եւ 'ի նա եւ  
եթ խորհեցայ : Ընդ հակամէտ կոծեղք ցարասւոյ՝ ե-  
հաս ինձ պատսպարել զնա յուղխիցն անձրեւաց : Ես  
ինքնին նստեալ ընդ ծառոջն եւ 'ի վերայ ծնգացս  
բարձեալ զտարփաւորն իմ , եւ 'ի մէջ ձեռաց իմոց  
ջեռուցեալ զոտս նորա բոկանիս՝ բարեբաստիկ զան-  
ձըն իմ համարէի քան զնորահարսն ոք որ զառաջինն  
խմանայ յարզանդի իւրում զընդոտ կայտիւ նախա-  
խայրւոյն :

Եւ մինչդեռ ականջէաք աղմկաց մրրկին՝ զգա-  
ցի յեղակարծ զարտօսր Ադալայ 'ի վերայ լանջաց ի-  
մոց , աղաղակեցի եւ ասեմ . « Ամպրո՛ս սրտի , իցէ՞  
ինչ այս շիթ անձրեւաց քոց : » Ապա սերտիւ գիրկս

արկեալ սիրեցելոյս՝ ասեմ. « Ո՛վ Ադալա , բան մի թա-  
գուցանես դու յինէն , բա՛ց ինձ զսիրտ քո , գեղեցի-  
կըդ իմ , բարւոք եւ ՚ի ճահ դիպեացի այդ , յորժամ  
բարեկամ ոք հայեսցի ՚ի հոգւոջ մերում : Պատմեա՛  
ինձ զայլ գաղտնիս վշտացդ՝ զոր բուռն անձին ա-  
րարեալ լուես դու ՚ի սպառ : Ա՛հ , տեսանեմ ես ա-  
հա , դու զհայրենիս քո ողբաս : » Իսկ նա ՚ի վերայ  
էած անդէն եւ ասէ . « Որդի մարդկան , ի՞բր կարա-  
ցից ողբալ զհայրենիս իմ , մինչդեռ հայր իմ չէր  
յերկրէ անտի արմաւենեաց : » Յայնժամ խորին իմն  
հիացմամբ յաւելի եւ ասեմ . « Եւ զի՛նչ , ո՞չ հայր  
քո յերկրէ անտի արմաւենեաց էր : Ո՛վ , աղէ՛ ու-  
րեմն , ած զքեզ յերկիր այսր , տուր ինձ պատաս-  
խանի : » Ադալա զայսոսիկ բանս խօսեցաւ եւ ասէ .

« Մինչչեւ մօր իմոյ ածեալ ՚ի հարսնութեան իւ-  
րում առ պատերազմողն Սիմազան ստրուկս երեսուն՝  
գումէչս քսան՝ հարիւր մար իւղոյ բալուտից՝ յիսնեակ  
մորթս կղբու եւ այլ բազում ճոխութիւնս , գիտէր  
նա զայր ոմն ՚ի սպիտակաց : Մայր մօր իմոյ սրսկեաց  
նմա ջուր յերեսս , եւ բռնադատեաց զնա լինել կը-  
նութեան վեհազինն Սիմազանայ՝ որ զտիպ արքայական  
բերէր ՚ի դէմս եւ պատուասիրէր ՚ի ժողովրդոց՝  
իրբեւ զոմն ոգի : Սակայն մայր իմ ասէ ցամուսին իւր  
նորասպակ . Յղացեալ եմ յարգանդի , հա՛ր , սալան  
զիս : Իսկ Սիմազան սպառասխանի տուեալ ասէ .  
Ոգին Մեծ պահեսցէ՛ զիս յայդպիսւոյ դժնդակ նգոր-  
ծոյ . ոչ երբէք անդամահատ արարից զքեզ , ոչ եր-  
բէք ՚ի քէն հատից ՚ի բաց զքիթ քո եւ զականջս ,  
զի անկեղծիկ ոմն եղեալ ես դու , եւ ոչ բնաւ պատ-

րեցեր զանկողինս իմ : Պատու ընդերաց քոց լիցի եւ իմ , եւ յետ չուոյ թռչնոյն որդաստանեայց եկից քեզ 'ի յայց , յորժամ ծագեսցէ լուսինն երեքտասաներորդ : Ի ժամանակին յայնմիկ պատառեցի զորովայն մօր իմոյ , եւ սկսայ աճել 'ի հասակ՝ սէգ եւ հպարտ իբրեւ զՍպանուհի ոք եւ որպէս զսմն 'ի վայրենեաց : Մայր իմ արար զիս քրիտոռնեայ , զի Աստուած նորա եւ Աստուած հօր իմոյ լիցի եւ ինձ յԱստուած : Յետ այսորիկ վիշտք տարփանաց եկին հասին 'ի վերայ նորա , եւ էջ նա 'ի զարդարեալ նկուղն ստորերկրեայ մորթովք էրէոց , ուստի ոչ ումեք մարթ է արտաքս ելանել : »

Զայս այսպէս վիպեաց Աղալա , եւ ես ասեմ . « Ո՞ ուրեմն էր հայր քո , որբդ չարաբաստիկ , յո՞ր անուն կոչէր 'ի մարդկանէ յերկրի աստ , եւ զո՞ր յորջորջանս ունէր առ ոգիս : » Եւ ասէ Աղալա . « Ոչ երբէք եղեւ ինձ լուանալ զոտս հօր իմոյ , զայս միայն գիտեմ՝ զի կեայր նա ընդ քեռ իւրում 'ի Ս. Օգոստինոս , եւ զի հաւատարիմ առ մայր իմ եկաց մինչ 'ի սպառ . Փիլիպպոս անուն էր նորա առ հըրեշտակս , եւ Լորեզ 'ի մարդկանէ կոչէր : »

Ի լուր բանիցս այսոցիկ բարձի ճիչ այնպիսի՝ որ թնդաց յողջոյն միայնութեան անդ , եւ ազմուկ կրբից իմոյ խառնեցաւ ընդ շովինդն փոթորկին : Սեղմեալ զԱղալա առ սրտիւ իմով՝ գոչեցի հեկեկանօք եւ ասեմ . « Քոյր իմ , ո՞վ գուստր Լորեզայ , գուստր բարերարին իմոյ » : Իսկ Աղալա զգողանի հարեալ՝ խնդրէր յինէն զվասնէրն ամբոխմանս , այլ իբրեւ գիտաց զի էր Լորեզ ասպնջականն այն մեծահոգի՝ որ

ընկալեալ էր զիս յորդեգրութիւնն 'ի Ս. Օգոստինոս,  
եւ զոր թողեալ լքեալ էր իմ առ 'ի կալ յազատու-  
թեան՝ նոյն ինքն եւ Ադալա ըմբռնեցաւ 'ի յոյզս եւ  
'ի բերկրանս :

Առաւելազանց իմն էր արդեօք եղբայրականս  
այս մտերմութիւն՝ որ դայր յայց ելանել մեզ եւ  
կցորդել զսէր իւր ընդ մերումս : Այնուհետեւ վայ-  
րապար եղեն մարտք Ադալայ, 'ի զո՛ւր տեսանէի զնա  
զի զմի 'ի ձեռաց իւրոց արկանէր 'ի ծոց իւր եւ նո-  
րանշան իմն առնէր շարժուած . արդէն իսկ գրկա-  
պինդ կալեալ էր իմ զնա . արբեցեալ 'ի շնչոյ նորա ,  
եւ արբեալ իսկ միանգամայն զամենայն զկախարդանս  
սիրոյ 'ի շրթանց նորա : Ի վեր առեալ զաչս իմ յեր-  
կինս 'ի նշոյլ փայլատականց՝ ունէի զհարսն իմ 'ի վե-  
րայ բազկաց իմոց առաջի երեսաց Մշտնջենականին :  
Հանդէս հարսանեկան՝ արժանաւոր ազետից մերոց եւ  
մեծութեան սիրոյս , անտառք վեհինաձեմք՝ որ զլիա-  
նըս ձեր եւ զգմբեթարդս շարժեալ տատանէիք իբրեւ  
զվարագոյրս մահճաց մերոյս սրսկապանի , սոճիք հը-  
րախանձք՝ որ զհարսանեաց մերոց յօրինէիք զՉահս ,  
գետ յորդախաղաց , լերինք ահեղամուռնչք , բնու-  
թիւն վսեմ եւ ահարկու , ո՞չ ասպաքէն հանդերձանք  
իմն էիք դուք կաղմք եւ պատրաստ յըմբռնել զմեզ  
'ի պատրանս , եւ չեղե՞ւ ձեզ մարթ ծածկել առ վայր  
մի 'ի խորհրդաւոր արհաւիրս ձեր զերանութիւն առն  
միտջ :

Անդոր իմն այնուհետեւ Ադալա ցուցանէր յան-  
ձինն ընդդիմութիւն . մերձենայի 'ի պահն երանաւէտ,  
եւ ահա յեղակարծումն նշոյլ սաստիկ ցոլացեալ 'ի


վայլատակմանէ շանթի՝ ակօսէ զթանձրութիւնս ստուերաց , ընու զանտառն 'ի ծծումբ եւ 'ի լոյս եւ խորտակեալ արկանէ ծառ մի առ ոտիւք մերովք : Խոյս տամք 'ի բաց : Այլ ո՛վ սքանչելեացս . . . 'ի լուութեան անդ՝ որ զհետ գայ յաջորդէ , լսեմք մեք զգանգիւն զանգակի : Երկաքանչիւրքս 'ի միասին խռովեալք՝ ունկն դնէաք աղմկին որ նորանշան իմն թուէր մեզ յանապատի անդ : Ի նմին վայրկենի լսելի լինի հաջիւն շան 'ի բացէ՝ որ մերձ հասեալ ապա առ մեզ յաւելու զաղաղակ ձայնին եւ առ ոսս մեր կաղկանձէ առ խնդին , միայնակեաց ոմն ծերունի կրելով լապտեր փոքր 'ի ձեռին զհետ գայր շանն՝ անցեալ ընդ խաւարչտին ուղիս անտառին : Իբրեւ ետես նա զմեզ , աղաղակեաց եւ ասէ . « Օրհնեա՛լ է Աստուած . ընդ երկար եղեւ ապաքէն զի 'ի խնդիր չրջիմ ձեզ : Ի սկզբան մրրկին զգաստ եղեւ զձէնջ շուն մեր եւ առաջնորդեալ ամ զիս մինչեւ ցայսր : Բարերա՛ր Աստուած , զիա՛րդ մատաղատիք դեռ եւս ես : Հէ՛ք մանկունք . զիա՛րդ ի տառապանս կան անկեալ : Օ՛ն , երթիցուք , բերի ընդ իս արջենի մի եւ լիցի այն բաւական տիկնոջս մանկամարդի , գտանի եւ գոյզն ինչ գինի 'ի հաղաղակի մերում : Բարեբանեալ է Աստուած յամենայն գործս իւր , մեծ է ողորմութիւն նորա , եւ բարութեան նորա չիք վախճան : »

Աղալա կայր առ ոտս առնն կրօնաւորի , եւ ասէր ցնա . « Պետդ աղօթից , քրիստոնեայ եմ ես . երկինք յղեն զքեզ առ իս 'ի փրկութիւն անձին իմոյ : » Յոսն կանգնեաց զնա Անապատականն՝ ասելով . « Դուստր իմ , սուլորաբար 'ի մրրկի հնչեցուցանեմք

ղղանգակն Գարողատեղւոյն՝ առ 'ի կոչել զօտարան-  
կանս, եւ ըստ օրինակի եղբարց մերոց Ալպեանց եւ  
Լիբանանու՝ ուսուցանեմք շան մերում գտանել զհետս  
ուղեւորաց մոլորելոց : » Իսկ ես հազիւ 'ի վերայ կա-  
յի բանից Անապատականին, եւ մարդասիրութիւնն  
այն յոյժ դեր 'ի վերոյ թուէր ինձ քան զքնութիւն  
մարդկեղէն, եւ կարծէի զանձն յերազի : Ի լոյս  
փոքրկանն լապտերի զոր ունէր կրօնաւորն՝ նշմարէի  
ընդ ազօտ զմօրուս նորա եւ զհերս համակ թացեալս  
'ի ջուրց, ոտք նորա եւ ձեռք եւ դէմք երեսաց արիւնա-  
մածք 'ի տատասկաց էին ցտեալք : Ուր ուրեմն գո-  
չեցի եւ ասեմ. « Ո՛վ ծերունի, որպիսի՛ սիրտ բե-  
րեա գու յանձին, դու՛ որ ոչ երբէք երկեար կորնչել  
շանթահար : » Եռանդեամբ իմն պատասխանի ետ  
Հայրն եւ ասէ : « Երկնչե՛լ, մինչդեռ այլք կան 'ի  
կորուստ, եւ ինձ մարթ է լինել նոցա պիտանի .  
յոյժ իսկ անարժան լինէի յայնժամ ծառայ Քրիստո-  
սի : » Իսկ ես ասեմ. « Բայց գիտե՞ս զի չեմ ես քրիս-  
տոնեայ : » Պատասխանի ետ Անապատականն եւ աս-  
սէ . « Պատանի դու, հարցի՞ ինչ ես 'ի քէն զկրօնից  
քոց, զի ոչ ասաց Յիսուս . Արիւն իմ լուանայցէ զայս  
ոք եւ ո՛չ զայն . մեռա՛ւ նա վասն հրէի եւ հեթա-  
նոսի, եւ զամենայն ազգ մարդկան համարեցաւ նա  
եղբարս եւ տառապեալս : Դուզնաքեայ ինչ է՝ զոր  
առնեմս արդ վասն ձեր, եւ գտջիք դուք այլուր բա-  
զում այլ օգնականութիւնս, այլ ոչ երբէք քահա-  
նայք ճոխասցին ի փառսն : Զի՛նչ իսկ եմք մեք, միայ-  
նակեացքս ապիկարք, ո՞չ ապաքէն անհարթ գործիք  
երկնաւոր վաստակոց : Ե՛հ, ո՞ր այն իցէ զինուոր վա-

տասիրտ՝ որ ընկրկի 'ի փախուստ, մինչդեռ պետ նո-  
րա խաչ 'ի ձեռին եւ պսակ փշեայ 'ի ճակատուն՝ ըն-  
թանայ զառաջեալ 'ի թիկունս հասանել մարդկան ։»

Ի բանից աստի լի եղեւ սիրտ իմ զարմացմամբ  
մեծաւ, արտասուք հիացման եւ գորովոյ իջին յաչաց  
իմոց ։ Եւ ասէ Քարոզողն . « Սիրեցեալ որդեակք իմ,  
յանտառս յայտոսիկ հովուեմ զփոքրիկ հօտ եղբարց  
ձերոց վայրենեաց ։ Քարայր իմ ոչինչ հեռի աստի՝  
կայ 'ի լերին անդ, եկա՛յք առ իս ջեռնուլ առ հրով՝  
եւ թէպէտ ոչ զղիւրութիւնս կենաց՝ սակայն գտջիք  
անդանօր ասպատանարան մի, եւ պարտ է ձեզ  
դարձեալ գոհանալ ընդ այս զաստուածային բարու-  
թենէն՝ զի են մարդիկ բազումք, որ յայդմանէ իսկ  
գտանին զրկեալք ։



## ԵՐԿՐԱԳՈՐԾՔ

Են՝ են արդարք՝ որոց ա՛յնքան յանդորրու կայ խիղճ մտաց՝ զի չէ մարթ հուսկ երթալ առ նոսա առանց մասնմուտ լինելոյ խաղաղութեանն՝ որ ծաւալեալ սիուի՝ ՚ի սրտից նոցա եւ ՚ի բանից, որպէս օրէն է ասել : Յորչափ միայնակեացն բարբառէր, զգայի զի ՚ի ներքս յիս խաղաղէին կիրք, եւ մրրիկն իսկ այերաց թուէր հեռանալ ՚ի ձայնէ նորա : Ընդ հուսկ փարատեցան ամպք առ ՚ի տալ մեզ թողուլ զառանձնոցն մեր : Ելաք մեք արտաքս յանտառէն եւ սկսաք մագլել ՚ի վեր ընդ առապարս բարձու լերին միոյ : Զառաջեաւ ընթանայր շունն կրելով զշիջանուտ լապտերն՝ կախեալ զծայրէ գաւազանին : Իսկ իմ կալեալ զձեռանէ Աղալայ՝ զհետ գնայաք քարոզողին : Յետս զարձեալ յաճախ հայէր նա ՚ի մեզ, ՚ի գութ շարժեալ ընդ աղէտս մեր եւ ընդ գալարութիւն տիոց մերոց : Զպարանոցէ նորա կախեալ կայր մատեան մի, եւ ինքն յենոյր ՚ի ցուս սպիտակ : Բարձրահասակ էր նա, գալկաղէմ եւ վտիտ, եւ ՚ի կերպարանացն երեւէր պարզ եւ անկեղծիկ՝ ոչ բերելով յանձին զմեռելատիսլ եւ զաղաւաղ նկարագիր առն ուրուք առանց կրից ինչ ծնելոյ : Դժնդակ եղեալ աւուրք նորա երեւէին, եւ խորշոմք ճակատուն

ցուցանէին զչքնաղ սալիս կրիցն բուժելոց առաքի-  
նութեամբ եւ սիրովն Աստուծոյ եւ մարդկան : Ի  
խօսել իւրում առ մեզ կանգուն յոտին եւ անշարժ  
մօրուսք նորա երկայնատէգք , աչք նորա սլարկեշ-  
տօրէն անկեալք 'ի խոնարհ եւ սիրայորդոր ձայն  
բարբառոյն , այս ամենայն անդորր ինչ եւ վսեմական  
յայտ առնէին 'ի նմա : Ո՛րք եւ ետես իբրեւ զիս  
զհայրն Ոսրի միայնակ ուղեւորեալ ցպով իւրով եւ  
ժամագրօք ընդ անապատն , արդարեւ 'ի միտ էառ  
նա զճշգրիտ պատկեր քրիստոնեայ ուղեւորի ուրումն  
'ի վերայ երկրի :

Յետ վտանգաւոր ընթացից կիսաժամու ընդ ձա-  
նապարհս լերինն՝ հասաք 'ի քարայր քարոզողին :  
Մտաք անդր 'ի ներքս ընդ մէջ բաղեղանց եւ խոնա-  
ւուտ տղտենեաց՝ որ յանձրեւաց անտի խլեալ՝ անկ-  
եալ էին 'ի քարաժայռից : Չէր անդ այլ ինչ բայց  
միայն գորգ իմն յօրինեալ 'ի սաղարթուց բարենւոյ ,  
հաղաղակ մի առ 'ի հանել ջուր , անօթք ինչ փայ-  
տեղէնք , բահ մի , եւ օձ ընտանի , եւ 'ի վերայ վիմի՝  
որ պաշտէր իբրեւ զսեղան՝ եղեալ կայր խաչ մի եւ  
մատեանն քրիստոնէից :

Այրն այն հինաւուրց փութացաւ վառել հուր  
ցամաքուտ լիանօք , եւ լսեալ եզիպտահատ 'ի մէջ  
կրկին քարանց՝ արար անտի քաքար ինչ , եւ եդ  
զայն ընդ մոխրով առ 'ի յեփ : Եւ իբրեւ էառ այն 'ի  
հրոյ անտի ոսկեզօծ իմն երանգ գեղեցիկ , պաշտեաց  
մեզ զայն դեռ եւս ջերաջերմ , եւ սեր ընկուզոյ 'ի  
հացեայ անօթի : Ընդ երեկս պայծառագոյն սլարդեալ  
էին երկինք , ծառայն Մեծի Ոգւոյն առաջի արար

մեզ երթալ բազմել 'ի մուտս քարայրին : Չոգաք մեր անդր ընդ նմա, ուստի տեսարան լայնատարած բանայր մեզ յանդիման : Մնացուածք ամպրոպին դիր եւ տար էին ցրուեալք յարեւելս կոյս , եւ բոցք հրդեհին բորբոքելոյ ընդ անտառս 'ի շանթից թօթափելոց փայլէին դեռ եւս 'ի հեռուստ : Առ ստորոտովք լերինն՝ ողջոյն անտառակ մի շոճեաց տապալեալ կայր 'ի մօրի անդ , եւ գետն խառն 'ի խուռն թաւալէր ալեօքն զկաւս կակուղս , զկոճեղս ծառոց , զգիակունս անասնոց , եւ զմեռեալ ձկունս՝ ոյց փորք արծաթիք ծածանէին 'ի ծուփս անդ ջուրց :

Ի միջավայր տեսարանիս պատմեաց Ադալա ըզ վէպս մեր առ ալեւորն այն ոգի լերինն : Փղձկեցաւ սիրտ նորա, եւ արտասուք իջին ընդ մօրուս նորա , եւ ասէ ցԱդալա . « Որդեակ իմ , պարտ իսկ է վերաբերել առ Աստուած զտառապանս ձեր՝ յորոյ 'ի փառս գործեալ է ձեր իրս այդքանիս , եւ հանդուսցէ՛նա զձեզ : Հայեցարուք զի ծխեն անտառք , ցամաքին հեղեղք , խուսափին ամպրոպք . համարի՞ք զի որ կարողն է ցածուցանել զայսպիսի մըրիկ , անհնար ինչ իցէ նմա խաղաղել զամբոխմունս սրտի մարդոյ : Եթէ չիք ձեր պատսպարան լաւագոյն , սիրեցեալ դուստր իմ , պատրաստեցից ձեզ տեղի 'ի մէջ հօտիս՝ զոր բարեբաստիկ գտայ կոչել առ Յիսուս : Ուսուցից զՇագդասս , եւ տաց քեզ զնա յամուսին , երբ եւ այդըմ լիցի արժանի : »

Ձայս իբրեւ ասաց , փարեցայ զծնգովք միայնակեցին հեղուվ արտասուս խնդութեան , իսկ դաւուկ մահադէմ պատեաց զերեսս Ադալայ :

Յարոյց զիս ծերունին մարդասէր գորովանօք ,  
եւ յայնժամ յակն ինձ անկաւ զի ծայրատեալք էին  
երկոքին ձեռք նորա : Վաղվաղակի ՚ի միտ էառ Ա-  
դալա զաղէտս նորա եւ գոչեաց . « Խուժադո՛ւժք : »

Ի ժպիտ քաղցր պատասխանի ետ Հայրն եւ ա-  
սէ . « Գուստր իմ , զի՞նչ իսկ իցէ այս առ այնօքիւք  
զորս կրեաց Տէրն իմ՝ Աստուած գոլով . եթէ վիշտս  
ինձ ետուն հնդիկքն կռապարիշտք , կոյրք են նոքա  
ողորմելիք՝ յորս յաւուր միում ծագեսցէ Աստուած  
լոյս ՚ի նոսա : Առաւել սիրելիք են ինձ նոքա չար-  
եօքն զոր ածին ՚ի վերայ իմ : Ոչ կարացի կալ մնալ  
անդէն ՚ի հայրենիս իմ , ուր դարձ արարեալն էի՝ եւ  
ուրանօր զշիտոյ ոմն ականաւոր արար ինձ պատիւ  
կամելով տեսանել զայսոսիկ անշուք նշանակս առա-  
քելութեան իմոյ : Եւ զի՞նչ վարձ փառաւորագոյն  
մարթ էր ինձ ընդունել ՚ի վաստակոց իմոց քան առ-  
նուլ հրաման ՚ի գլխաւորէն մերոյս կրօնի ձեռօք ծայ-  
րատելովք պաշտել զգոհն աստուածային : Չմնայր  
ինձ այլ ինչ յետ այսպիսւոյ պատուասիրութեան՝ բայց  
միայն գուն գործել առ ՚ի կալ մնալ արժանաւոր ՚ի  
պաշտամանն յայնմիկ : Գարձ արարեալ եկի յԱշխար-  
հըն—նոր սպառել զնշխարս կենաց իմոց սպասաւոր-  
եալ Աստուծոյ իմոյ : Սմք են իբրեւ երեսուն , յոր-  
մէհեաէ բնակեմ ՚ի միայնութեան աստ , եւ վաղիւ  
անցցեն ամք քսան եւ երկու զի իբրեւ ՚ի տան բը-  
նակեմ ՚ի քարաժայռիս : Ի հասանել իմում ՚ի վարս  
յայսոսիկ , ոչ այլ ինչ գտի աստ՝ բայց ընտանիս ո-  
մանս թափառականս որ վայրենաբարոյք էին եւ յոյժ  
եղկելիք : Խօսեցայ առ նոսա բանս խաղաղութեան եւ

բարք նոցին ամոքեցան տակաւ : Առ ոտամբ լերինս համախմբեալ կեան նոքա այժմիկ : Պէտ արարի անձին ուսուցանելով նոցա զճանապարհս փրկութեան , կրթել եւ զնոսա 'ի նախկին արուեստս կենաց , բայց ոչ անցանելով արտաքս ըստ սահմանն , եւ զարն պարկեշտակրօնս պահեցի 'ի պարզութեան իւրեանց՝ որ զնոցայն յարդարէ զերջանկութիւն : Այլ զի մի՛ նեղեցին նոքա յերեսաց իմոց , առանձնացեալ կամ ընդ քըւաւ ժայռիս , ուր գան խորհուրդ յինէն հարցանել . աստանօր հեռի 'ի մարդկանէ՝ հիացեալ զարմանամ ընդ Աստուած 'ի մեծութեան ամայութեան վայրացս , եւ կամ պատրաստ առ 'ի մահ՝ զոր աւետեն ինձ աւուրք իմ զառամեալք :

Ի վախճան բանիցս այսոցիկ՝ միայնակեացն անկաւ 'ի գուճս , եւ մեք ըստ օրինակի իւրում արարաք զնոյն : Բարձրաբարբառ ձայնիւ սկսաւ նա կալ յաղօթըս , եւ Ադալա առնէր պատասխանի : Փայլատակունք համերք բանային դեռ եւս զերկինս ընդ արեւելս , եւ 'ի վերայ ամպոց արեւմտից երբեակ արեգակունք փայլէին 'ի միասին : Աղուէսք ոմանք վայրատեալք 'ի մրրկէն՝ զսեաւ ցռուկս իւրեանց ձգեալ երկարէին զեզերքք վախուտ վհից , եւ լսելի լինէր սօսափիւն տնկոց՝ որ ցամաքեալ 'ի հողմն երեկօրին՝ 'ի վեր ամենուստ ամբառնային զխոնարհեալ ցօղունս իւրեանց :

Մտաք անդրէն 'ի քարայրն ուր անապատականն յարդարեաց Ադալայ անկողին 'ի մամոռոյ նոճեաց : Նուազուճն խոր նկարեալ կայր յաչս եւ 'ի շարժուածքս կուսին . հայէր նա 'ի հայրն Ոսրի՝ որպէս թէ

կամելով դադարնի ինչ հաղորդել նմա, այլ թուէր զի արգելոյր յիմեմնէ, յերեսաց իմոց թէ յամօթոյ եւ կամ յանօդտութենէ՞ խոստովանութեանն՝ ոչ գիտեմ : Լուայ զի յարեաւ նա 'ի մէջ գիշերի, խնդրէր ըզմիայնակեացն . այլ նորա տուեալ նմա զանկողին իւր առ 'ի հանգիստ՝ երթեալ էր 'ի կատար լերինն կալ 'ի զնին գեղոյ երկնից, եւ ազօթել առ Աստուած : Ի վաղիւ անդր ասէր ցիս Հայրն եթէ սովորոյթ իւր էր այն 'ի ձմերայնի խկ գլխովին՝ զի սիրելի էր նմա տեսանել զհողմատատան գագաթունս անտառախիտ ծառոց կապտելոց 'ի սաղարթուց, զթռիչս ամպոց ընդ երկինս, եւ լսել զգոչիւնս հողմոց եւ հեղեղաց 'ի միայնութեան անդ : Քոյրն իմ ուր ուրեմն հարկեցաւ դառնալ անդրէն 'ի մահիճս իւր, եւ անկաւ 'ի քուն թմբրութեան : Եղո՛ւկ, զի ես պատարուն 'ի յոյս՝ 'ի տկարութեանն Աղալայ չտեսի այլ ինչ Քայց զվաղանցիկ նշանակս վաստակաբեկ խոնջման : Ի վաղիւ անդր գարթեայ 'ի քնոյ 'ի ձայն երգոց ծիրանեկաց եւ ծաղրասէր հաւուց՝ որոց եղեալ կային բոյնք յակակիայս եւ 'ի դավնիս՝ որ շուրջ զքարայրիւն պատէին : Չոգայ քաղել վարդ մի մակնոլիական եւ եղի զնա՝ ցօղեալ յարտասուաց առաւօտին՝ 'ի վերայ գլխոյն Աղալայ որ ննջէրն տակաւին : Ակն ունէի՝ ըստ կրօնից հայրենեաց իմոց՝ զի ոզի ըստընդեաց մանկան ուրումն մեռելոյ դայր իջանէր 'ի վերայ ծաղկին 'ի շիթ մի ցօղոյ, եւ զի երազ անուշակ ածէր զնա 'ի գիրկս հանդերձելոյ հարսին իմոյ : Խնդրեցի ապա զաստնջականն իմ, եւ գտի ըզնա հանգրիճեալ 'ի վեր զվերարկուն 'ի մէջ երկուց

գրապանակացն , վարդարան 'ի ձեռին , եւ մնայր նա  
ինձ բազմեալ 'ի վերայ կոճեղ սոճւոյ ընդ ծանրու-  
թեամբ ամաց անկելոյ : Առաջի արար ինձ երթալ  
ընդ իւր 'ի Քարոզատեղին մինչդեռ Ադալա հանգչէր  
տակաւին , եւ իմ ընկալեալ զչնսրհն զայն , վաղվա-  
ղակի անկաք յուղի :

Յիջանել մերում ընդ լեառնն 'ի վայր՝ նշմարեցի  
կաղնիս յորս Ոգւոց թուէր ինձ նկարեալ տառս ան-  
ծանօթս : Ասաց ցիս անապատականն զի նա ինքն  
գրեալ էր զայնս , եւ զի էին այնօքիկ 'ի տողից վա-  
ղեմւոյ քերթողի ուրուք՝ որ կոչէր Հովերոս , եւ ա-  
ռակք ինչ այլոյ ուրուք քերթողի առաւել վաղնջա-  
կանի , որում անուն էր Սադումոն : Չգիտեմ զի՛նչ  
ներդաշնակութիւն խորհրդաւոր 'ի վեր երեւէր ընդ  
իմաստութիւն ժամանակացն , ընդ տաղան կրճեալս  
'ի մամոոց , ընդ միայնակեացն ծերունի՝ որ քան-  
դակեալ էր զայնօսիկ , եւ ընդ հինաւուրց կաղնիս՝  
որ էին նմա իբրեւ մատեանք :

Անուն իւր եւ ամք հասակին եւ թուաքերու-  
թիւն առաքելական պաշտաման նորա , նշանակեալ  
կային 'ի միում՝ յեղեգանց մարդագետնին՝ առ ո-  
տամբ ծառոցն : Հիանայի ընդ դիւրաբեկութիւն յետ-  
նոյ յիշատակարանին , իսկ Հայրն պատասխանի տը-  
ւեալ ասէ . « Երկայնակեաց եղիցի նա քան զլս , եւ  
ունիցի միշտ առաւել արժանիս քան զսակաւն այն  
բարի՝ զոր գործեցի : »

Անտի հասաք 'ի մուտս հովտի միոյ՝ ուրանօր  
տեսի գործ սքանչելարուեստ : Կամուրջ իմն էր այն  
'ի բնէ արկեալ՝ ոչինչ ընդհատ քան զԱլիբգինիայն՝

գորմէ լուեալ է քո թերեւս : Մարդիկ , որդեակ իմ , եւ առաւել որք 'ի հայրենիս քո բնակեն' կերպարանին յաճախ 'ի պատկեր բնութեան , այլ օրինակութիւնք նոցին մանունք հանապազ գտանին . իսկ ոչ այսպիսի է գործ բնութեան եթէ թուեսցի նմանել վաստակոց մարդկան՝ դյարացոյցս իրաց ընծայելով նոցա ապաքէն : Յայնժամ արկանէ նա կամուրջս 'ի գագաթանէ լերին միոյ յայլ կատար , կախադանաւոր գործէ ուղիս 'ի մէջ ամպոց , ծաւալէ գետս իբրեւ չրանցս , քանդակէ սարս առ 'ի սիւնս , եւ պեղէ ծովս՝ իբրեւ աւազանս :

Անցաք մեք ընդ գերազանց կամարաւ կամրջին եւ եկին մեզ յանդիման այլ իմն բքանչելիք . եւ էին այնոքիկ գերեզմանք Հնդկաց Քարողատեղւոյն , կամ Պուրակք մահու : Հայրն Ոսրի թոյլ արարեալ էր նորահաւատից թաղել զմեռեալս ըստ վաղեմի սովորութեան իւրեանց , եւ պահել զչինական անուն դամբարանացն այնոցիկ . այլ միայն խաչիւ միով սրբագործեալ էր զվայրն դայն (\*) : Որոշեալ էր երկիրն 'ի բաժինս՝ իբրեւ զհասարակաց դաշտ հնձոց՝ ըստ թուոյ ընտանեացն , եւ յիւրաքանչիւր բաժնի էր անատառակ առանձինն՝ որ ըստ ճաշակի տնկողացն զանազանէր 'ի տեսիլ : Յձապտոյտ սահեալ անցանէր անչչունջ ընդ մէջ պուրակացն առուակ մի՝ որ յոր-

(\*) Զի Հայրն Ոսրի ըստ օրինակի Յիսուսեանց՝ որ 'ի Սինեաստան՝ արարեալ էր գայս , զի ներեին նորս բնակչաց երկրին բաղել զծնողս 'ի պարտեզս իւրեանց՝ ըստ վաղնջոց սովորութեան :

Զորջէր Առուակ խաղաղութեան : Գեղածիծաղն այն ապաստանարան հողուոց՝ փակեալ էր յարեւելից կուսէ կամրջաւն ընդ որով անցաք, բլրակք կրկին հատանէին դսահման նորա 'ի հիւսիսոյ եւ 'ի հարաւոյ, յարեւմտից կողմանէ եւ եթ ելա ունելով՝ ուրանօր ամբառնայր անտառ եղեւնեաց : Կոճեղք ծառոցն կարմրերանգք եւ կճանիչք 'ի կանաչ՝ ամբարձեալ առանց ոստոց մինչեւ 'ի գագաթունս նոցին՝ բերէին զնմանութիւն բարձրաբերձ սեանց եւ յօրինէին ըզկամարակապ սրահ տաճարին մահու : Տիրէր անդաւնօր ազմուկ իմն բարեպաշտիկ հանգոյն խուլ մոնչման երգիոնի ընդ կամարօք եկեղեցւոյ, այլ 'ի լինել միջամուխ 'ի խորս սրբավայրին ոչ եւս ինչ լսէ ոք բայց միայն զօշնութիւնս թռչնոց՝ որ խմբէին տօն յաւերժական 'ի յիշատակ մեռելոց :

Ելեալ յանտառակէ անտի՝ տեսաք զգիւղն Առաքելութեան կառուցեալ յեղր լճակի միոյ 'ի միջավայր ծաղկագուարձ մարմանդի : Պարտ էր գնալ անդր ընդ ծառուղիս յօրինեալս 'ի մակնոլիայց եւ 'ի կանաչ-կաղնեաց որ շուրջանակի փակէին զմի 'ի վաղեմի ճանապարհաց՝ առ կողմամբք լերանցն՝ որ անջատեն ըզԳենդուկի 'ի Փլորիտեանց : Այն ինչ նշմարեցին Հընգիկք զհովիւ իւրեանց 'ի դաշտին՝ թողին զվաստակս իւրեանց եւ ընթացան ընդ առաջ նորա : Ոմանք 'ի նոցանէ համբուրէին զգրօշակս հանդերձի Հօրն, եւ այլք օգնէին քայլից նորա . ամբառնային մարք 'ի վերայ բազկաց զաղածրի որդեակս իւրեանց, զի տեսցեն նոքա զայրն Յիսուսի Գրիստոսի, որ հեղոյր արտասուս : Հարցանէր 'ի գնալն իւրում թէ զի՛նչ

անցք անցանէին 'ի դեղջն , ումնմն տայր խորհուրդ , այլում յանդիմանութիւն քաղցր եւ մեղմ , խօսէր ըզհնձոց հասելոց , զմանկանց ուսանելեաց , զվտաց՝ զորս պարտ էր սփոփել , եւ յամենայն խօսս իւր ոչ մոռանայր յիշել զԱստուած :

Այսպէս ուղեկցեալ՝ հասաք առ ոտս մեծի խաչափայտի որ կանգնեալ կայր ի վերայ ճանապարհին : Անդանօր պաշտօնեայն Աստուծոյ սովոր էր կատարել զխորհուրդս կրօնից իւրոց : Գարձաւ յայնժամ առ բազմութիւն ամբօխին եւ ասէ . « Սիրեցեալք իմ նորահաւատք , ահա հասին առ ձեզ եղբայր մի եւ քոյր , եւ յառաւելութիւն բարեբաստութեան՝ տեսանեմ զի աստուածախնամ Տեսչութիւն խնայեաց յերէկն 'ի հունձս ձեր . աւասիկ կրկին պատճառք մեծամեծք առ 'ի դոճանալոյ զՆմանէ : Մատուցուք ապա զսրբազան պատարագն , եւ իւրաքանչիւր ումեք 'ի ձէնջ կացցէ 'ի խոր ամփոփման մտաց , կենդանի հաւատովք՝ անվախճան շնորհակալութեամբ եւ խոնարհ սրտիւ : »

Եւ ահա քահանայն աստուածարեալ զգենու սլատմուճան սպիտակ 'ի թթենի կեղեւոց . անօթքն նուիրականք արտաքս բերին 'ի խորհրդանոցէն՝ որ ընդ ոտիւք խաչին , պատրաստի սեղանն ի վերայ հատորոյ ժայռի միոջ , հանի ջուր ի մերձակայ հեղեղատէն , եւ ողկոյզ մի վայրի խաղողոյ մատակարարէ զգինի զուհին : Ամենեքին անկանիմբ մեք 'ի ծունր 'ի մէջ բարձրադիտակ խոտոց . եւ սկիզբն լինի խորհրդոյն :

Այգն երեւեալ յետկուսէ լերանց՝ բոցաճաճանչ վառէր զարեւելա : Ամենայն ինչ 'ի միայնութեան անդ էր

յոսկւոյ եւ 'ի վարդից: Աստղն այն աւետաւորեալ պեր-  
ճասպածառ շքեղութեամբ՝ ել ուր ուրեմն 'ի լուսե-  
ղէն իմն յանդնդոյ եւ զսկզբնածագ նշուլիցն զշողս  
արկ 'ի նշխարն յայն սրբագործեալ՝ զոր քահանայն  
ամբառնայր 'ի վեր 'ի նմին վայրկենի: Ա՛վ հրապոյրք  
կրօնից, ո՛վ մեծվայելչութեան քրիստոնէականին  
սլաշտամանց: Մերունի ոք անապատական՝ քահանայ,  
քարաժայռ մի՛ սեղան, անապատն՝ եկեղեցի, եւ ան-  
մեղ վայրենիք՝ երամք հանդիսատեսից: Ոչ, ոչ երկ-  
մտեմ բնաւ ընդ կատարումն մեծի խորհրդոյն 'ի սլա-  
հուն այնմիկ՝ յոր անկաք 'ի դետին 'ի վերայ երե-  
սաց մերոց, եւ ոչ ընդ էջսն Աստուծոյ յերկիր՝ զոր  
խմանայի արդեօք 'ի սրտի իմում:

Ի վախճան սլատարազին՝ յօրում դուստրն եւ  
եթ Նորեզայ պակասէր ինձ՝ դարձաք 'ի դեօղ անդր:  
Տիրէր անդանօր սրտառուչ իմն խառնուած ընկերա-  
կանին կենցաղոյ եւ բնականին կենաց. յանկեան ու-  
րեք նոճեստանի հինաւուրց անապատին՝ էր տեսա-  
նել երկիր այն ինչ մշակեալ. ոսկի ալեօք թաւալէին  
հասկք 'ի վերայ կոճեղ կաղնւոյ կործան անկելոյ,  
եւ բողբոջն միոյ եւ եթ ամարայնի փոխանակէր ըզ-  
ժառն երեքդարեան: Ամենայն ուրեք երեւէին ան-  
տառք մատնեալք 'ի բոց հրոյ՝ ամբառնալով զթանձ-  
րամած ծուխս ընդ օդս, եւ արօրն շրջէր յամբըն-  
թաց ընդ բեկորս արմատոց նոցին: Երկայնածիւզ շրդ-  
թայիւք գնային արտաչափք չափելով զերկիրն, ի-  
րաւարարք հաստատէին զառաջին կալուածս. թողոյր  
լքանէր թռչուն զբոյն իւր, որջք վայրի գազանաց  
փոխէին 'ի հիւղս: Լու լինէին որոտմունք 'ի դարբնո-

ցաց, եւ հարուածք տապարի զայն վերջին նուազ յարուցանէին արձագանգս 'ի մոնչիւն, որ ինքնին իսկ սպստէին արդեօք ծառովքն հանդերձ որ երբեմն պատսպարանք էին նոցա :

Հիացմամբ թախառէի 'ի մէջ պատկերացս՝ որ առաւել քաղցրանային կերպարանօքն Ադալայ եւ երազովք երանութեան՝ որովք զսիրտ իմ որորէի : Զարմանայի ընդ յաղթանակ քրիստոնէութեան 'ի վերայ վայրենաբարոյ կենաց . տեսանէի զհնդիկն քաղաքակրթեալ 'ի ձայնէ կրօնից, եւ հանդիսատես բազմէի նախընծայ հարսանեկան տօնից մարդոյ եւ երկրի . զի մարդ՝ դաշամբս այսու մեծաւ՝ աւանդէ յերկիր ըզ ժառանգութիւնս քրտանց իւրոց, եւ երկիր խոստանայ 'ի դարձին բերել հաւատարմաբար զհունձս, զորդիս եւ զածիւն մարդոյ :

Այլ յայնժամ մատուցին առ քարոզողն մանուկ մի, զոր մկրտեաց նա 'ի մէջ ծաղկաւէտ յասմըկաց՝ առ եղերբ աղբերական, մինչդեռ դագաղ մի՝ 'ի մէջ խաղուց եւ վաստակոց՝ ածէին այլքի Պուրակս մահու : Ամուսինք երկու զհարսանեկանն ընկալան զօրհնութիւն ընդ կաղնեաւ միով, եւ ապա չոգաք հաստատել զնոսս յանկեան ուրեք անապատին : Հովիւն ընթանայր առաջի, օրհնելով աստ եւ անդ եւ զժայռ եւ զծառ եւ զաղբիւր, որպէս երբեմն՝ ըստ մատենին քրիստոնէից՝ օրհնեաց Աստուած զերկիրն անմշակ՝ տալով զայն 'ի ժառանգութիւն Ադամայ : Թողովուրդն՝ որ խառն 'ի խուռն ընդ հօտս իւր ընթանայր ժայռից 'ի ժայռս զհետ պատկառելի Գըլխաւորին, գոգցես յանդիման առնէր գորովայոյց սըր-


տի իմում զգաղթական չու նախկին ընտանեաց , մինչ-  
դեռ Սեմ անցեալ ընդ աշխարհ անձանօթ գնայր ընդ  
որդիս իւր զկնի արեգական՝ որ առաջի իւր ընթա-  
նայր :

Իզձ եղեւ ինձ գիտել 'ի սուրբ անաստականէն՝  
եթէ զիւրդ դաստիարակէր նա զորդիս իւր , մտա-  
դիւր եդ նա ինձ սպտասխանի եւ ասէ . « Օրէնս ինչ  
ոչ երբէք ետու նոցա , այլ միայն ուսուցի նոցա սի-  
րել զմիմեանս , աղօթել առ Աստուած եւ ակն ու-  
նել լաւադունի իմն կենաց . զի այդոքիկ իսկ են ա-  
մենայն օրէնք աշխարհի : Ի միջավայրի գեղջս տեսա-  
նես հիւղ մի մեծ քան զայլս , մյն է մատուռ մեր  
յանձրեւաքեր եղանակի : Անդր ժողովին ընաւք յե-  
րեկոյս եւ ընդ առաւօտս 'ի գովեստ Արարչին, եւ ե-  
թէ չհղէց ես անդանօր՝ մի ոմն 'ի ծերունեաց կայ  
յաղօթս , զի ծերութիւն՝ որսէս եւ մայրութիւն՝ ազգ  
իմն են քահանայութեան : Յետոյ գնան վաստակել  
յարտորայս, եւ թէպէտ անջատեալք 'ի միմեանց դտա-  
նին կալուածք՝ զի իւրաքանչիւր ումեք մարթիցէ ու-  
սանել զընկերականն տնտեսութիւն , այլ հունձք զե-  
տեղին 'ի շտեմարանս հասարակաց առ 'ի հաստօջ ու-  
նելոյ զգութ եւ զգորով եղբայրասէր : Ծերունիք չո-  
րեքին հաւասարաչափ բաժանամբ բաշխեն զարդիւ-  
նըս վաստակոցնս Յաւել եւս 'ի սոսա արարողութիւնս  
բարեպաշտիկս , օրհներգութիւնս բազումս , զխաչն  
առ որով կատարեցի զխորհուրդան , գնչդարենին ընդ  
որով 'ի տօնական աւուրս քարոզեմ առ ժողովուրդն ,  
զչիբիմս որ կան մերձ առ անդս ցորենոյ , զգետս յո-  
րըս մխրձեմ զերախայս , զսուրբ Յովհանէսս նորոյս

Բեթանիոյ, եւ նկարեցես ողջ 'ի մտի զսլատկեր արքայութեան Քրիստոսի :»

Այսոքիկ բանք միայնակեցին գրաւեցին զուշ մտացս, եւ զգացի զի այս կենցաղ անյողդողդէ եւ վաստակասէր գեր 'ի վերոյ գտանէր քան զթափառական եւ զդատարկասլորտ կեանս վայրենւոյ :

Ա՛հ, Ռընէ, ոչ երբէք զՆախախնամութենէ բառնամ բողոք, այլ խոստովանիմ զի եւ ոչ երբէք կարեմ յուշ ածել զաւետարանականն զայն ընկերութիւն՝ առանց զգալոյ զդառնութիւն վշտացս : Զի ա՛րդ հիւզ մի եւեթ զեզերբքն այնոքիւք՝ երանաւէտ զկեանս իմ յարդարէր ընդ Աղալայ : Անդանօր վախճան լինէր ամենայն արշաւանաց իմոց . ա՛նդ ընդ հարսին ումեք անծանօթի մարդկան՝ թագուցեալ զերջանկութիւն իմ 'ի խորս անտառաց՝ անցեալ գընայի հանգոյն գետոցն՝ որոց անուանք իսկ չեն յանասլատին : Սակայն փոխանակ խաղաղութեանն՝ զոր իշխէի յայնժամ խոստանալ անձին, յորպիսի՛ աղմուկըս եւ 'ի յոյզս սահեալ անցին աւուրք իմ : Անդու խաղալիկ բախտին նաւաբեկեալ յամենայն ծովափուներս, ընդ երկար տարագիր 'ի հայրենեաց, եւ ոչ այլ ինչ գտանելով անդ 'ի դարձին բայց հիւզ մի աւերակ եւ բարեկամս 'ի շիրմի . այս իսկ էր լինելոց ճակատագիրն Շագդասայ :



## ԱՐԿԱՅՑ ԱՂԻՈՂՈՐԾ

Անուրջ բարերաստութեան իմոյ թէպէտ աշխոյժ այլ սուղ եւ վազանցիկ եղեւ այն, եւ մնայր ինձ արթնութիւնն 'ի քարայրի միայնակեցին : Ժամանեալ անդր զմիջաւորը՝ յապուչ հարայ ո՛չ տեսանելով զԱզալա փութացեալ մեզ ընդ առաջ : Զգիտեմ որպիսի՜ սոսկումն յեղակարծ կալաւ զոսկերս իմ : Ի մատչիլ իմում 'ի քարայր անդր՝ չիշխէի կոչել զգուստրն Նոբեզայ . եռանդն մտաց իմոց ընոյր արհաւրօք յաղմկէ կամ 'ի լռութենէ միանգամայն՝ որ փոխանակէին զազաղակ ձայնիս : Եւս քան զեւս զարհուրեալ 'ի գիշերոյն՝ որ տիրէր 'ի մուտս քարաժայռին , ասեմ ցըքարոզողն . « Ա՛վ դու , որում նսպատ եւ խրախոյս շնորհեն երկինք , լեր արդ միջամուխ 'ի մէջ ստուերացս : »

Քանիօն անգոր է ոք՝ եթէ յաղթանակեսցեն 'ի նմա կիրք : Քանի՛ զօրաւոր է այն՝ որ յԱստուած եւ եթ ապաստանի : Առաւել աշխոյժ արիական գտանէր 'ի սիրտ կրօնաւորին յեօթանասուն եւ վեցից ամաց կորացելոյ , քան յողջոյն եռանդեան տիոցս մանկականի : Ա յրն խաղաղութեան եմուտ 'ի քարայր իւր ,

մակ ես կայի առ դուրս նորին՝ մատնեալ յահ եւ յերկիւղ : Եւ ահա մրմուռնջ նուազ հանգոյն հեծեծանաց ելեալ 'ի խորոց քարաժայռին՝ հարաւ ընդ ունկն իմ : Ճիչ բարձեալ եւ զգեցեալ զգորութիւն՝ սլացայ յայնժամ 'ի գիշեր անդր անձաւին . . . Ոգի՛ք հարց իմոց 'ի ձէնջ միայն չէ զանխուլ տեսիլն՝ որ յակն ինձ անկաւ :

Միայնակեցին լուցեալ էր ջահ 'ի սոճւոյ, եւ զողողչելով ձեռինն ունէր զայն 'ի վերոյ մահճացն Ադալայ : Կինն այն չքնաղ եւ դեղածաղիկ յեց յարմուկն իւր յարուցեալ 'ի նիստ՝ երեւէր դալկադէմ եւ հերարձակ . շիթք տաժանաւոր քրտանց փայլէին 'ի վերայ ճակատուն . հայեցուածք նորա նուաղեալք 'ի կէս խնդրէին դեռ եւս յայտ առնել ինձ զտարփանս իւր, եւ բերան նորա ճգնէր 'ի ժպիտ : Կսկ ես իբրեւ զոք հարեալ 'ի շանթից, աչօք անքթիթ, եւ բազկատարած, չրթամք կիսաբաց, կանգնէի անչարժ : Լուութիւն խորին տիրէ առ վայր մի 'ի մէջ երեցունց անձանց տեսլեանս ցաւոց : Միայնակեացն ելոյժ զայն նախկին եւ ասէ . « Տենդ իմն թուի այս լինել 'ի վաստակաբեկ խոնջմանէ յառաջ եկեալ . եթէ հպատակեսցուք կամացն Աստուծոյ, գթասցի Նա 'ի մեզ : »

Ի բանից աստի արիւն իմ ոտնակառեալ սկիզբն էառ խաղալ յերակուռնս իմ, եւ յողողող բարուք վայրենւոյ՝ ընդ փոյթ 'ի ծայրայեղ կասկածանաց անկայ յառաւելազանց վստահութիւն : Բայց Ադալա չեթող զիս յայնմ ընդ երկար : Տրտմագին շարժեալ ըզգլուխ իւր՝ նշանացի արար մեզ մերձենալ 'ի մահիճ .

արն, եւ 'ի ձայն նուազ խօսեցաւ առ կրօնաւորն եւ  
ասէ . « Հայր իմ, ահա մերձենամ 'ի վայրկեան մա-  
հու : Ո՛վ Շագրաս, լո՛ւր աղէ անխռով զչարագու-  
շակ գաղտնիսն՝ զոր ծածկեցի ցարդ 'ի քէն զի մի՛  
յոյժ չարաբաստիկ կացուցից զքեզ եւ զի հնազանդ  
եղէց մօր իմում : Գուն գործես՛յիր մի՛ դբանս իմ  
ընդհատել նշանակօք ցաւոց՝ որ ձեպեցուցեն զսա-  
կաւիկ ինչ վայրկեանս կենաց իմոց : Բազում ինչ ու-  
նիմ սլատմել քեզ, եւ 'ի բաբախմանց սրտիս որ դա-  
դարեն տակաւ . . . եւ չգիտեմ յո՛րսլիսի ցրտասա-  
ռոյց բեռանէ՝ զոր հազիւ կարեմ բառնալ ըստ ան-  
ձին . . . զգամ զի չլինէր ինձ մարթ փութալ առա-  
ւել : »

Յետ վայրիկ մի լուրթեան զայս օրինակ Աղալա  
յառաջ ածէր զբանս իւր :

« ձակատագիրն իմ դժնդակ գրեաթէ սկիզբն  
էառ մինչչեւ իմ եկեալ 'ի լոյս : Յաղէտս յղացաւ  
զիս մայր իմ . պարտասեցուցանէի զարգանդ նորա  
եւ նա ծնաւ զիս յաշխարհ պատառմամբ ընդե-  
րացն, այլ ոչ ումեք թուէի ապրանաց : Առ 'ի փրբ-  
կել զկեանս դատերն, ուխտս եդ մայր իմ, եւ  
խոստացաւ առ Գշխոյն զուարթնոց զի նուիրելոց  
էի նմա զկուսութիւն իմ՝ եթէ երբէք զերծա-  
նէի 'ի մահուանէ . . . Ո՛ւխտ ազիտաբեր՝ որ  
գահավէժ մղեալ վարէ զիս 'ի գերեզման : »

« Այն ինչ թեւակոխեալ 'ի վեշտասան ամս տիոց՝  
կորուսի զմայր իմ : Ժամուք ինչ յառաջ քան զմեռա-  
նելն կոչեաց զիս յեզր անկողնոյն, եւ ասաց առա-  
ջի քարոզողի ուրումն՝ որ զյետին վայրկեանս նորա

սփոփէր : Դուստր իմ, գիտես իսկ զուխան՝ զոր վասն քո արարի, կամիցի՞ս արդեօք երդմնազանց կացուցանել զմայր քոյին : Ո՞վ իմս Ադալա, թողու՞մ զքեզ յաշխարհի ուրեք որ անարժան իսկ է ունել յինքեան օրիորդ զոմն քրիստոնեայ, 'ի մէջ կռասպարիշտ արանց՝ որ հալածական անեն զԱստուած հօր քո եւ զիմս, զԱստուածն այն՝ որ յետ պարգեւելոյ քեզ զկեանս՝ հրաշիւք իմն պահպանեաց զքեզ : Ենէ՞, սիրեցեալդ իմ որդեակ, զքօզ կուսական ընկալեալ 'ի դէմս՝ հրաժեշտ տացես հոգոց հիւղակին եւ եղբորական կրից՝ որ ամբօխեցին զծոց մայրենի : Ե՛կ ուրեմն, գեղեցիկդ իմ, ե՛կ եւ երդուիր յայս պատկեր Մօր Փրկչին, 'ի մէջ ձեռաց սրբոյ Քահանայիս եւ մօր քո՝ որ մերձ է 'ի մահ, երդուիր մի երբէք մատն լինել ինձ առաջի երկնից . . . Յուշ լիցի քեզ զի վասն քո եւ եթ արկի զանձն 'ի վտանգ առ 'ի փրկել զկեանս քո, եւ զի 'ի թերանալ քու՞մ 'ի խոստմանէդ, 'ի տանջանս յաւիտենականս խորասոյզ արկցես զոգի մօր քոյին . . . : »

«Մայր իմ, զի՞ դու այդպէս բարբառեցար : Ո՞վ կրօնք որ զաղէտս իմ եւ զերանութիւն համանգամայն սլատրաստես ինձ, որ կորուսանես զիս եւ մըխիթարես . . . Եւ դու քաղցր եւ տխուր նշաւակդ կրից՝ որ հիւժեալ մաշեն զիս 'ի սպառ մինչեւ 'ի գիրկս մահու, տեսանես իսկ արդ, ո՞՞ Շագդաս, որ ինչ գործեաց խստութիւն ձակատագրիս . . . Փղձկեալ յարտասուս եւ անկեալ 'ի գիրկս մօր իմոյ՝ խոստացայ զամենայն զոր ինչ եւ կամէին : Քարոզողն ընթերցաւ վասն իմ բանս ինչ զարհուրելիս, եւ կտ

ինձ զուսանոցակն՝ որ 'ի սպառ կապեալ կաշկանդ է զիս : Մայր իմ անէծս սպառնացաւ հեղուլ զինեւ եթէ երբէք ապախտ զուխտիւս առնէի , եւ յետ հաւատալոյ ինձ գաղտնի ինչ անընտառատ առ հեթանոսս՝ հալածիչս կրօնից մերոց , եհան զողի իւր դըրկապինդ ունելով զիս 'ի մէջ բազկաց : »

« Ի սկզբան ոչ կարացի առնուլ 'ի միտ զվտանդ երգմանցս : Եռանդնալից գոլով եւ քրիստոնեայ ճըմարիտ , եւ սիգապանծ ընդ արիւնն սպանիական՝ որ յերակուսնս իմ ընթանայ , ոչ այլ ինչ շուրջ զինեւ գտի բայց միայն արս անարժանս ընդունելութեան աջոյս : Ինդայի յանձն իմ չունելով զոք ինձ ամուսին բայց յԱստուծոյն մօր իմոյ : Տեսի զքեզ՝ զբանտարկեալդ դեղանի եւ անտիական , խանդաղատեցայ 'ի գութ ընդ բազդ սլայմանիդ եւ իշխեցի խօսել ընդ քեզ առ խարուկաւն անտառին , եւ յայնժամ առի ըզչափ ծանրակշիռ բեռին բաղձանաց իմոց : »

Իբրեւ կատարեաց Ադալա զբանս զայսոսիկ , սեղմեալ զձեռս իմ յիրեարս եւ սպառնալից դիմօք հայեցեալ 'ի քարոզողն՝ գոչիցի եւ ասեմ . « Ահա կրօնքն՝ զորմէ այնքան յօրինեցեր ինձ զրուստիս : Կորիցէ՛ երգումնն՝ որ բառնայ յինէն զԱդալա , կորիցէ աստուածըն՝ որ ընդդէմ դառնայ բնութեան : Այր դու քահանայ , զի՞նչ 'ի գործել եկիր յանտառս յայսոսիկ : »

« Ի փրկել զքեզ , ասաց ծերունին 'ի ձայն ահաբեկ , նուաճել զկիրս քո եւ արգելուլ զքեզ , հայհոյիչ , 'ի ձգելոյ յանձն զցասումն երկնառաք : Անկ իսկ է քեզ , ո՛վ պատանի՛ դեռ այն ինչ մտեալ յասպարէզ կենաց՝ բողոք զվշտաց քոց՝ բառնալ : Ո՞ւր են

նշանակէր տառապանաց քոց : Ո՞ւր են անխրաւութիւնսքըն՝ զորս դուդ կրեցեր : Ո՞ւր են լաւութիւնք քո՞ որ միայն կարող էին տալ քեզ իրաւունս արտնջելոյ : Ո՞րպիսի հարեր դու սպաս : Զո՞ր քարիս գործեցեր : Ենէ՛, եղկելիդ , չունիս ինչ յանդիման առնել ինձ քաց 'ի կրից քոց, եւ իշխես ամբաստան կալ զերկնից : Եթէ իբրեւ զհայր Ոսրի անցուցեալ էր քո զամս երեսուն վտարանդի սահեալ յաքսորս 'ի լերինս՝ ոչ արդեօք վազվազէիր 'ի դատաստան խորհրդոց Նախախնամութեան , խելամուտ լիցիս յայնժամ զի գիտես ինչ ոչ , ես իսկ եւ ոչինչ , եւ զի չիք երբէք պատուհաս այնպիսի սաստկակոծ եւ ոչ աղէտք այնքան ահարկուք՝ որոց չհասանիցէ տանել ապականեալ մարմնոյ : »

Փայլատակունք՝ որ հատանէին յաչաց ծերունւոյն , մօրուք նորա՝ որ ծեծէր զկուրծս իւր , եւ քանք նորա շանթակէզք աստուած ոմն երեւեցուցանէին ինձ զնս : Ընկձեալ 'ի մեծփայելչութենէ նորա՝ փարեցայ զծնդօք իւրովք , եւ խնդրեցի 'ի նմանէ թողութիւն վասն յուզման կրիցս :

Նա պատասխանի ետ եւ ասէ ցիս յայնպիսի բարբառ քաղցրահնչիւն՝ որ զխայթ խղճի մտաց զարթոյց 'ի խորս հողւոյս . « Որդեակ իմ , ոչ վասն իմ ինչ ետու քեզ կշտամբանս : Աւա՛ղ , իրաւունք են քեզ , սիրեցեալդ իմ որդեակ , դոյզն ինչ եւ եթ 'ի գործել եկեալ եմ յանտառս յայտոսիկ , եւ քան զիս չիք Աստուծոյ ծառայ անպիտան : Սակայն , որդեակ , չէ եւ չէ օրէն երբէք կալ ամբաստան ընդդէմ երկնից : Ներեա՛ ինձ եթէ վշտացուցի

զօհրտ քոյին, այլ արդ քեռ քում լուիցուք՝ Թերեւս իցէ  
դեղ ինչ դարմանոյ, մի՛ լիցի մեզ բնաւ ձանձրանալ  
'ի յուսոյ, ո՛վ Շագդաս . ապաքէն աստուածատուր  
են այս կրօնք որ կարգեացն զյոյս 'ի համար առա-  
քինութեան : »

Կրկնեալ անդրէն Ադալայ ասէ . « Սիրեցեալդ  
իմ պատանեակ, դու ակնհատեա եզեր պատերազ-  
մաց իմոց, սակայն զնոցին խուն ինչ մասն եւ եթ  
դիտեցեր արդեօք զի զայլն ամենայն ծածկէի 'ի քէն :  
Ո՛չ, նուազ քան զԱդալա դտանի թշուառ ստրուկն  
խափշիկ՝ որ թանայ քրտամբք զբոցակէզ աւազուտս  
Փլորիտեանց՝ Յորդորէի զքեզ 'ի փախուստ, եւ սակայն  
վստահ ընդ մեռանել կայի՝ եթէ միանգամ յինէն 'ի բաց  
մեկնէիր . երկնչէի փախչիլ ընդ քեզ յանապատ, այլ  
ոգեսպառ զհետ հովանաւոր մայրեաց . Ո՛հ, եթէ միայն  
մնայր ինձ թողուլ զծնողս՝ զբարեկամս եւ զհայրենիս  
եւ — ո՛վ պակուցանողական իրացս — թէ իսկ հա-  
սանէր ինձ կորուսանել զոգիս, այլ ստուե՛ր քո,  
մայր՝ իմ, ստուեր քո մերձ կացեալ առ իս, դտանջան-  
տըն հանապազ ածէր ինձ ի դէմս : Լուայ զհեծութիւ-  
նըս քո, տեսանէի զի բոցք դժոխոց ծախէին զքեզ .  
Գիչերք իմ երաշտքէին եւ թաթ աւուչք յուրուականաց  
եւ տրտմագին անցանէին աւուրք իմ . ցօղ երեկորին  
ցամաքէր յանկանելն զբոցակէզ մորթով մարմնոյս,  
չրթամբք կիսաբացիւք շնչէի զսիւղ, այլ հողմք  
բաղցրասիւք ոչ միայն ոչ ածէին ինձ զովութիւն, այլ  
տոչորէին 'ի հուր շնչոյս . Յո՛րսիսում կամ 'ի տագ-  
նապի տեսանելով զքեզ միշտ առնթեր՝ հեռի յամե-  
նայն մարդկանէ՝ 'ի խոր ամայութիւնս, եւ ընդ քեզ

եւ ընդ իս իմանալ անջրպետ աննահանջելի : Զգել զկեանս իմ առ ոտս քոյին , ծառայել քեզ որպէս ոմն ստրուկ , պատրաստել քեզ զճաշ քո եւ զանկողն յանձանօթ անկեան ուրեք տիեզերաց , զայս ամենայն դեր 'ի վերայ համարէի ինձ երջանկութիւն՝ յոր եւ հուպ երթեալ ոչ իսկ կարէի վայելել 'ի նոյն : Յո՞ր խորհուրդ արդեօք զմիտս իմ ոչ յածի , որպիսի՛ անուրջք չելին 'ի թախձագին սրտէ աստի իմմէ : Մերթ ալնկառոյց 'ի քեզ՝ փօքր միւս եւս տեղի տայի խօլական եւ եղեռնաւոր ըղձից , մերթ ցանկայի ընդ քեզ միայն լինել արարած կենդանի 'ի վերայ երկրի , եւ մերթ զգացեալ զի աստուած ոմն կասեցուցանէր զիս յարհաւրալից հրճուանացս՝ ըղձանայի աստուածութեանն այնմիկ դառնալ յեղծումն եւ յապականութիւն , թէ միայն գրկապինդ զքեւ խորոց 'ի խորս գահավէժ անկմամբ թաւալէի ընդ փլատակս Աստուծոյ եւ աշխարհի : Այժմ իսկ . . . ասացի՞ց զայն արդեօք , այժմ իսկ մինչ գնամ խորատոյզ անկանել 'ի վիճ յաւիտենականութեան եւ երեւել առաջի երեսաց անողոք Դատաւորին , 'ի պահուն՝ յոր առ 'ի հնազանդել մօր իմում տեսանեմ խնդութեամբ զի կուսութիւն լափէ զկեանս իմ , բայց վարիմ ահա 'ի ներհակ կրից աղետալեաց , եւ բեւեռեալ կայ յիս մորմօք կորստեան քոյին : »

Աստանօր Քարոզողին ընդմիջեալ զբանս նորա՝ ասէ . « Դուստր իմ , զառածանեն զքեզ վիշտք քո : Այդ առաւելադանցութիւն կրից յոր կասդ մատնեալ՝ դուն ուրեք գտանի արդար , եւ չիք իսկ 'ի բնութեան , եւ այսու եւ եթ չէ ինչ եղեռնաւոր յաշս

Աստուծոյ, զի առաւել խաբուսիկ իմն է 'ի միտս՝  
քան անտասէր ինչ 'ի սրտի : Պարտ է ապա մերժել  
'ի քէն 'ի բաց զյոյզս կրից քոց՝ որ չեն 'ի ճահ անմե-  
ղութեան քում : Սակայն, սիրեցեալ դուստր իմ, ան-  
ժոյժ եռանդն մտաց քոց կարի իսկ խռովեաց զքեզ  
ընդ ուխտս քո : Ոչ պահանջէ կրօն զո՞ն գեր 'ի վեր  
քան զկար մարդոյ, յօժարութիւնք նորին ճշմա-  
րիտք եւ բարեխառն լաւութիւնք գեր 'ի վերոյք են  
քան զյախուռն տենչանս եւ քան զբռնազբօս առա-  
քինութիւնս կարծեցեալ զիւցազնութեան : Եթէ ընկ-  
ճեալ էիր, ո՞ հէք ոչխար մոլորեալ, խնդրէր զքեզ  
Հովիւն բարի ածել 'ի հօտ խաշանց իւրոց : Անաչառ  
դանձք զղջման բաց էին քեզ, հեղեղաց արեան պէտք  
են մեզ առ 'ի քաւել զյանցանս մեր յաչս մարդկան,  
այլ շիթ մի արտասուաց բաւէ առ Աստուած : Քաջա-  
լերեաց ապա, սիրեցեալդ իմ դուստր, հարկ է քեզ  
կալ մնալ արդ յանդորրու . դարձցուք առ Աստուած՝  
որ բուժէ զամենայն զվէրս ծառայից իւրոց : Եթէ լի-  
ցին կամք նորա՝ որպէս ակն ունիմս՝ զի զերծանիցիս  
դու 'ի խօթութենէ աստի, զրեցից առ արքեպիսկո-  
սոսն Գէպեկայ . են նորա իշխանութիւնք կարեւորք  
առ 'ի զերծ կացուցանելոյ զքեզ յուխտիցդ՝ որ իղձք  
եւ եթ են անկեղծիկք, եւ դու կատարեսցես զա-  
ւուրս քո աստ առ իս ընդ ամուսնոյ քում Շաղհասայ :»

Ի բանից աստի ծերունւոյն, անկաւ Ադալա յընդ-  
երկար 'ի լորցս, եւ 'ի հանդարտելն եցոյց յինքեան  
նշանակս զարհուրելի ցաւոց : Զեռնամած կալով 'ի  
յոյզս ասէր. « Եւ զի՞նչ է՞ր ուրեմն դեզ ինչ դար-  
մանոյ, եւ մարթէ՞ր ինձ զերծանել յուխտից ի-

մոյ . » — « Այո՛ ամենեւին , դատրիկ իմ , եւ տակաւ  
ւին կարես առնել զայդ . » — Եւ Աղալա գոչեաց .  
« Ո՛հ , կարի է անագան , տարածամ յոյժ : Իցէ՞  
սլարտ մեռանել 'ի պահու՛ յորում ուսանիմ թէ  
հնար էր ինձ լինել բարեբաստ : Զիա՛րդ յառաջագոյն  
չեղեւ ինձ ճանաչել զծերունիս զայս սուրբ : Յորպի-  
սում այսօր վայելէի ընդ քեզ յերանութեան . . . ընդ  
Շագդասայ քրիստոնէի . . . սիրովեալ եւ քաջալեր-  
եալ 'ի ձեռն մեծաշուք քահանայիս . . . յանապատի-  
ստ . . . յաւիտեան . . . Ո՛հ , մեծ յոյժ յինէր այժմ  
երջանկութիւնս մեր : » — Յայնժամ կալեալ զձեռա-  
նէ եղիկւլոյն՝ ասեմ ցնա . « Հանդարտեաց , զերանու-  
թեանն այնորիկ ընդ հուպ աոցուք մեք զճաշակ : » —  
Եւ ասէ Աղալա . « Ո՛չ , ո՛չ երբէք : » — Յաւելի եւ  
ասեմ . « Եւ զիա՛րդ . » — Զայն երարձ կոյան եւ ասէ .  
« Ոչ գիտես դու զամենայն . յերէկն . . . 'ի մրրկի  
անդ . . . փոքր միւս եւս զուխտս իմ կոխան առ-  
նէի ընդ ոտիւք , փոքր միւս եւս՝ յանդունդ գեհե-  
նին խորասոյղ զմայր իմ արկանէի , արդէն իսկ ծան-  
րանային զինեւ անէծք իւր , եւ ստէի Աստուծոյ որ  
փրկեաց զկեանս իմ . . . : Մինչդեռ համբուրէիր դու  
զդողդոջուն շրթունս իմ , ոչ գիտէիր զի գիրկս եւ  
եթ արկանէիր մահու : » — Ի ձայն բարձր աղաղակեաց  
քարոզողն եւ ասէ . « Երկի՛նք . սիրեցեալ որդեակ ,  
զի՛նչ գործեցե՛ր : » — Պատասխանի ետ Աղալա մոլոր-  
եալ աչօք . « Եղե՛ան , հայր իմ , այլ զանձն իմ կո-  
րուսեալ միայն՝ փրկէի զմայր իմ : » — Իսկ ես զարհուր-  
եալ եւ արհաւիրալից գոչեմ . « Կատարեա՛ զքանսդ : » —  
Եւ նա ասէ . « Քաջ է , զտկարութենէ իմմէ լեալ էր

իմ կանխատեսս՝ 'ի մեկնել իմում 'ի հիւղից անտի, ամի ընդ իս . . . » — Կրկնեալ անդրէն հաղցի դողութեամբ եւ ասեմ. « Զի՞նչ » : — Եւ ասէ Հայրն. « Թո՞յն. » — Եւ գոչեաց Աղալա . « Ի ներքս յի՛ս է այն » :

Զերծաւ ճրագն 'ի ձեռաց միայնակեցին , եւ ես իբրեւ զմեռեալ անկայ առ ընթեր դստեր Լորեղայ . գերկաքանչիւրքս զմեզ 'ի գիրկս իւր ընկալաւ ձերուսնին՝ եւ երեքեանքս 'ի միասին անդ 'ի մթան զհեկեկանս մեր խառնեցաք առ վայր մի 'ի վերայ եղերական անկողնոյն :

« Սթափեցարո՛ւք , սթափեցարո՛ւք , առայ ապա անապատականն արխաօրտ լուցեալ կանթեղ մի , կորուսանեմք աւասիկ վայրկեանս թանկագինս , աներկիւղ քրիստոնեայք , խիզախեսցուք ընդդէմ յարձակմանց չարեաց 'ի վերայ հասելոց , չուան զսարանոցաւ՝ մոխիր զգլխով՝ անկցուք առ ոտս Բարձրելոյն խնդրել 'ի նմանէ զղթութիւն , եւ հնազանդել կամաց նորա : Տակաւին թերեւս 'ի ձեռս մեր է ժամանակ Դուստր իմ , պարտ էր քեզ յերէկն ընդ երեկս ազդ առնել ինձ զայդ » :

Աղալա ասէ . « Եղո՛ւկ , հայր իմ , խնդրեցի ըզձեզ 'յերէկն 'ի գիշերի այլ երկինք 'ի պատուհաս յանցանաց իմոց հեռի յինէն արարին զձեզ , Եւ սակայն վայրապար եղեն ամենայն օգնականութիւնք , զի հնդիկք իսկ ինքնին հնարագէտք յանդեղայս՝ ոչ գիտեն ընաւ զգեղթափ թունոյն՝ զոր կերիս Ո՛վ Շագդաս , 'ի միտ առ թէ յո՛րպիսի ըմբռնեցայ 'ի զարմանս իբրեւ տեսի զի հարուածն չեղեւ այնքան վաղ մահատիթ՝ որքան ես ակն ունէի : Յաւելին տար-

փանք զղորութիւն իմ, եւ չկարաց հողի իմ արագ ի քէն մեկնել ի բաց » :

Աստանօր ոչ հեղձամղձուկ հեկեկանօք՝ այլ բուռն յուզմամբ կրից՝ որ առ վայրենիա տեսանին եւ եթ, աղմկեցի զվէպսն Աղալայ : Մոլեգին ընդ հող թաւալէի զանձն՝ խածատմամբ բազկաց իմոց եւ ըզձեռս իմ լախելով : Քահանայն ալեւոր՝ 'ի գորով զարմանասքանչ՝ դիմէր յեղբօրէ առ քոյր, եւ մատուցանէր մեզ նպաստս բազում : Յանդորրութեան սրտին եւ ընդ բեռամբ ամացն գիտէր նա լսելի առնել մեզ զբարբառ իւր, եւ կրօնք իւր տային նմա ելեւէջս ձայնի գորովայոյզս եւ տոչորիչս քան զկիրս իսկ մեր գլխովին : Քահանայն՝ որ 'ի քառասնից ամաց հետէ զօրհանապազ ընծայէր զանձն 'ի սպաս Տեառն եւ մարդկան՝ որ 'ի լերինս յայսոսիկ, ո՞չ ի յուշ ածէ քեզ զողջակէզսն Խորայելի՝ որ 'ի բարձրաւանդակ տեղիս ծխէին անդադար Տեառն առաջի :

Ո՛հ աւա՛ղ, ընդ վայր գուն գործեաց նա գտանել զդարման ցաւոցն Աղալայ : Խոնջումն, վիշտ, թոյն եւ կիրք մահառիթ քան զամենայն մահադեղս միաբանէին առ 'ի խել 'ի բաց զծաղիկն յառանձնութենէ անտի : Ընդ երեկս կոյս եկին 'ի յայտ նշանք ախտից զարհուրելիք, պատեցաւ թմբիր զբոլոր անդամովքն Աղալայ, եւ ծայրք մարմնոյն սկսանէին ցրտանալ տակաւ : Եւ նա ասէր ցիս . « Կալ զմատուենս իմ, եւ տես թէ չիցե՞ն բնաւին սլաղեալք » : Ոչ գիտէի զի՛նչ տալ պատասխանի, եւ հերք իմ յարհաւրաց ի վեր քստմնէին . ապա յաւելոյր, « Յերէկն տակաւին, սիրեցեալք իմ, ստրպուռ զոսկերօքս գնայր՝ թէ միայն

յիսն հպէիր , այլ արդ ոչ եւս զգամ զչօշափումն ձեռնիդ , ոչ իսկ գրեթէ լսեմ զձայն քո . եւ որ ինչ գտանին իրք 'ի քարայրիս՝ աներեւութանան տակաւ յաչաց իմոց : Ո՞չ ապաքէն լսին ահա դայլայլիկք թռչնոց , ժամ է արդ մտիցն արեւու ի մայր իւր : Ո՞վ Շաղհաս , ճառագայթք նորա առաւել գեղանշոյլ ծագեցեն յանապատին ի վերայ շիրմիս : »

Տեսեալ Ադալայ զի 'ի բանից անտի իւրոց փղձակէաք մեք յարտասուս , ասէ ցմեզ . « Ներեսջիք ինձ , բարեկամք իմ , կարի իսկ գտանիմ արդ անզօր , այլ ապա թերեւս հզօրագոյն եղէց : Բայց ա՛յսպէս դեռ եւս 'ի տիտ մանկութեան՝ վճարե՛լ 'ի կենաց , բերելով յանձին սիրտ կենդանի . . . Պետք ազօթից , գրթա՛ յիս եւ ինձ օգնեա : Համարիցի՞ս զի մայրն իմ լիցի հաճ եւ գոհ ընդ որ գործեցիս , եւ թողցէ ինձ Աստուած : »

Պատասխանի ետ կրօնաւորն բարեւալ՝ հեղձով արտասուս եւ սրբեալ զայնօսիկ դողդոջուն եւ ծայրատեալ մատամբքն եւ ասէ . « Գուցար իմ , յանգիտութենէ քումմէ հասանեն առ քեզ այս ամենայն չարիք . դատարակութիւն քո շինական եւ պակասումն կարեւոր վարժից ամին քեզ կորուստ . ոչ զիտէիր դու զի քրիստոնէի ումեք չէ մարթ լինել իշխան կենաց իւրոց ըստ ամենայնի : Մխիթարեա՛ց ապա , ոչխարդ իմ սիրելի , թողցէ քեզ Աստուած յաղագս պարզութեան սրտիդ : Մայր քո եւ Քարոզիչն խօթամիտ որ առաջնորդ եղին քեզ յայդմ , առաւել քան զքեզ գտանին մեղապարտք . քան զսահման իշխանութեան իւրեանց անցին նո-

քա խղեալ 'ի քէն ուխտ անհանձար . այլ խաղաղութիւն Տեառն եղիցի ընդ նոսա : Երեքեանդ 'ի միասին ընծայէք նորանշան իմն օրինակ վտանգաց խանշավառ ոգւոյ եւ զթերութեան լուսոյ յիրս կրօնից : Կեր աներկեւան, որդեակ իմ, զի որ քննէ զերիկամունս եւ զսիրտս գատեցէ զքեզ ըստ խորհրդոց քոց՝ որ անբիծք էին, եւ ոչ ըստ գործոյ քում՝ որ գատապարտ առնէ զքեզ : Իսկ վասն կենաց քոց, եթէ հասեալ է քեզ ժամ ննջելոյ 'ի Տէր, ա՛հ, դուստրր իմ սիրեցեալ, որպիսի՛ ինչ գուղնաքեայ կորուսանես արդեօք՝ կորստեամբ աշխարհիս : Թէսլէտ 'ի միայնութեան ձգեցեր զկեանս, այլ ծանեար զվիշտս ցաւոց, զի՛նչ ապա խորհէիր թէ ականատես լեալ էր քո չարեաց ընկերութեան . կամ զի՛նչ՝ եթէ ելեալ յափունս Եւրոպայ՝ հասանէր յունկն քոյին երկայնաձիգ ճիչ աղիողորմ՝ որ 'ի վեր ամբառնայ՝ յերկրէն ծերացելոյ : Որ բնակեն 'ի հիւզս կամ յարքունիս, ամենեքեան առ հասարակ հեծեն 'ի տառապանս եւ հառաչեն յաստիս : Ողբացին դշխոյք հանգոյն սովորական կանանց, եւ հիացան մարգիկ ընդ գերարտօսը հեղեալ յաչաց արքայից : »

« Միթէ զսէ՞ր քո աշխարեա Դուստր իմ, ոչ ինչ ընդհատ քան ընդ երազ մի պարտ էր քեզ խոռովել ընդ այն : Ճանաչե՞ս գուր զսիրտ մարդոյ, եւ հնար ինչ էր քեզ թուել զյեղ յեղուկ բաղձանս նորին, զի առաւել մարթ էր գիտել՝ թէ քանիք զծովափունս բաղխեն ալիք 'ի մերկի : Ո՛վ Ազալա, նուէրք զոհից եւ գործք բարիք չեն ինչ զօղք յաւերժականք, յաւուր միում գուցէ տաղտուկ գայր ընդ յափրանս »

եւ անցեալն համարէր յոչինչ, եւ յայնժամ ոչ այլ ինչ երեւեսցին բայց՝ անհարթութիւնք հէք եւ արհամարհ զուգութեան : Անշուշտ, զուստր իմ, չզըտաւ ուրեք բնաւ սէր չքնաղ քան զառնն եւ զկնոջ հաստեւոց 'ի ձեռաց Արարչին : Զի տնկեաց Աստուած զգրախտն յոր կէին նոքա յանմեղութեան եւ էին անմահ, կատարեալք 'ի հողի եւ 'ի մարմին՝ վայելելով յամենայն : Եւս վասն Ադամայ ստեղծաւ, եւ Ադամ վասն Եւայի : Եթէ նոքին իսկ ոչ կարացին կալ մնալ յերանաւէտ պայմանին, ո՞ր այլ ամուք յետ նոցա յաջողեսցին յայդմիկ : Ոչ խօսեցայց առ քեզ զամուսնութեանց անգրանիկ ծննդոց ազգի մարդկան, զանպատում զուգութեանց նոցին, յորում ժամանակի քոյր 'ի կին լինէր եղբօր, եւ սէր եւ բարեկամութիւն եղբայրական խառնէին 'ի նմին իսկ սըրտի, եւ ամբողջեամբ միոյն առաւելուին բերկրանք միւսոյն : Եղծան ապա այս ամենայն (զօգք հարսանեկանք, հեռ անիրաւ սպրդեալ եմուտ 'ի բազինն զալարազուարճ՝ յոյր վերայ մատչէր այծեամն յողջակէզ, տիրեաց ընդ խորանաւն Աբրահամու, եւ 'ի սրսկապանան իսկ՝ յորս նահապետք ճաշակմամբ մեծի խնդութեանն 'ի մոռացօնս արկանէին զյիշատակ մահու մարց իւրեանց : »

« Կարծէի՞ր ուրեմն, որդեակ իմ, լինել առաւելանմեղ եւ բարեբաստիկ 'ի կապանս սիրոյ քո, քան զընտանիսն սուրբ՝ յորոց հաճեցաւ իջանել Յիսուս » Զկամիմ աստանօր մանրապատում խօսել քեզ զառտնին յանձանձանաց, զվիճից, զիտխադարճ կշտամբանաց, զանխաղաղասիրութեանց եւ զհամօրէն զանու-

խուլ վշտաց՝ որ հսկեն առ սնարիւք հարսանեկան անկողնոյ՝ Նորուզին անդէն վիշտք կնոջ՝ քանիցս անգամ թէ լիցի մայր, եւ հեղմամբ արտասուացն ածի՝ ՚ի հարսնութիւնս : Քանիօն աղէտք պահին ՚ի կորստեան եւեթ մանկան միոյ անդրանկի զոր զիեցուցանես կաթամբ, եւ ապա մեռանի ՚ի վերայ գրկաց քոց : Լի եղեւ լեառնն հեծութեամբք մինչդեռ Հռաքէլ լայր զորդիս իւր, եւ ոչ կամէր մխիթարել զի ոչ էին : Այսոքիկ դառնութիւնք կցորդեալք ընդ գորով մարդկան ա՛յնքան զօրաւորք գտանին, զի ՚ի հայրենիս իմ տեսի ես տիկնայս մեծամեծս սիրեցեալս յարքայից՝ որոց թողեալ զարքունիս՝ ծածկեցան ՚ի մենաստանս եւ խեղեցին զհետ եւ զըմբոստ մարմինն, ոյր հաճոյք զհետ առեալ ձգեն վիշտս նորանորս : »

« Այլ ստիցես թերեւս զի օրինակք բանիցս ոչ ինչ ակնարկեն ի քեզ . զի ամենայն փառասիրութիւնս ըղձից քոց էր ձգել կեանս յանփառունակ խրճթի ուրեք ընդ առն ումեմն՝ զոր դու քեզէն ընտրեցեր . եւ զի քան զհեշտութիւնս հարսանեկանս առաւել խնդրէիր զհրապոյրս յիմարութեանն՝ որ յարքուն տիոց յորջորջին տարիսեք : Ո՛վ ցնորք . ո՛վ բանդագուշա՛նք եւ ունայնութիւնս . ո՛վ անուրջք կարեւելր եռանդեան մտաց : Ես իսկ ինքնին, դուստր իմ . ծանեայ զամբոխմունս սրտի . ոչ հանապաղ գլուխ : իմ դտաւ ճաղատ, եւ ոչ կուրծքս իմ այս այնքան հանգարտիկ՝ որպէս տեսանեսդ այսօր : Մի՛ ինչ երկմբտեր ընդ փորձ անձին իմոյ . եթէ մարդոյ հնար ինչ էր՝ անյողգողդ ՚ի յօժարութիւնս իւր կալով բաւել զզացման իմիք անդուլ անդադար նորոգելում, ան-

չուշտ միայնութիւն եւ սէր հաւասար իսկ Աստուծոյ առնէին զնա , զի այսոքիկ են եւ եթ կրկին բերկրանք յաւերժականք Եին Քերագունի : Այլ հոգի մարդոյ խոնջեալ պարտասէ , եւ ոչ երբէք սիրէ նա ընդ երկար զնոյն եւ մի բան՝ յորդորմամբ սիրոյ Են են հանապաղ կէտք ինչ պայմանի՝ յոր սիրտք երկու ոչ հալին առ իրեարոս , եւ այնոքիկ իսկ են որ կարեն ընդ երկար ծանրատաղտուկ գործել զկեանս : »

« Հակիրճ ասել՝ սիրեցեալդ իմ դուստր , յանուրջըս բարեբաստութեան՝ անիրաւութիւն մեծ է մարդկան 'ի մոռացօնս արկանել զզուգակից ընդ բնութեան իւրեանց զտկարութիւն մահու . հարկ է հանել 'ի յանդ : Վաղ կամ անագան՝ որպիսի ինչ եւ լինէր երանութիւն քոյին , դէմք քո գեղեցիկ փոխելոց էր ասպաքէն յայն կերպարան նմանատիպ՝ զոր գերեզման ընծայէ որդւոցն Ադամայ . աչք իսկ Շագգասայ չկարէին ճանաչել զքեզ 'ի մէջ քերց քոց 'ի շիրմի : Ոչ բնաւ սէր ունի իշխել 'ի վերայ որդանց դագաղին : Այլ զի՞նչ խօսիմ , — ո՞վ ունայնութիւն ունայնութեանց — առ ի՞նչ բարբառիմ զգօրութենէ երկնաւոր բարեկամութեանց : Կամիցի՞ս , դուստր իմ , 'ի միտ առնուլ զսահման նոցին : Եթէ այր ոք դարձցի անդրէն 'ի լոյս յետ ամաց ինչ մահուան իւրոյ , կասկածեմ թէ գուցէ ոչ ինդութեամբ հանդիպեսցեն 'ի նա աչք այնոցիկ , որ վասն յիշատակի նորա հեղին արտօսը բազում , զի այսքան վաղ ընդ այլս յօրինեն մարդիկ ընտանութիւնս , ա՛յսքան հեշտեաւ կրթին 'ի յայլ սովորոյթս , ա՛յսքան յողորմութիւն բարուց ընդաքոյս է մարդոյ , այսքան

դուզնաքեայ իմն են կեանք մեր՝ մինչեւ ՚ի սիրտս  
իսկ բարեկամաց մերոց : »

« Գոհացիր ապա զաստուածախնամ բարութե-  
նէն , դուստր իմ սիրեցեալ , որ կանուխ ՚ի բաց  
հանէ արդ զքեզ ՚ի հովտէս վշտաց , արդէն իսկ  
ընդ ամպս պատրաստի քեզ պատմութեան սպիտակ  
եւ լուսեղէն պսակ կուսանաց . արդէն իսկ լսեմ  
զձայն Կլխոյին զուարթնոց՝ որ գոչէ առ քեզ :  
Արի եկ , արժանաւոր աղախինդ իմ , եկ , աղաւ-  
նի իմ , եկ բազմել ՚ի գահ համեստութեան ՚ի  
մէջ բոլորից դասերացս այսոցիկ՝ որ զգեզ իւրեանց  
եւ զտիս մատազ նուիրեցին ՚ի սպասաւորութիւն ազ-  
գի մարդկան , ՚ի դաստիարակութիւն մանկտւոյ եւ  
՚ի գլուխս վաստակոց ապաշխարութեան : Արի ե՛կ  
վարդ խորհրդաւոր , հանգչել ՚ի գիրկս Յիսուսի : Դա-  
գաղքս այսոքիկ՝ զոր ընտրեցեր քեզ յանկողին հար-  
սանեկան , ոչ երբէք պատրեսցին եւ ոչ բնաւ լիցի  
վախճան գրկախառնութեանց քոց ընդ երկնաւոր  
Փեսայինս : »

Զոր օրինակ յետին ճառագայթ տունջեան դա-  
դարեցուցանէ զհոգմս եւ ծաւալէ ընդ երկինս ան-  
գորրութիւն , այնպէս հանդարտիկ բանք ձերունւոյն  
խաղաղեցին զկիրս ՚ի սիրտ սիրեցելոյս : Ա յնուհե-  
տեւ ընդ վիշտս իմ միայն հոգայր նա եւ ՚ի հնարս  
տալոյ հանդուրժել ինձ ընդ կորուստ իւր : Մերթ-  
ասէր ցիս թէ մեռանէր բարեբաստիկ եթէ խոստա-  
նայի նմա սրբել զարտասուս իմ , մերթ խօսէր ինձ  
զմօրէ իմմէ եւ զհայրենեաց իմոց , եւ զուն գործէր  
՚ի բաց դարձուցանել զմիտս յառաջիկայից իմոց ան-

տի ցաւոց , զարթուցանելով յիս զյիշատակ վշտաց  
անցելոց : Յորդորէր զիս երկայնամիտ գոլ եւ առա-  
քինի , եւ ասէր . « Ոչ ի սպառ երբէք լիցիս եղկելի ,  
եթէ այսօր փորձեն զքեզ երկինք , գիտասջիր զի  
այնու առաւել կարեկկից ընդ աղէտս այլոց պատրաս-  
տեն զքեզ : Զի սիրտ , ո՛վ Շագդաս , հանգոյն է ծա-  
ռոց ոմանց՝ որ զասլրասամս իւրեանց վասն վիրաց  
մարդկան ոչ իւրք ունին ընծայել , բայց միայն պա-  
տառմամբ յերկաթոյ : »

Զայս իբրեւ խօսեցաւ՝ դարձաւ առ քարողոզն՝  
եւ ՚ի նմանէ ակն ունէր սփոփանացն՝ զոր ազգեալն  
էր յիս , եւ մերթ մխիթարիչ՝ մերթ սփոփեալ , տայր  
եւ առնոյր զբարբառ կենաց յանկողնին մահու : Այլ  
անապատականն յաւելոյր յեռանդն : Ոսկերք նորա  
ծերացեալք կենդանանային յաշխոյժ մարդասիրու-  
թեան . պատրաստէր միշտ դեզորայս , լուցանէր  
զհուր , նորոգ յարդարէր զմահիճան , եւ բարբառէր  
բանս հիանալիս զԱստուծոյ եւ զերանութենէ՝ ար-  
դարոց : Զահ կրօնից ՚ի ձեռին՝ գողցես իմն յառաջ  
քան զԱդալա ընթանայր ՚ի գերեզման՝ առ ՚ի ցուցա-  
նել նմա զսքանչելահրաշ գաղտնիս նորին : Քարայրն  
այն ցածուն լի եղեւ վեհութեամբ քրիստոնէական  
մահու , եւ անշուշտ ոգիք երկնաւորք մտազիր կա-  
յին ՚ի զնին տեսեանս այսորիկ՝ ուր կրօնք միայնակ  
մարտ ելեալ կռուէին ընդդէմ սիրոյ , պատանեկան  
տիոց եւ մահու :

Ուր ուրեմն յաղթանակեաց կրօնքն այն աս-  
տուածուսոյց , եւ յաղթութիւն նորին ակներեւ  
գայր ՚ի յայտ սրբազան իմն թախծութեամբ՝ որ

փոխանակէր 'ի սիրտս մեր զնախկին յոյզս կրից : Ի մէջ  
գիշերի՝ թուէր Աշալա ոգեւորել զարձեալ առ 'ի  
յեղյեղել զազօթան՝ զոր կրօնաւորն մրմնջէր առ ե-  
ղերւ անկողնոյն : Սուղ ինչ ապա ձգեաց առ իս ըզ  
ձեռն իւր եւ 'ի ձայն հազիւ լսելի , ասէ ցիս . « Որ-  
դիդ Ուղալիսեայ , յիշե՞ս զգիշերն զառաջին՝ յորում  
կարծեցեր տեսանել յիս զԿոյան յետնոց տարփանաց :  
Գուչակ նորանշան մերումս ճակատագրի : » Գաղա-  
րեաց նա 'ի բանիցն եւ ասա անդրէն խօսել կալաւ  
եւ ասէ . « Մինչ յուշ ածեմ թէ մնայ ինձ արդ թո-  
ղուլ լքանել զքեզ 'ի յաւիտեան , սիրտ իմ այնպիսի  
գործէ ճիգն առ 'ի կեալ , զի զգամ յանձին կալ մնալ  
անմահ՝ զօրութեամբ սիրոյ իմոյ : Այլ , ո՛վ Տէր , ե-  
ղիցին կամք քո » Լռեաց Աշալա վայրկեանս ինչ ,  
եւ ասա յաւել . « Արդ չմնայ ինձ այլ ինչ բայց  
միայն խնդրել 'ի քէն թողութիւն վասն չարեացն՝  
զոր հասուցի քեզ : Կարի իսկ նեղեալ տանջեցի ըզ-  
քեզ գոռոզութեամբ եւ անձնահաճոյ կամօք իմովք :  
Ո՛վ Շագդաս , խու՛ն մի հող արկեալ զղիակամբ իմով  
զաշխարհ մի ողջոյն ընդ իս եւ ընդ քեզ զիցէ անջըր-  
պետ , եւ փրկեսցէ զքեզ 'ի սպառ 'ի ծանրութենէ  
եղկութեանց իմոց : »

Պատասխանի ետու արտասուայեց աչօք եւ ա-  
սեմ . « Ներե՛լ քեզ , ո՞չ ասաքէն ես իսկ եղէ առիթ  
վշտաց քոց . » — Այլ նորա ընդմիջեալ զբանս իմ ասէ .  
« Սիրեցեալդ իմ , դու յոյժ բարեբաստ կացուցեր  
զիս եւ եթէ մարթէր ինձ դառնալ այսրէն 'ի  
կեանս , նախամեծար առնէի դեռ եւս զերջանկութիւն  
սիրելոյ զքեզ վայրկեանս ինչ 'ի չարաբախտ ասք .

սորանս քան 'ի հայրենիս ձգել զկեանս յանդորրու : »

Աստանօր նուազեցաւ ձայն Ադալայ , ստուերք մահու իջեալ տարածանին շուրջ զաչօք նորա եւ զշըրթամբք , մատամբքն այսր անդր ձգելովք խնդրէր հպել յինն , եւ խօտակից լինէր 'ի մրմուռնջ ընդ աներեւոյթ ոգիս : Այլ անդէն բուռն անձին արարեալ՝ փորձ փորձեաց խլել 'ի սարանոցէն զփոքրիկ նշան խաչին , այլ 'ի զո՞ւր , եւ ապա ազաչեաց զիս լուծանել զայն խմով ձեռամբ , եւ ասէ ցիս .

« Զանաջինն 'ի խօսել իմում ընդ քեզ՝ տեսեր դու զխաչս զայս ընդ կուրծս իմ՝ նշողեալ 'ի լոյս հրոյ , այս իսկ է միայն մեծութիւն Ադալայ 'ի վերայ երկրի : Լոքէզ հայր քո եւ իմս , մայր յետ ոչ բազում աւուրց ծննդեան իմոյ յղեաց զայս առ իմ : Անկալ ապա յինէն զժառանգութիւնս զայս , եղբայր իմ , եւ կալջիր զայս առ քեզ 'ի յիշատակ օղետից իմոց : Ապաւինեսցես դու յԱստուածն եղկելեաց՝ ի վիշտս կենցաղոյդ : Ով Շադդաս , աղերս ինչ յետին ունիմ առ քեզ հեզուլ : Սիրեցեալդ իմ , սուղ եւ համառօտ եղեւ կցորդութիւն մեր 'ի վերայ երկրի , այլ յետ աստի կենացս միայ մեզ կենցաղ երկարատեւ : Ո՛հ , քանիօ՞ն դժնդակ լինէր ինձ մեկնել 'ի քէն 'ի սպառ : Արդ միայն յառաջ քան զքեզ կանխեմ այսօր , եւ սպասեցից քեզ յերկնաւոր պետութեան անդ : Եթէ սիրեցեր զիս , կրթեսջիր զանձն քո յուսումն քրիստոնէականին կրօնից՝ որ հանդերձեսցէ զմութիւն մեր : Մեծ իմն սքանչելիս գործեն առաջի աչաց քոց կրօնքն այն , զի բաւական կացուցանէ զիս թողուլ զքեզ առանց մեռանելոյ 'ի տան-

ջանս յուսահատութեան : Այլ , Շագդաս , խոստումն  
ինչ պարզ խնդրեմ եւ եթ 'ի քէն , թէպէտ գիտեմ իսկ  
քաջ թէ քանի ծանրակշիռ թուեսցի քեզ տալ երդումն :  
Գուցէ ուխտն այն զրկեսցէ զքեզ 'ի կնոջէ ումեքէ՝  
որ քան զիս իցէ բարեբաստագոյն . . . : Ո՛վ մայր  
իմ , ներեա դստեր քուս : Ո՛վ կոյս , արգել զցա-  
սումն քո : Ահա դարձեալ անկանիմ 'ի տկարութիւ-  
նըս իմ , եւ գողանամ 'ի քէն՝ Աստուած իմ , խոր-  
հուրդս՝ զոր զքէն միայն պարտ էր ինձ յածել ըզ-  
մտաւ : »


Խոց կարեւիւր 'ի ցաւոց՝ բան ետու Ադալայ յա-  
ւուր միում ընդունել զկրօնս քրիստոնէականս : Ի տես-  
լեանս յայսմի՛կ միայնակեացն յարուցեալ յոսն եկաց  
'ի կերսլարանս աստուածադէցիկի , եւ բազկատարած  
'ի վեր 'ի կամար քարայրին՝ գոչեաց եւ ասէ . « Ժա՛մ  
է արդ , ժա՛մ է արդ կոչել այսր զԱստուած » : Եւ  
զոյգ ընդ բանից նորա՝ զօրութիւն գեր 'ի վերոյ քան  
զբնութիւն մարդկեղէն բռնադատեաց զիս անկանել  
ի գուճս եւ խոնարհեցոյց զգլուխ իմ առ ոտս մահճացն  
Ադալայ : Բանայ քահանայն տեղի ինչ զանխուլ՝ ու-  
րանօր պահեալ կայր սափօր մի ոսկեղէն ծածկեալ 'ի  
քօղ մետաքսեայ , եւ անկեալ 'ի վերայ երեսաց իւրոց  
երկիր պագանէ հիացմամբ մեծաւ : Եւ ահա քարայրն  
յեղակարծ երեւեցաւ լուսաւոր , լսելի եղին ընդ օդս  
բարբառք զուարթնոց եւ զողդոջուն ձայնք երկնա-  
ւոր տաւղաց . եւ իբրեւ միայնակեացն եհան արտա-  
քըս զսրբազան անօթն 'ի խորհրդանոցէն , թուեսցաւ  
ինձ զԱստուած ինքնին տեսանել ելեալ 'ի կողաց լե-  
րինն :

Երաց քահանայն զբերան բաժակին , եւ կալաւ ի մէջ երկուց մատանց իւրոց նշխար ինչ սպիտակ քան զծիւն , եւ մատեաւ առ Աղալայ մրմնջելով բանըս խորհրդաւորս իսկ սրբունին ակնկառոյց յերկինս՝ կայր 'ի հիացման : Գողցես իմն վախճան լինէր համօրէն վշտաց նորա . ամենայն զօրութիւն կենաց նորա ժողովեցաւ 'ի բերան նորա . շրթունքն կիսաբացք մեծարանօք խնդրէին զԱստուածն ծածկեալ ընդ խորհրդական հացիւն : Յետոյ ապա ծերունին աստուածարեալ թանայ դոյզն ինչ բամբակ յիւղն նուիրական , եւ օծէ նովաւ զքունս Աղալայ , հայի առ վայր մի յաղջիկն մեռեալ , եւ յեղակարծ այս բանք ուժգնահնչիւնք զերծան ի շրթանց նորա . « Ե՛րթ , ոգի՛դ քրիստոնեայ , ե՛րթ միանալ ընդ Հաստչիդ : » Յայնժամ 'ի վեր ամբառնալով զգլուխ իմ՝ երկրապիշ , եւ հայեցեալ յանօթն՝ յորում կայր իւղն սրբալոյս , գոչեցի եւ ասեմ . « Հայր իմ , դեղս այս դարմանոյ շնորհեսցէ՞ արդեօք Աղալայ զկեանս իւր : » Եւ ծերունին գիրկս զինեւ արկեալ՝ ասէ . « Այո , որդեակ իմ , բզկեանսն յաւիտենականս » : Աղալա զբաւեալ էր 'ի կենաց :

Յայսմ վայրի 'ի նուագ երկրորդ 'ի սկզբանէ հետէ վիպացն՝ հարկեցաւ Շագդաս հատանել զթել քանից իւրոց : Ողո՞ղէին զնա արտասուք , եւ բարբառ հատկեալ ելանէր 'ի բերանոյ նորա : Սաքեմն կոյր երաց զկուրծս իւր , եհան անտի զխաչն Աղալայ , եւ ձայն բարձեալ ասէ .

Ահա , առհաւատչեայս եղկութեանց : Ո՞վ Ռընէ , որդեակ իմ , դու տեսանես իսկ դայն , այլ

ես ոչ եւս կարեմ տեսանել զայն : Ասա՛ ինձ , զի  
յետ այնքանեաց ամաց չե՞ւ եւս է շացեալ ոս-  
կին մաքուր , եւ ո՞չ տեսանես 'ի նմա զհետս ար-  
տասուաց իմոց : Կարիցե՞ս արդեօք ճանաչել զտե-  
ղին՝ յոր սրբուհւոյ ուրումն հպեցան շրթունք :  
Զիա՞րդ տակաւին չիցէ Շագգաս քրիստոնեայ : Որ-  
պիսի՞ պատճառք սնոտիք քաղաքականութեան եւ  
հայրենեաց արգելեալ կալան զնա ցարդ 'ի սխալանս  
նախնեաց իւրոց : Ո՛չ, ոչ եւս կամիմ յամել ընդ երկար :  
Գոչէ առ իս երկիր . Ե՞րբ ապա իջցես դու ի գերեզ-  
ման , եւ ի՞մ իմիք ակն ունիս առ 'ի գիրկս արկանել  
աստուածային կրօնիցս . . . : Ո՞վ երկիր , ոչ ընդ եր-  
կար մնասցես դու ինձ , յորժամ քահանայ ոմն ման-  
կացուսցէ յալիս զգլուխ իմ զայս ալեւորեալ ի վըշ-  
տաց , յոյս 'ի մտի ունիմ միաւորել անդրէն ընդ Ադա-  
լայ . . . : Այլ արդ յառաջ ածեալ կատարեսցուք  
զմնացուած պատմութեան վիսպայս :



## ՏՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹՒԻՒՆ

Ոչ երբէք բուռն հարից , ո՛վ Ռընէ , նկարագրել քեզ այսօր զյուսահատ վարանսն՝ յոր անկայ խորասոյզ՝ 'ի տալն Ադալայ զշունչ իւր յետին : Առաւելագոյն աշխուժից պէտք էին ինձ՝ որ պակասեն արդ յինէն . հարկ էր աչացս փակելոց բանիլ այսրէն յարեգակն , առ 'ի գտանել զհամար արտասոււացն՝ զոր հեղին 'ի տեսիլ լուսոյ նորա : Այո՛ ամենեւին . լուսինս այս՝ որ արդ նշողէ զգլխովք մերովք՝ տաղտկասցի սփռել զճաճանչս իւր յամայութիւնս Գենդուկիայ . եւ գետս՝ որ վարէ արդ զնաւ մեր՝ ոտնակառեսցի յիւրոցն ընթացից , մինչչեւ կասեալ արտասոււաց իմոց 'ի հոսելոյ վասն Ադալայ : Զաւուրս երկուանզգալի իսկ զգայարանաց իմոց եղեն բանք միայնակեցին : Այրն այն գերազանցիկ՝ գուն գործելով ամօքել զվիշտս իմ , ոչ երբէք 'ի սնոտի պատճառաց երկրի բանս 'ի ճահ առնոյր , այլ միայն շատ համարէր ասել արդեօք . « Որդեակ իմ , այս իսկ են կամք Աստուծոյ . » եւ գիրկս արկեալ փարէր զինեւ : Զըլինէր ինձ հաւատալ երբէք՝ թէ այնքանիք գտանէին սփոփանք 'ի դուզնաքեայ խօսս երկիւղած քրիստոնէի ուրուք , եթէ չէր իմ ինձէն առեալ զփորձ :

Խաղաղատանք , շնորհք եւ անայլայլակ երկայն-

մըտութիւնն ալեւոր ծառային Աստուծոյ յաղթահարեցին ուր ուրեմն զյամառ պնդութիւնն վշտացս : Զամօթի հարայ ընդ արտասուան՝ զորս ետու նմա հեղուլ , եւ ասեմ . « Հայր իմ , առաւելազանց իմն է այս , ո՛հ , մի՛ կիրք պատանւոյս վրդովեսցեն զխաղաղութիւն կենաց քոց : Թո՛ղ ինձ տանել ընդ իս ըզնչխարս հարսին իմոյ , թաղեցից զայնոսիկ յանկեան ուրեք յանապատին , եւ եթէ դեռ եւս դատապարտեալ եմ 'ի կեանս , ջանացայց արժանաւոր կացուցանել զանձն յաւերժական հարսանեացն՝ զոր խոստացաւ ինձ Ադալա » :

Յանակնկալ 'ի դարձ արիութեան իմոյ՝ Հայրն բարեւաւ բերկրեցաւ յանձն իւր , եւ ասէ . « Ո՛վ արիւն Քրիստոսի , արիւն Տեառն Աստուծոյ իմոյ , ճանաչեմ զարդիւնս քո , փրկեսցես դու անշուշտ զպատանիս զայս : Աստուած իմ , կատարեա՛ զվաստակ քոյին . շնորհեա՛ զխաղաղութիւն քո աղմկելոյ այսրմ՝ հոգւոյ , եւ յաղետից նորա ո՛չ այլ ինչ թողջիւր ի նմա բայց զցածուն եւ զչայեկան յիշատակս » :

Արդարն ժխտեաց յանձն առնել ինձ զմարմին դստերն Լորեզայ , այլ առաջի արար ինձ տալ կոչել առ ինքն զնորահաւատս իւր , առ 'ի թաղել զնա համօրէն պերճութեամբ քրիստոնէականին : Յայնժամ եւ ես զդէմ կալայ խորհրդոց իւրոց եւ ասեմ ցնա . « Աղէտք եւ առաքինութիւնք Ադալայ 'ի մարդկանէ եղեն անծանօթք , թո՛ղ , զի եւ գերեզման նորին՝ փորեալ զաղտագողի ձեռօք մերովք , մոռացութեանն այնմիկ լիցի մասնմուտ » : Միաբանեցաք մեկնել 'ի վաղիւանդր , 'ի ծագել արեւաւ առ 'ի տալ հոգոյ զմարմին

Աղալայ ընդ կամարաւ կամբջին 'ի բնէ արկելոյ 'ի մուտս Պուրակաց մահու : Այլ եւ խորհուրդ արաւրաք անցուցանել զգիշերն յաղօթս՝ առ մարմնով սըրբուհւոյն :

Ընդ երեկս փոխադրեցաք զսպտուական նշխարս սըն 'ի ծերսլ ինչ քարայրին՝ որ հայէր 'ի հիւսիս կոյս : Անապատականին սլատեալ էր զայնսօրիկ 'ի կտաւ ինչ եւրոպական , հիւսեալ 'ի ձեռն մօր իւրոյ , զի այն եւ եթ մնայր նմա մեծութիւն 'ի հայրենեացն , եւ զոր յընդերկար ժամանակաց սահմանեալ էր նորա շիրմին իւրոյ : Տարածեալ կայր Աղալա 'ի դալարուոջ ուրեք զգայածաղկանց լերին . ոտք նորա եւ գլուխ եւ ուսք եւ մասն ինչ ծոցոյն էին հողանիք : Ի մէջ վարսից նորա էր տեսանել ծաղիկ մի մակնուլիոյ թարշամեալ , եւ էր այն՝ զոր եղեալ էր իմ 'ի վերայ անկողնոյ կուսին՝ առնել զնա բազմածնունդ : Երթունք նորա՝ իբր զկոկոն վարզի քաղեալ յերկուց առաւօտուց հետէ՝ թուէին թալանալ եւ ժպտիլ : Ի սպիտակափայլ այտս նորա երեւէին երակք ինչ կապուտակք : Աչք իւր գեղանիք էին փակեալ 'ի լոյս , ոտք պարկեշտօրէն զուգեալք 'ի մի , եւ ձեռք իւր կըծեայք սեղմէին առ սրտիւն զնշան խաչին եբնեայ , եւ ուսանոցակ ուխտին զսարանոցաւն էր արկեալ : Երեւէր նա կախարդեալ 'ի հրեշտակէն թախծութեան եւ 'ի կրկին քնոյ անմեղութեան եւ շիրմի . բա՛րէ , չէ իմ տեսեալ երբէք այսպիսի ինչ երկնային : Ով ոք եւ անգիտանայր զի դեղածաղիկն այն դուստր վայելեաց երբեմն 'ի լոյս կենաց՝ համարէր զնա անդրի կուսուհեան 'ի քուն եղիւոյ :

Ոչ դադարեաց կրօնաւորն յաղօթից զգիշերն 'ի բուն , եւ ես բազմեալ էի անշըշունջ առ անարիւք եղերական մահճացն իմոյս Ազալայ : Քանի՛ցս երբեմն մինչդեռ կայր նա 'ի քուն , 'ի վերայ ծնգաց իմոց կրեալ էր իմ զգլուխն այն վայելչագեղ , քանի՛ցս հեղեալ էր իմ զանձն զնովաւ առ 'ի լսել եւ յառնուլ զչունչ նորին : Այլ յայնժամ եւ ոչ ձայն ինչ ելանէր յանշարժ ծոցոյն , եւ ընդ վա՛յր մնայի արթնութեան գեղոյ :

Աստոյց մեզ լուսին զլոյս իւր աղօտաջահ յեղեւրական հսկմանն այնմիկ՝ ծագելով զհասարակ գիշերաւ , հանգոյն սպիտակագեղ ետայ կուսի՝ որ գայ արտասուել զդագաղօքն ընկերուհւոյն : Տակաւ ծաւալեալ սիռեաց ընդ անտառակս զմեծն այն գաղտնիս թախծութեան սիրոյ՝ զոր ցանկալի է նմա պատմել վաղեմի կաղնեաց եւ հինաւուրց ծովափանց : Մերթ ընդ մերթ կրօնաւորն մխրճէր 'ի ջուր անդր նուիրական ճիւղ մի ծաղկաւէտ , եւ ապա թօթափեալ զոստն խոնաւուտ՝ խնկէր զգիշերն 'ի հոտ անուշից երկնի , եւ մերթ յեղյեղէր հինաւուրց իմն յեղանակաւ զտաղս ինչ վաղեմոյ ուրուք քերթողի՝ որ կոչէր Յոր եւ ասէր .

« Իբրեւ զծաղիկ անցի , եւ իբրեւ զխոտ դաշտաց ցամաքեցայ :

Իսկ ընդէ՞ր տուեալ իցէ անձանց դառնացելոց լոյս , եւ կեանս ցաւազնելոց ողւովք » :

Զայս օրինակ երգէր ալեւորն 'ի մարդկանէ : Զայն նորա ստուար եւ խուն ինչ դաշնակաւոր՝ թաւալէր 'ի լուութեան անապատացն : Անուն

Աստուծոյ եւ գերեզմանի լսելի լինէր 'ի համօրէն ար-  
ձագանգաց, 'ի բնաւից հեղեղաց եւ յամենայն ան-  
տառաց : Մնջիւնք վիրգիներան աղաւնուոյ, անկումն  
հեղեղի ջուրց 'ի լերին անդ, գանգիւնք զանգական՝  
որ զուղեւորս կոչէր, այս ամենայն խառնէին յերգ-  
սըն եղերականս, եւ գողցես լու լինէր 'ի Պուրական  
մահու հեռաստանեայ պար մեռելոց՝ որ առնէր պա-  
տասխանի ձայնի միայնակեցին :

Այլ յայնժամ գիծ իմն ոսկեղէն կազմեցաւ յարե-  
ւելս կոյս : Կռիչս 'ի ժայռից արձակէին բազէք, եւ  
կզաքիսք մտանէին 'ի փապարս կնձնեաց, այս նշա-  
նակ էր ազդեցութեան յուղարկաւորացն Ադալայ :  
Բարձի 'ի վերայ ուսոց իմոց զմարմին նորա, եւ միայ-  
նակեացն բահ 'ի ձեռին գնայր առաջի իմ : Սկսաք  
իջանել ժայռից 'ի ժայռս, ծերութիւն եւ մահ միան-  
գամայն յամրընթաց զքայլս ոտից մերոց գործէին :  
Ի տեսիլ շանն՝ որ եգիտն զմեզ յանտառին, եւ որ  
այժմ կայտուելով 'ի խինդ՝ ա՛յլ իմն բանայր մեզ ուղի,  
հարայ յարտասուս : Յաճախ երկայնահեր վարսք Ա-  
դալայ՝ խաղալիկք քաղցրասիք հողմոց այգուն՝ տա-  
րածանէին յաչս իմ զոսկեղինիկ զքօղ իւրեանց, յա-  
ճախ ընդ բեռամբն յերկիր հակամէտ՝ հարկէի դնել  
դնա 'ի գետին 'ի վերայ մամռոյ եւ բազմեալ առ  
ընթեր նորա՝ առնուլ անդրէն ոգի : Ուր ուրեմն հա-  
սաք 'ի նշանակեալ վայրն յիմոցս աղետից, եւ իջաք  
'ի ներքոյ կամարաց կամրջին : Որդեա՛կ իմ, արժա՛ն  
խսկ էր տեսանել երխտասարդ զոմն վայրենի եւ ծեր  
զօք միայնակեաց 'ի ծունր անկեալս դէմ՝ յանդիման  
միմեանց, պեղելով ձեռօք իւրեանց զգերեզման դըս-

տեր ուրումն չարարաստի՛ ոյր դիակն անդանօր կայր  
տարածեալ 'ի խոռոչս ուղիսից ցամաքելոց :

Ի վախճան գործոյս , փոխեցաք զգեղեցիկն այն  
'ի կաւեղէն մահիճս իւր : Եղո՛ւկ , յուսացեալ էր իմ  
ա՛յլ իմն յարդարել նմա անկողին : Յայնժամ խուռն  
ինչ հող ստեալ 'ի ձեռս իմ եւ կացեալ յահաւոր լը-  
ռութեան , 'ի յետին նուագ յառեցի զաչս իմ յերեսս  
Ադալայ : Ապա ցանեցի զհող քնոյն 'ի վերայ ճակա-  
տուն ութնեւտասն դարնայնոյ , եւ տեսի զի անե-  
րեւութանային տակաւ կերսլարանք քեռն իմոյ , եւ  
չնորհք նորա ծածկէին ընդ վարագուրաւ յաւիտենա-  
կանութեան . լանջ նորա քան զհողն սեաւ եկաց առ  
վայր մի բարձրացեալ , որպէս շուշան սպիտակ որ  
ամբառնայ 'ի միջոյ թխատեսակ կաւոյ . աղաղակեցի  
յայնժամ եւ ասեմ . « Տե՛ս , ո՛վ Լորէզ , զորդի քո որ  
թաղէ զդուտոր քոյին » : Եւ բովանդակ ծածկեցի  
զմարմին Ադալայ 'ի հող քնոյ :

Գարձաք անդրէն 'ի քարայր անդր , եւ յայտնե-  
ցի միայնակեցին զխորհուրդ մտացս՝ կալ մնալ առ  
նմա : Իսկ սուրբն՝ որ հիւանալի իմն պայմանաւ ճա-  
նաչէր զսիրտ մարդոյ , դիտաց զմիտս իմ եւ զխորա-  
մանկ խաբէութիւն վշտաց իմոց , եւ ասէ ցիս .  
« Շագդաս , որդիդ Ուգալիսեայ , մինչդեռ 'ի կեն-  
ցաղումս էր Ադալա , ես իսկ ինքնին խնդրեցի 'ի  
քէն բնակել առ իս , այլ արդ փոխեցաւ բախտ քո ,  
եւ հարկ է քեզ անդրէն դառնալ 'ի հայրենիս : Յուշ  
լիցի քեզ , որդեակ իմ , զի վիշաք չեն ինչ յաւերժա-  
կանք . պարտ է նոցին դադարել վաղ կամ անազան  
գի սիրտ մարդկեղէն վակի յանձուկ 'ի սահման . եւ

'ի մեծամեծ աղետից մերոց մին է եւ այն զի չլինիմք բաւական առ 'ի կեալ ընդ երկար շարաքաստիկ : Գարձի՛ր 'ի Միսիսիբի , ե'րթ սիոփել զմայր քոյին՝ որ ողբայն գրեզ հանապազօր եւ քումիչ օղնականու- թեան գտանի կարօտ : Ուսո՛ զանձն 'ի կրօնս Ադա- լայ՝ եթէ հանդիպեսցէ քեզ առիթ սլատեհ , եւ ան զմտաւ զի խոստացար նմա լինել առաքինի ոք եւ քրիստոնեայ : Իսկ ես հսկեցից աստանօր զշիրմաւ նորին : Մեկնեա՛ց , որդեակ իմ , Աստուած եւ ոգի քեռ քոյին եւ սիրտ ալեւոր մտերմիչ եկեսցեն ըզ հետ քո » :

Այսօրիկ եղեն բանք առնն քարաժայռի՝ որոյ մեծ էր իշխանութիւն իւր եւ խորին իմաստութիւն նորա , եւ չէր մարթ ընդդէմ կալ նմա : Ի վաղիւ ան- դրր թողի զասպնջականն իմ պատկառելի՝ որ ողջա- գուրեալ զիս առ սրտիւն , ետ ինձ զվերջին սլատուէ- րըս իւր , զվերջինն զօրհնութիւն եւ զարտասուս իւր վերջին : Անցեալ կացի առ գերեզմանաւն , եւ յասուշ հարայ գտանելով անդանօր խաչ մի փոքրիկ՝ որ կանգ- նեալ կայր 'ի վերայ մեռելոյն , որպէս դեռ եւս նըշ- մարէ ոք 'ի հեռուստ զկայմ նաւու յալեաց բեկեղոյ : Աստի՛ 'ի միտ առնուի զի միայնակեացն եկեալ էր գիշերի աղօթել առ նովաւ , եւ նշանակս այս մտերմութեան եւ կրօնից ետ ինձ յորդահոս հեղուլ արտասուս : Փորձեցայ բանալ անդրէն զփոսն եւ միւսանգամ տե- սանել զցանկալին իմ , այլ սոսկումն բարեպաշտիկ արգել զիս : Բազմեցայ 'ի վերայ հողոյն դեռ եւս խարխարելոյ , արմուկն յեց 'ի ծունկս եւ զգլուխ առեալ յաջումս , խորասուզեալ կայի 'ի դառնաղէտ

ցնորս երազոց : Ո՛վ Ռընէ , անդ յայնժամ եղեւ ինձ  
զառաջինն խորհել լըջաբար զունայնութենէ կենաց  
մերոց եւ խորհրդոց : Ե՛հէ՛ , որդեակ իմ , ո՞յր ուրուք  
չիցէ յաճեալ 'ի մտածութիւնս յայստօիկ : Եւ արդ  
եղջերու մի եւ մ ես ծեր սպիտակացեալ 'ի ձմերանց ,  
ամք իմ զանցանեն արդեօք քան զորւոյն : Բայց թէ-  
սլէտ աւուրք բազմայուովք կուտին զգլխովս , եւ  
յոյժ ընդ երկար եղեւ փորձ կենցաղոյս , այլ ոչ եր-  
բէք պատահեցի ումեք՝ որոյ չիցէ պատրեալ երա-  
զովք երանութեան , եւ սրտի՛ որ չտածիցէ յինքեան  
խոց իմն զանխուլ : Սիրտ արտաքուստ պայծառա-  
զոյն՝ նման է ինքնաբոզիս ջրհորոյ մարդագեանոյն  
Ալաքիւայ , մկանունք նորին թէպէտ անդորր երեւին  
եւ ականակիտ , այլ եթէ հայեսցիս 'ի խորսն՝ տեսցես  
անդանօր տիտեռն մեծամարմին՝ զոր սնուցանէ ջրը-  
հորն 'ի ջուրս անդ :

Այսպէս տեսեալ զելս եւ զմուտս արեղական  
'ի տեղւոջս ցաւոց , 'ի վաղիւ անդր յառաջին կռիչ  
տառեղան՝ պատրաստեցայ թողուլ լքանել զչիրիմն  
նուիրական : Մեկնեցայ անտի 'ի բաց իրրեւ 'ի սահ-  
մանէ իմեքէ՝ ուստի կամք էին ինձ սլանալ յասպա-  
րէզ առաքինութեան : Երիցս կարգացի զհողին Ադա-  
լայ , երիցս ոգի անսպատին դարձոյց պատասխանի  
ձայնի իմում ընդ եղերական կամարաւն :

Ապա ողջոյն ետու արեւելից , եւ նշմարեցի 'ի  
հեռուստ յարահետս լերինն զմխայնակեացն՝ որ գնայր  
'ի հիւզ եղկելույ ուրուք : Մունր եղեալ եւ գիրկս  
սերտիւ արկեալ փոսոյն՝ գոչեցի եւ ասեմ . « Հանդիր  
'ի խաղաղութեան յօտարօտի երկրիս , դուստր յոյժ

չարաբաստիկ : Ի վարձ սիրոյ քո , աքսորանաց քոց  
եւ մահուդ , այսպէս կաս լքեալ՝ 'ի Շաղհասայ խակ  
գլխովին . » Յայնժամ հեղեօլ վտակս արտասուաց ,  
մեկնեցայ յաղջկանէն Լորեղայ . յայնժամ զերծուցի  
զանձն 'ի վայրաց անտի առ ոտիւք յիշատակարանին  
բնութեան թողեալ ա'յլ իմն յիշատակարան առաւել  
զերապանձ՝ զցածուն շիրիմն առաքինութեան :



## ՎԵՐՋԱԲԱՆ

Շագդաս՝ որդին Ուղալիսեայ Նաչեզի՝ պատմեաց զվէպս զայս առ Եւրոպացին Ռընէ ։ Բազում անգամ հարք վիպեցին զայն որդւոց իւրեանց , իսկ ես ուղեւոր յաշխարհս հեռաատանեայս՝ ՚ի ներքս աստ ածի ճշգրտիւ որ ինչ եւ ուսայ ՚ի հնդկաց անտի ։ Ի վէպս յայտասիկ տեսի զպատկեր որսորդ եւ երկրագործ ժողովրդոց , զկրօնս՝ զառաջին օրէնսդիրն ազգի մարդկան , զվտանգս տգիտութեան եւ զբարեպաշտիկ խանգից՝ ներհակակիրս ընդդէմ լուսոյ սիրոյ եւ ճշմարիտ ոգւոյ Աւետարանի , զմարտս կրից եւ առաքինութեանց ՚ի սիրտ անկեղծ , եւ հակիրճ ասել՝ զյաղթանակ քրիստոնէութեան ՚ի վերայ ուժգնագունի զգացման եւ զարհուրելի արհաւրաց , զՍէր եւ զՄահ ։

Ի պատմել ինձ Սիւրնուլայ ուրումն զվէպս զայս՝ կարի հրահանգիչ գտի զայն եւ գեղեցիկ յոյժ , զի յեռոյր ՚ի նմա զծաղիկ անապատին , զչնորհս խրճթին , եւ պարզութիւն իմն ՚ի խօսս անդ վշտացն , եւ ես չիշխեմ պարծել թէ պահեցի զայն ամենայն ՚ի բանս իմ ։ Սակայն մի ինչ եւեթ մնայր ինձ գիտել . հարցանէի թէ զի՞ եղեալ էր Հօրն Ոսրեայ , եւ ոչ ոք կայր էր զրոյց ինչ տալ զնմանէ ։ Իսպառ այնուհետեւ

անգիտանալ լինէր ինձ այն, եթէ Վերնախնամ Տես-  
չութիւն՝ որ առաջնորդէ ամենայնի՝ չածէր ինձ 'ի  
յայտ զոր եսն խնդրէի: Եւ ահա այսպէս եղեւ իրացն  
պատահումն:

Շուրջ եկեալ էր իմ զծովեզերքք Միսիսիբեայ՝  
որ յօրինէին երբեմն զհարաւայինն պատուար Նորոյն-  
Քալիոյ, եւ հետաքնին լինէի տեսանել 'ի հիւսիսա-  
կողմն կոյս զայլ հրաշակերտ պետութեանս այսորիկ,  
զջրվէժն ասեմ Նիակարայ: Մերձ առ սահմանն էի  
հասեալ՝ 'ի վաղնջական երկրին Երոզացւոց, եւ ահա  
'ի միում առաւօտու անցեալ ընդ դաշտ ուրեք՝ նշմա-  
րեցի կին մի քազմեալ ընդ ծառով եւ ունէր 'ի գիրկս  
իւր մանուկ մի մեռեալ: Յուշիկ եւ յամրաքայլ մատ-  
եայ առ մայրն մատաղատի, եւ լուայ զի ասէր.

« Սիրեցեալ որդեակ, թէ էիր արդ ի միջի մե-  
րում, քանի՞ շնորհօք լարէին ձեռք քո զաղեղն:  
Բազուկ քո նուաճէր զարջն կատաղի, եւ արշաւա-  
նօք քովք խափան լինէիր ընթացից այծեման 'ի դա-  
գաթան լերին: Սպիտակ աքիսդ ժայռից, զիւրդ  
վաղվազեցեր յաշխարհն հոգւոց 'ի բում յայդմ հասա-  
կի: Ձի՞նչ գործեսցես դու անդ առ 'ի շահել զկեանս  
քո: Հայր քո չէ անդանօր զի պատրաստեսցէ քեզ  
կերակուր յորսոց իւրոց: Տանջեսցիս 'ի ցրտոյ, եւ ոչ  
ոք յՈգւոց տացէ քեզ մաշկեակս առ 'ի ծածկոյթ: Ո՛հ,  
սարս է ինձ փութալ ուրեմն զկնի քո, եւ ընդ քեզ  
լեալ կենակից՝ նուագել քեզ ցուցս երգոց, եւ մա-  
տուցանել քեզ զստինս իմ: »

Եւ մայրն նորատի յեղանակէր 'ի ձայն դողդո-  
տատանէր զմանուկն 'ի վերայ ծնգաց իւրոց,

Թանայր զչրթունս նորա կաթամբն մայրենի, եւ շր-  
ոայլեալ տայր մահու զայն ամենայն խնամս՝ զոր  
պարտ խիկ էր առնել կենաց :

Կինս այս ըստ հնդիկ սովորութեան կամէր ցա-  
մաքեցուցանել զմարմին որդւոյն յոստս ծառոյ, զի  
սպա տարցէ զնա 'ի գերեզման հարց իւրոց : Յայն-  
ժամ մերկացոյց զնորածինն եւ վայրկեանս ինչ 'ի  
չունչ տուրեւառիկ կախեալ զբերանոյ նորին, ասէ.  
« Հոգեակ որդեկիս, հոգիդ սիրունակ, հայր քո 'ի  
լոյս ած զքեզ երբեմն միով եւ եթ համբուրիւ 'ի շրթ-  
թանց իմոց, այլ աւանդ, չեմ ես արդ բաւական ի-  
մովքս միւսանգամ տալ քեզ ծնունդ : » Ապա հոլան-  
եալ զկուրծան՝ ընկալաւ ի գիրկս իւր զցրտասառոյց  
նշխարս մարմնոյն, որ վերկենցաղէին արդեօք 'ի հուր  
մայրենի սիրոյն՝ եթէ Աստուծոյ չէր իւր պահեալ ըզ  
չունչ կենսատու :

Յարեաւ եւ շուրջ ածէր զաչս իւր 'ի խնդիր ծա-  
ռոյ՝ յոյր 'ի վերայ ոստոց մարթէր նմա հանգուցանել  
զորդին իւր : Ընտրեաց հացի մի կարմրածաղիկ՝ պը-  
սակեալ 'ի դրասանգս խնձորակաց, եւ բուրէր նա 'ի  
հոտ անուշից : Միով ձեռամբ խոնարհեալ զվայրա-  
հակ կողերս ծառոյն՝ միւսոյն զետեղեաց անդ զմար-  
մին որդւոյն : Ապա եթող զուղէչն՝ որ դարձաւ անդ-  
րէն յիւրն 'ի կայս՝ ընդ իւր տանելով զկապուտն անմե-  
ղութեան՝ ծածկեալ 'ի մէջ անուշահոտ սաղարթուց :  
Ո՛հ, քանի՛ օն գորովայոյզ է սովորոյթս այս հնդկական :  
Տեսի եւ զձեզ՝ յաւերս դաշտաց ձերոց՝ ո՛վ գեղա-  
շուք յիշատակարանք Կրասոսից եւ Անտարուց, բայց  
զեռ եւս զեր 'ի վերոյ քան զձեզ համարիմ զօղակա-

ռոյց դերեզմանս շինականաց , զդամբարանսն ծաղկեայս եւ դալարաւէտս՝ զոր խնկէ մեղու , զոր շարժէ զեփիւռ, եւ յորս դնէ զբոյն իւր սոխակ եղերերգեալ 'ի նուագս կեղերջականս : Եթէ իցէ կապուտն այն դստեր ուրումն անտիականի՝ զոր ձեռն տարփաւորի ուրուք կախեաց զծառոյն մահու , կամ թէ իցեն նշխարք մանկան սիրեցելոյ՝ զոր զետեղեաց մայր 'ի բոյնս ձագուց թռչնոց՝ եւ եւս յաճախեն հրապոյրք : Ապա մատեայ առ նա՝ որ հեծէր առ ոտամբ հացւոյն , եւ եղի զձեռս իմ 'ի վերայ դլխոյ նորա՝ արձակելով երիցս ճիչ ցաւոց : Յետոյ՝ առանց խօսելոյ ինչ ընդ նմա , առեալ հանգոյն նմին ոստ մի ծառոյ՝ 'ի բաց վանէի զձանձս որ բղղային շուրջ զմարմնով մանկանն . այլ զգոյշ լինէի մի արկանել ահ յաղաւնին՝ որ մերձ կայր անդ : Խօսէր ընդ նմա հնդկուհին եւ ասէր . « Ո՛վ աղաւնի , եթէ չես ոգի մանկան իմոյ որ արդ եւս թռեաւ յինէն , անշուշտ մայր ոմն ես դու որ խնդրես ինչ առ 'ի դնել զբոյն քո : Ա՛ռ ուրեմն 'ի վարսից աստի իմոց՝ զորս ոչ եւս լուացայց 'ի ջուր եսկինայ , ան եւ տար զայսոսիկ , զի ձագուց քոց պատրաստեսցես վայր հանգստեան , յանկա՛րժ Ոգին Մեծ շնորհէր քեզ զնոսա : »

Սակայն մայրն արտասուէր՝ առ խնդին տեսանելով զքաղցրութիւն բարուց օտարականի ուրումն : Մինչդեռ պարապէաք մեք յայս , երիտասարդ ոմն մատեաւ եւ ասէ . « Գուտոր Գելուդայ , 'ի բաց առ զմանուկդ մեր , ոչ եւս ընդերկար բնակեսցուք մեք աստ , եւ անկցուք յուրի 'ի ծագել արեւու : » Յայնժամ ասեմ շնա : « Եղբայր , մազ-

Թեմ քեզ երկին կապուտակ , բազում այծեմունս , վերարկ կղբենի եւ յոյս ընդ նոսին : Չե՞ս դու ուրեմն 'ի բնակչաց անապատիս : » Պատասխանի ետ եւրիտասարդն եւ ասէ . « Ո՛չ , աքսորականք եմք ումանք , եւ չըջիմք 'ի խնդիր հայրենեաց : » Եւ զայս ասացեալ պատերազմողն արկ 'ի խոնարհ զգլուխ իւր զկրծովքն , եւ ծայրիւ աղեղանն հարկանէր զգիտակս ծաղկանց : Տեսի զի էին արտասուք 'ի խորս վիսւացն եւ լուռ եւ եթ կացի : Իսկ կնոջն իջուցեալ յոստոց ծառոյն զմանուկն՝ ետ զնա առն իւրում առ 'ի տանել : Յայնժամ ասեմ ցնոսա . « Կամի՞ք թողուլ ինձ լուցանել ձեզ հուր զայս գիշեր : » Ի վերայ էած մարտիկն եւ ասէ . « Չիք մեր բնաւին հիւղ , եթէ կամիս դալ զհետ մեր , բնակիմք յեզր անդ սահանացն : » Պատասխանի ետու եւ ասեմ . « Յանկալի է ինձ այդ » . եւ մեկնեցաք 'ի միասին :

Սուղ ինչ ապա հասաք յեզր քարավաղին որոյ լսելի լինէր խոխոջ ահարկու մռնչմամբք , եւ է այն կազմեալ 'ի գետոյն Նիակարայ , որ բղխէ յԵրիէ լճոյ եւ թափի 'ի լիճն Ոնդարիոյ , եւ բարձրութիւն նորա ուղղաձիգ հարիւր քառասուն եւ չորս ոտնաչափ : յԵրիէ լճոյ մինչեւ ցահանան՝ ընթանայ գետն ընդ զառ 'ի թափ գահալէժ , եւ 'ի թափելն զծովու առաւել բերէ նմանութիւն քան զգետոյ , որոյ հեղեղք խուժեալ մտանեն 'ի լայնաբաց բերան անդնդոյ , Ջրվէժն բաժանեալ յերկուս ստեղունս՝ կորանայ 'ի ձեւ ձիապայտի : Ընդ մէջ կրկին հոսանացն կարկառի կղզի ինչ խորափոր , որ համօրէն ծառովքն կախի ըզ վիւնն ալեաց : Առաջն մի գետոյն՝ որ 'ի հարաւ կոյս

ընթանայ արշաւաստոյր՝ յօրինի 'ի ձեւ թողորակ իբրեւ  
զգլան մեծատարած, ապա եւ տիռեալ ծաւալի հան-  
դոյն ձիւնեղէն ծածկութի եւ յամենազան երանգս  
ընդդէմ արեւու փայլեալ շողայ, իսկ միւս առաջն որ  
ընդ արեւելս կոյս սահեալ իջանէ 'ի խաւար զարհուրե-  
լի թուի սին իմն յալեաց ջրհեղեղի : Ծիածանք յօգնա-  
հոյք կորանան եւ հատանեն զիրեարս 'ի ձեւ խաչի  
'ի վերայ անդնդոցն : Աոծեալ զժայռն տապալ՝  
ցայտէ ջուրն 'ի մրրիկ փրփրոյ, որ ամբառնայ 'ի վեր  
քան զանտառս իբրեւ զծուխ լայնածաւալ հրդեհի :  
Շոճք եւ վայրի ընկուզենիք եւ քարաժայռք հատ-  
եալք 'ի ձեւ ուրուականաց՝ գեղազարդեն զվայր տե-  
սարանիս : Արծուիք ձգեալք իմն 'ի յորձանաց օդոց,  
'ի հիւ եկեալ իջանեն 'ի յատակս վհին, եւ գորշուկք  
ամերիկեանք ճապուկ տտամբք իւրեանց կախին ըզ  
խոնարհեալ կողերց ծառոյ, յափշտակել 'ի խորս անդ  
զկոշկոծեալ դիակունս եղջերուաց եւ արջուց :

Մինչդեռ արհաւրախառն հրճուանօք 'ի զնին կա-  
ջի տեսեանս այսմիկ, թողին զիս հնդկուհին եւ ա-  
մուսին նորա : Ի խնդիր եղէ նոցին ելեալ 'ի վեր քան  
զսահանս գետոյն, եւ գտի զնոսա անդէն 'ի տեղւոջ  
ուրեք՝ որ ճահաւոր իմն երեւէր թախծութեան  
սգոյ նոցա : Ընկողմանեալ էին 'ի վերայ խոտոց ընդ  
ծերունիս ոմանս, առ ոսկերօք մարդկան ամփոփե-  
լովք 'ի մաչկս կենդանեաց : Յապուշ կրթեալ ընդ ա-  
մենայն զոր եւ տեսանէի 'ի ժամուց ինչ հետէ, բազ-  
մեցայ առ մատաղատի մարբն, եւ ասեմ ցնա . « Քոյր  
իմ, զի՞նչ են այս ամենայն, » Նա սլատասխանի ետ  
ինձ եւ ասէ . « Եղբայր իմ, այս երկիր է հայրենեաց,

այսոքիկ ածիւնք են նախնեաց մերոց, որ զան զհետ  
մեր յաքսորանս : » Յայնժամ գոչեցի եւ ասեմ . « Եւ  
զիա՞րդ, յայդ սլիսի՛ ուրեմն թշուառութիւն կաս  
մասնեալ . » Ի վերայ էած գուստրն Գելուդայ եւ  
ասէ . « Մնացորդք եմք մեք Նաշեզաց : Յետ արիւ-  
նահեղ կոտորածոց՝ զոր գործեցին Գալլիացիք ընդ  
աշխարհ մեր ՚ի վրէժ եղբարց իւրեանց, որք միան-  
գամ յեղբարց մերոց ճողոպրեալ զերծան ՚ի ձեռաց  
յաղթողացն՝ գաին սպաստանարան առ Շիքասացիս՝  
որ դրացիք են մեր : Անդ ընտկեցաք ընդ երկար յան-  
գորրու, այլ են լուսինք եօթնեակք յորմէհեաէ տի-  
րեցին երկրի մերուս սպլտակք Վիրգիւնիոյ, ասելով  
եթէ յարքայէ ումեմնէ Եւրոպայ պարգեւեցաւ նոցա  
այն : Յայնժամ ամբարձեալ զաչս մեր ՚ի վեր յերկինս  
եւ բարձեալ զնշխարս նախնեաց մերոց՝ յուղի ան-  
կաք ընդ անապատն : Զճանապարհայն երկունք կա-  
լան զիս եւ ծնայ, եւ զի առ վշտին իմոյ չէր կաթն  
իմ աղնիւ, մահառիթ եղեւ որդւոյ իմում : » Եւ զայս  
ասացեալ՝ հերօք իւրովք ջնջեաց կինն այն զարտօսր  
աչաց իւրոց : Եւ ես լայի ընդ նմա :

Այլ ապա ասեմցնա . « Գոյր իմ, երկիր պագցուք  
Մեծի Ոգւոյն . ՚ի հրամանաց նորահասանէ մեզ ամենայն  
Ամենեքին ուղեւորք եմք մեք, որպէս եւ եղեն հարքն  
մեր, այլ գուցէ տեղի ինչ ուրանօր հանգիցուք : Եթէ  
չէր ինձ երկիւղ՝ ունել լեզու թեթեւախօս հանգոյն  
սողտակաց, խնդրէի ՚ի քէն թէ է՞ր քո լուեալ զհամ-  
բաւ Շաղգասայ Նաշեղի . » Զոյգ ընդ բանիցս՝ հա-  
յեցաւ յիս հնդկուհին եւ ասէ . « Ո՞ այն ոք էր որ  
զՇաղգասայ խօսեցաւ առ քեզ . » Պատասխանի

ետու եւ ասեմ : « Իմաստութիւնն . » Կրկնեալ անդ-  
րէն հնդկուհւոյն ասէ . « Ասացից քեզ զոր գիտեմս ,  
զի վանեցեր դու զճանճս 'ի գիականէ որդեկիս , եւ  
զՄեծէ Ողւոյն զեղեցիկս բարբառեցար : Գուսար  
եմ ես դասեր եւրոպացւոյն Ռընէլ' զոր Շաղգտայ  
յորդեղիրս իւր ընկալեալ էր զնա : Շաղգտա՝ որ ե-  
ղեւ մկրտեալ , եւ Ռընէ հաւն իմ չարաբաստիկ կոր-  
եան 'ի նախճիրս կոտորածոյն : Իսկ ես խոնարհեալ  
պատասխանի ետու եւ ասեմ . « Ցաւոց 'ի ցաւս ան-  
կանի մարդ հանապազ , Կարիցե՞ս ուրեմն եւ զհօ-  
րէն Ոպրեայ տալ ինձ զրոյցս : » Եւ ասէ հնդկուհին .  
« Ոչ իսկ քան զՇագղաս գտաւ նա երջանիկ , զի Քե-  
րողուացիք՝ թշնամիք Գալլիացւոց՝ խուժեցին 'ի վե-  
րայ քարոզատեղւոյն 'ի գանդիւն պղնձոյն առաջ-  
նորդեալ անդր՝ որ հնչէր յօգնութիւն ուղեւորաց :  
Հայրն Ոպրի կարէր փրկել զանձն , այլ ոչ կամե-  
ցաւ թողուլ լքանել զորդիս իւր , եւ եկաց մնաց  
անդ՝ օրինակաւ իւրով խրախուսել զնոսա 'ի մահ :  
Անհնարին խոշտանգանօք մատնեցաւ յայրումն , եւ ոչ  
կարացին հանել ճիչ 'ի բերանոյ նորա , որ դառնայր  
յամօթ Աստուծոյ իւրոյ կամ 'ի նախատինս հայրեն-  
եաց իւրոյ : Ի տանջանս պատուհասին ոչ դադարէր  
յաղօթից վասն դահճացն , եւ 'ի կարեկցութե-  
նէ ընդ պայման զոհեկոցն : Քերողուացիք առ 'ի  
գողանալոյ 'ի նմանէ նշան ինչ տկարութեան , ածին  
առ ոտս նորա զմի 'ի քրիստոնեայ վայրենեաց անտի,  
զորոյ անողորմ հատեալ էին զանդամս մարմնոյ նորա :  
Այլ յապուշ հարան յոյժ սեռանելով զի պատանին  
այն փարեալ զծնոք ալեւորեալ միայնակեցին համ-

բուրէր զվէրս այնորիկ՝ որ ազազակէր առ նա եւ ա-  
սէր • «Որդեակ իմ, առաջի հրեշտակաց եւ մարդկան  
կամք ի տեսիլ •» իսկ հնդիկքն մոլեգնեալք 'ի վայ-  
րոյթ՝ երկաթ ատրաշէկ մխեցին 'ի կոկորդ նորա ար-  
գելուէ զբարբառն, եւ նա յայնժամ ոչ եւս կարաց-  
եալ մխիթարել զմարդիկն եհան զոգի •»

«Ասնն զի Քերոզուացիք, թէ՛ օլէտեւ սովորեալք  
ամենեւին առանց կարեկցութեան տեսանել զտանջա-  
նքս վայրենեաց՝ ոչ կարացին սակայն շխտատվանե-  
կթէ՛ ի պածուն արիութեան անդ հորն Ոպրեայ էր ինչ  
ամնձանօթ նոցին եւ դեր ի վերոյ քան զամենայն նա-  
հատակութիւնս երկրի : Բազումք ի նոցանէ՝ խանդա-  
ղատեալ ընդ մահ այսպիսի, դարձան 'ի հաւատս քը-  
րիստոնէութեան :»

«Յետ ամաց ինչ՝ մինչդեռ դառնայր Շաղգաս  
յերկրէն սպիտակաց՝ զդաստ լեալ չուառութեանց  
պետին աղօթից, յարեաւ դնաց անդր առ 'ի ժողո-  
վել զաճիւն նորա եւ զԱդալայն : Նհաս 'ի տեղին ու-  
րանօր կառուցեալ էր Քարոզատեղին, այլ հաղիւ կա-  
րաց ճանաչել զայն : Յորդեալ էր լիճն, եւ մարգա-  
ղետինն փոխեալ կայր 'ի ճահիճս, կամուրջն 'ի բնէ-  
արկեալ՝ կտրձան յերկիր՝ ընդ փլատակօք իւրովք  
թաղեալ էր զշիրիմն Ադալայ եւ զՊուրակս մահու :  
Շաղգաս զվայրօջս յածեալ ընդ երկար, յայց եւ տ-  
պա 'ի քարայրն Միայնակեցին, եւ եղիտ դիտ ծած-  
կեալ 'ի տատասիս եւ 'ի մօրենիս, եւ դեզն մի 'ի նմա  
զի գիեցուցանէր զձագ իւր : Բազմեցաւ 'ի վերայ  
վիմին հսկման մահու, ուր ոչ այլ ինչ կտես՝ բայց  
միայն փետուրս ինչ թօթափեալս 'ի թեւոց տարազեաց

հաւուց : Եւ մինչդեռ լայր նա անդ , ահա ընտանի  
օձն Քարողչին ելեալ արտաքս 'ի մերձակայ մացա-  
ռացն՝ եւ եկեալ գալարէր առ ոտիւք նորա : Զե-  
սոյց Շագդաս զքարեկամն հաւատարիմ 'ի գիրկս  
իւր , որ միայն մնացեալն էր յաւերակսն յայնո-  
սիկ : Պատմեաց որդին Ուղալիսեայ զի յաճախ 'ի  
գալ գիշերոյ՝ թուեցեալ էր նմա տեսանել զստուե-  
րըս Աղալայ եւ զՀօրն Ուլրեայ վերըմբերձիկս 'ի գո-  
լորչւոյ վերջալուսոյն : Տեսիլքս այսոքիկ բարեպաշ-  
տիկ արհաւրօք եւ տխուր խնդութեամբ լցին զնա : »

«Յես ընդվայր շրջելոյ 'ի դիւտ շիրմի բեռ իւրոյ  
եւ անապատականին , փոքր մի եւս եւ մեկնէր 'ի  
բաց 'ի վայրաց անտի , այլ ահա եղնն քարայրին ըս-  
կըսաւ խայտալ ընդ առաջ նորա , եւ ապա զկայ էառ  
առ ոտամբ խաչի Քարողատեղւոյն : Խաչն յայնժամ կի-  
սով չափ շրջապատեալ 'ի ջուրց , եւ փայտ նորին կըրծ-  
եալ էր 'ի մամռոց , եւ հաւալսան անապատին սիրե-  
լի էր գաղարիլ 'ի յորդնահար բազուկս նորա : Ի միտ  
էահ Շագդաս զի եղն այն շնորհապարտ առաջնորդ-  
եալ էր նմա 'ի գերեզման ասայնջականին իւրոյ : Փո-  
եալ զստորոտովք ժայռին՝ որ երբեմն էր սեղան  
եւ անդ եգիտ զնշխարս առն միոյ եւ կնոջ : Ոչ երկ-  
մըտեաց ընաւ զի էին այնոքիկ ոսկերք քահանային  
եւ կուսին , զորս թերեւս հրեշտակաց թաղեալ էր  
անդ ընդ հօղով : Ամփոփեաց զայնոսիկ յարջենիս եւ  
յուզի անկաւ դառնալ յաշխարհ իւր , բարձեալ զիւ-  
րեւ զթանկագին նշխարսն՝ որ իբրեւ զկապարձս  
մահու շառաչէին զուսովք նորա : Գիշերի զնէր զայ-  
նըս ընդ գլխով իւրով , եւ յերազէր յանուրջս սիրոյ

եւ առաքինութեան : Ո՛վ օտարական , կարես դու տեսանել աստ զփոշին զայն ընդ Շագհասայն իսկ զլիսովին : »

Իբրեւ Վախճան արար բանիցն հնդկուհին , յօան կացի . եւ մերձեցեալ յածիւնսն նուիրականս՝ երկիր պագի լռութեամբ առաջի նոցին : Եւ ապա մեծաքայլ հեռացեալ 'ի բաց՝ դոչեցի եւ ասեմ . « Ա՛յսպէս անցանէ յերկրի ամենայն որ միանգամ եղեւ բարի , առաքինի եւ զգայուն : Ո՛վ մարդ , երա՛զ իմն ես դու վազանցիկ , անո՛ւրջք ցաւալից , թշուառութեամբ կեաս եւ եթ , ո՛հ , դու չես ինչ այլով իւրիք բայց միայն տրտմութեամբ հողւոյդ եւ մշանջենաւոր թախճութեամբ խորհրդոցդ : »

Զգիշերն 'ի բուն յայտոսիկ մտածութիւնս խորասուզեալ կայի : Ի վաղիւ անդր՝ 'ի ծագել այգուն՝ ապանջականք իմ թողին զիս : Պատերազմողքն երիտասարդք գնային զառաջեաւ եւ զինի նոցա հարսունք մատաղք . նոքա բարձեալ տանէին զսրբազան մասունսն , եւ սոքա 'ի գիրկս իւրեանց բերէին ըզնորածին որդիս իւրեանց : Մերունիք ընդ մէջ ամբոխին գնային յամրընթաց , զետեղեալք ընդ նախահարս իւրեանց եւ ընդ թոռունս , ընդ յիշատակս եւ ընդ յոյս , ընդ կորուսեալ հայրենիս եւ ընդ սպառնին Ո՛հ , քանիօ՛ն արտասուք իջանեն յաչաց , յորժամ թողու ոք այսպէս զերկիրն հայրենի , յորժամ 'ի բարձուէ բլրոյն աքտորանաց՝ 'ի վերջին նուազ՝ նշմարէ ոք զյարկն ուրանօր էառ զսնունդ կենաց , եւ զգետըն հիւղակին , որ տխրագին սահեալ գնայ անդադար ընդ մենաւոր զաչտս հայրենեաց :

Չարաբա՛ստ հնգիկք՝ զորս տեսի թափառական  
յածեալ ընդ անապատս Նորոյ-Աշխարհին հանդերձ  
ածիւնովք նախնեացն ձերոց, զուք որ շնորհեցիք  
ինձ ասպնջականութիւն՝ թէպէտ զուով եղկելիք,  
սակայն ոչ կարացից այսօր փոխանակաւ տալ ձեզ  
դայն, զի եւ ես իբրեւ զձեզ թափառեալ չրջիմ խա-  
ղալիկ լեալ մարդկան, եւ նուազ քան զձեզ գտա-  
նիմ բարեբաստ յաքսորանս իմ, չունելով տարեալ  
ընդ իս զոսկերոտի հարց իմոց :

ՎԱԽՃՅՆ

## ԿԱՐԵԻՈՐ

Էջ	Տող	Վրկապսիք	Ուղղելիք
9	13	աստուած	աստուածն
24	11	դու . . . կայիր	դուք . . . կայիք
27	29	ձեպեցուցից աս- տէն . . .	Ո՛հ, ձեպեցայց նախ քան . . .
28	26	Ո՛հ, թոյլ տուք ինձ ձեպել . . .	Թոյլ տուք ձե- պել ինձ քան . . .
31	9	նոճեաց	շոճեաց
32	29	ժողովոցն	ժողովոյն
36	4	հանդէս	հանդէսք
42	19	հանասլաղ	յայնժամ
43	17	հասեալ	պահեալ
45	14	ցօղնոյ	ձողոյ
47	11	մատուցի	մածուցի
54	3	դիպեցի այդ	դիպի
68	13	Լսէ	լսէր
82	12	անաչառ	անսպառ
90	21	երկնաւոր	երկրաւոր
94	13-14	մայր . . . առ իմ	. . . առ մայր իմ







2728

2729

2730

2731

2732

2013

